

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒԻՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀՆԳՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**



ԵՐԵՎԱՆ • 2011

Երաշխավորված է տպագրության
Երևանի պետական համալսարանի
սփյուռքագիտության ամբիոնի կողմից

ՉՏԴ 809.198.1:801.4
ԳՄԴ 81.23
Ա791

Խմբագիրներ՝ բանաս. գիտ. դոկտոր, պրոֆ. **Սերգեյ Գալստյան** (Երևան)
Կարո Առաքելյան (Բեյրութ)
Գրախոս՝ քաղաքագիտ. դոկտոր **Անդրանիկ Տազեսյան** (Բեյրութ)

Ավետիսյան Յուրի Սրապիոնի
Ա791 **ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱ-
ՔԱՆՈՒԹՅՈՒՆ** / Յու. Ավետիսյան: Խմբ.՝ Ս. Գալստյան.– Եր.: Զանգակ–97,
2011.– 104 էջ:

Ուսումնասիրությունը նվիրված է գրական հայերենի երկու ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական համակարգերի համեմատական քննությանը: Ներառում է ձայնավորների և բաղաձայնների գրությունն ու արտասանությունը, ձայնավորների և երկբարբառների կրած փոփոխությունները, օտար լեզուների ազդեցությամբ պայմանավորված հնչյունական առանձնահատկությունները, հնչյունափոխական այլևայլ իրողություններ: Դրանք տրվում են արևելահայերենի նույն իրողությունների զուգադրությամբ:

Նախատեսված է բուհերի բանասիրության ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, հայերենի ուսուցիչների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են արևմտահայերենով:

ՉՏԴ 809.198.1:801.4
ԳՄԴ 81.23

ISBN 978–99941–1–926–4

© Ավետիսյան Յու. Ա., 2011
© «Զանգակ–97», 2011

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Արևմտահայերենը և արևելահայերենը, լինելով գրական մեկ լեզվի տարբերակներ կամ ճյուղեր, համակարգային տարբերություններ չեն դրսևորում լեզվական մակարդակներում: Լեզվի հնչյունային կազմը, ձայնավոր և բաղաձայն հնչյունների համակարգը, բառապաշարը, քերականական կառուցվածքը իրենց ընդհանուր հատկանիշներով համընկնում են: Գործ ունենք մեկ ընդհանուր լեզվական համակարգի հետ: Դրանք մեկ ազգային լեզվի երկու դրսևորումներ են, որոնք երկուսն էլ ունեն գրական լեզվի գործառույթներ: Տարբերակներ են, որովհետև լեզվական նույն մակարդակներում՝ հնչյունաբանություն, բառային կազմ, քերականություն, երևան են հանում որոշակի տարբերություններ: Այդ տարբերությունները հիմնականում պայմանավորված են երեք գործոններով՝ բարբառային տարբեր հիմքերի առկայություն, գերակա լեզվի ազդեցություններ, հայերենի զարգացման գրային շրջանի նախորդ փուլերի՝ գրաբարի և միջին հայերենի նկատմամբ դրսևորված տարբերակված վերաբերմունք: Արևմտահայերենը ձևավորվեց հիմնականում Պոլսի բարբառի հիմքի վրա, մշակման ընթացքում որոշ չափով կրեց ֆրանսերենի, քիչ չափով՝ այլ լեզուների ազդեցությունը, հնչյունական համակարգով և քերականությամբ եղավ միջին հայերենի ժառանգորդը: Արևելահայերենը ձևավորվեց Արարատյան կամ Երևանի բարբառի հիմքի վրա, մշակման ընթացքում նկատելի չափով կրեց ռուսերենի ազդեցությունը, հնչյունական համակարգով, մասամբ քերականական իրողություններով մոտ մնաց գրաբարին:

Արևելահայերենի և արևմտահայերենի տարբերությունները հիմնականում վկայվում են հնչյունային կազմում և ձևաբանական մակարդակում: Բառապաշարային տարբերությունները, ըստ նորագույն տվյալների, մոտ 14–16 տոկոս են: Այսինքն՝ մոտ 16 հազար բառ երկու տարբերակներում ունեն ձևային, իմաստային կամ ձևաիմաստային գոնե մեկ տարբերություն: Բառային կազմի տարբերությունների և յուրահատկությունների

րի մասին բավարար չափով խոսվել է: Քերականական իրողությունների համեմատական քննության փորձեր արվել են: Հնչյունային կազմի յուրահատկությունները նույնպես ժամանակ առ ժամանակ դարձել են քննարկումների առարկա¹: Առանձին աշխատանք է գրվել արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունների վերաբերյալ²: Արևմտահայերենի բուհական դասագրքում և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկություններին նվիրված աշխատություններում որոշակի հետևողականությամբ ներկայացվում են արևմտահայերենի՝ արևելահայերենից ունեցած հնչյունական տարբերությունները: Բնորոշ օրինակներով անդրադարձ է կատարվում նաև արևմտահայերենի հնչյունափոխական յուրահատկություններին³: Սակայն արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական համակարգերի ամբողջական զուգադրական նկարագրությունը տակավին բավարար չափով չի տրվել:

Այս աշխատանքը փորձ է ներկայացնելու երկու գրականների հնչյունական առանձնահատկությունների զուգադրական կամ համեմատական պատկերը, որ ներառելու է ձայնավորների և բաղաձայնների գրությունը և արտասանությունը, ձայնավորների և երկբարբառների կրած փոփոխությունները, օտար լեզուների ազդեցությամբ պայմանավորված հնչյունական առանձնահատկությունները, հնչյունափոխական այլևայլ իրողություններ⁴: Դրանք տրվում են արևելահայերենի նույն իրողությունների զուգադրությամբ:

- 1 Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1–6, Երևան, 1952–1971, **Ա. Սարգսյան**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, **Ռ. Սաքապետոյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, **Յու. Ավետիսյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007 և այլն:
- 2 Տե՛ս **Ա. Դուկասյան**, Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները, Երևան, 1990:
- 3 Տե՛ս **Ռ. Սաքապետոյան**, նշված աշխատությունները:
- 4 Լեզվական նյութը ընտրելիս օգտվել ենք հնչյան Հայաստանում և Սփյուռքում հրատարակված հանրահայտ բառարաններից, այնպես էլ բնագրային աղբյուրներից՝ գետեղված հեղինակների առանձին գրքերում կամ տարաբնույթ ժողովածուներում ու ձեռնարկներում՝ «Արդի հայ գրականութիւն», կազմ.՝ **Յ. Օշական**, Երուսաղեմ, 1966, **Յ. Քիրքճեան**, Հայ կեանք եւ գրականութիւն, Ա, Բ, Գ, Աբճք, 2004–2007, **Կ. Առաքելեան**,

1. ՀՆՉՅՈՒՆ ԵՎ ՏԱՌ: ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ: ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հնչյունները՝ որպես լեզվի նյութական նվազագույն միավորներ, երկու գրականներում էլ հնքնին նշանակություն չունեն, սակայն ծառայում են որպես միջոց իմաստակիր միավորներ կազմելու համար: Տառերը հնչյունների պայմանական գրային նշաններն են գրավոր խոսքում: Հայերեն այբուբենի յուրաքանչյուր տառ երկու գրականներում էլ նշանակում է մեկ հնչյուն, և յուրաքանչյուր հնչյուն արտահայտվում է մեկ տառով: Սակայն մի քանի հնչյունների և տառերի դեպքում և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում այդ համապատասխանությունը խախտվում է, օրինակ՝ **որդի–[վօրթի], երես–[յէրէս]** և այլն:

Հայերենի այբուբենը արևմտահայերենում և արևելահայերենում ունի երկու հիմնական տարբերություն: Արևմտահայերենում **ու**–ն տեղ չի գրավում այբուբենում՝ որպես առանձին տառ: Այն թեև մեկ հնչյունի գրային նշան է, բայց գրվում է երկու տառով՝ **ո + լ**, ուստի և արևելահայերենի **ու** տառի տեղը արևմտահայերենում զբաղեցնում է **ւ** (վյուն) տառը: Արևելահայերենի **և** տառը արևմտահայերենում սովորաբար արտահայտվում է տառակապակցությամբ՝ **ե + լ**, սակայն դրանք նույնն են արտասանությամբ. արևելահայերենում **և** տառը բառամիջում կամ բառավերջում հնչում է որպես **էվ՝ բարևել–[բարեվէլ], նաև–[նայէվ]** կամ **[նա՛էվ]**. արևմտահայերենում գրության և արտասանության անհամապատասխանություն ըստ էության չի առաջանում, ինչպես՝ **բարեւել–[բարեւէլ], արեւ–[արէւ], նաեւ–[նայէւ]** կամ **[նա՛էւ]**:

Այս տարբերությունը պայմանավորված է Խորհրդային Հայաստանում 1922 թ. կատարված ուղղագրական փոփոխությամբ, որով, ի թիվս այլ փոփոխությունների, վերացվեց նաև **ւ** գիրը՝ որպես առանձին տառ:

Արդի հայերենի քերականություն, Գիրք 1, 2, 3, Պեյրուբ, 1998, **3. Չուլաքեան**, Հայերենի անանդական ուղղագրություն, Հալեպ, 2000 և այլն:

Արևմտահայերենը պահպանեց գրաբարի կամ ավանդական ուղղագրությունը: Արևելահայերենը ընդունեց նորը՝ մասնակի փոփոխություններով (1940–ին):

Օգտագործելով նույն այբուբենը՝ արևմտահայերենը և արևելահայերենը երևան են հանում ուղղագրական զգալի տարբերություններ, որոնք հետևանք են ուղղագրական փոփոխության: Ուղղագրական այդ տարբերությունները ամփոփվում են հիմնականում մի քանի կետերում:

1.1. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ձայնի և աղմուկի հարաբերության՝ և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում հնչյունները երկու կարգի են՝ **ձայնավոր և բաղաձայն**: Ձայնավոր հնչյունները վեցն են՝ **ա, է(ե), ը, ի, օ(ո), ու**: Արևմտահայերենում ձայնավոր հնչյունի արժեք ունի նաև **իւ** տառակապակցությունը (ֆրանսերեն՝ **ս**):

Ե – Է

Բառասկզբում **է** հնչյունը գրվում է **է** տառով, օրինակ՝ **էջ, էջմիածին, էրեբունի, էակ, է, էի, էիր, էր, էինք, էիք, էին, էջանիշ, էութիւն**⁵: Այս ընդհանուր կանոնից երկու գրականներում էլ շեղվում են օժանդակ բայի ներկայի ձևերը, որոնցում արտասանվող **է**–ն գրվում է **ե** տառով՝ բացառությամբ եզակի երրորդ դեմքի, արևմտահայերենում նաև հոգնակի երկրորդ դեմքի՝ արևել.՝ **են, ես, է, ենք, եք, են**, արևմտ.՝ **են, ես, է, ենք, էք, են**:

Է–ով սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ, ինչպես՝ **ամենաէական, անէանալ, ելեւէջ, վայրէջք, մանրէաբան, ինչեւէ, ուրեւէ, աէկ, չէինք, կ'էջադրեմ**:

5 Ներկայացվող բուն կանոնին չվերաբերող ուղղագրական տարբերությունների դեպքում օրինակները տրվելու են ըստ արևմտահայերենի:

Բառասկզբում **յէ** արտասանվելիս գրվում է **ե**, օրինակ՝ **ելք, ելլել, եկեղեցի, ենթակայ, եռեակ, երեխայ, երթալ, երեւան, եւրոպա**: Բարբառային արտասանությամբ՝ **ե** ձայնավորը բառասկզբում հնչում է է՝ **եղանակ-էղանագ, երկիր-էրգիր, երանի-էրնէգ, եպիսկոպոս-էբիսկաբոս, երդումն-էրթում** և այլն: Գրական լեզվից ներքին փոխառություններում նախաձայն **ե**-ն դառնում է **յէ**, ինչպես՝ **երգ-յէրք, երգարան-յէրքարան, երջանիկ-Յէրչանիգ** և այլն⁶: Իսկ գրական լեզվում բոլոր դեպքերում օրինաչափ է **յէ** արտասանությունը, ինչպես՝ **յէղանագ, յէրգիր, յէրգըրբաբություն, յէրգարագեաց** և այլն: Այս սկզբունքը չի գործում որոշ փոխառյալ բառերում (տե՛ս էջ 11):

Ուղղագրության էական տարբերություններ կան բառավերջի և բառամիջի դիրքերում: Արևելահայերենում, վերը նշված դեպքերից բացի, մյուս բոլոր դեպքերում՝ բառամիջում և բառավերջում, է արտասանվելիս գրվում է **ե՝ հենակետ, քրիստոնեական, սենյակ, մեկնել, գրկել, հեղինակ, ուտել, նախօրե, միջօրե, որևիցե, թե, եթե, գրեթե, փայտե**: Մինչդեռ արևմտահայերենում գործում են որոշակիորեն այլ սկզբունքներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

1. Բառավերջում միշտ գրվում է **է. նախօրե, Կարինէ, եթէ, փայտէ, գրեթէ, որևիցէ, հիւլէ, մանրէ, ափսէ**: Սա նշանակում է, որ **է**-ով են գրվում նաև քերականական բոլոր այն ձևերը, որոնք բառավերջում ունեն է՝ բացառական հոլովը (նաև **ն** հոդից առաջ)՝ **տունէ(ն), հարցերէ(ն)**, բայաձևերը՝ **բերէ, ըսէ, կը գրէ, երգէ** և այլն: Բառավերջի **է**-ն ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բառի ածման կամ փոփոխության ժամանակ չի ենթարկվում հնչյունափոխության, և դրանից հետո լսվող կամ թույլ արտասանվող **յ** ձայնակապը չի գրվում, ինչպես՝ **հրէական, էական, ափսէով, էութիւն, մանրէակիր** և այլն:

Երկու գրականներում էլ եթե բաղադրյալ բառի մեջ **ե**-ն հաջորդում է բաղաձայնի, արտասանվում է է՝ որպես պարզ ձայնավոր, ինչպես՝ **աներես-անէրես, բազմերանգ-բազմէրանգ, վերելք-վերէլք** և այլն, իսկ եթե հաջորդում է ձայնավորի, արտասանվում է **յէ՝ համաեվրոպական-**

6 Տե՛ս **Գ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 19:

համայնվորոպական, ամենաերկար–ամենայերկար: Արտասանական նույն փոփոխությունը տեղի է ունենում նաև բայաձևերի կազմության մեջ՝ **կ'երթամ–կ'երթամ, կ'երգեմ–կ'երգեմ, կ'ելլեմ–կ'ելլեմ** և այլն: **երկու** կամ **երեք** բաղադրիչներով կազմված կցական թվականների մեջ **ե–ն** գրական լեզվում հնչում է է՝ **քսաներկու– քսաներկու, քսաներեք– քսաներեք, երեսուներեք–երեսուներեք** և այլն:

Ծանոթություն: Դիտարկումները ցույց են տալիս, որ արևելահայերենում կենդանի գրական լեզվի արտասանությամբ **ե–ն** այս թվականներում մեծ մասամբ հնչում է որպես **յէ՝ քսան[յէ]րեք, տասն[(ը)յէ]րեք, քառասուն[յէ]րկու, ութսուն[յէ]րեք:** Բացատրություններից մեկն այն է, որ **տասներկու** և **տասներեք** թվականների համար գործում է այն թվականների համաբանությունը, որոնցում, բաղաձայնների զուգորդությամբ պայմանավորված, հնչում է **ը** որպես առոգանական հենարան, ինչպես՝ **տասնըհինգ>տասնը[յէ]րեք, տասնըվեց>տասնը[յէ]րկու**, իսկ **երկու** թվականով բաղադրություններում **յէ** արտասանությունը պայմանավորված է նաև այդ թվականի բարբառային արտասանությամբ (**երկու**) չնմանվելու հանգամանքով: Բացի այդ, ուժեղ է այդ բաղադրիչների անկախ գիտակցումը: Բոլոր դեպքերում, ուշագրավ է, որ նշված թվականները երկակի արտասանությամբ են բնութագրվում նաև արդի գրական արևմտահայերենում՝ **տասն[է]րեք // տասն[(ը)յէ]րեք, երեսուն[է]րկու // երեսուն[յէ]րկու** և այլն:

Արևելահայերենում բառակզբի **կ** և **չ** մասնիկներից հետո **ե–ն** այսօր հաճախ արտասանվում է ոչ թե **է**, որը գրական հայերենի կանոնն է, այլ **յէ**, քանի որ **ե–ն** հաջորդում է ձայնավորի. հանդես է գալիս **կը** և **չը** հնչվող մասնիկներից հետո, ինչպես՝ **կ(ը)յենթադրի, կ(ը)յերագի, կ(ը)յերգի, կ(ը)յերկարացնի, կ(ը)յենթարկվի, չ(ը)յեռա:** Ներկայումս **ան–** նախածանցով առանձին բառերում **ե–ն** ունի երկակի արտասանություն՝ է և **յէ**, ինչպես՝ **ան/էկամտաբեր // անէկամտաբեր, ան/չրևակայելի // անէրևակայելի, ան/չնթադրելի // անէնթադրելի:** Նույնը արձանագրվում է նաև կցական թվականների արտասանության մեջ՝ **քսան/չրեք // քսանէրեք, երեսուն/չրեք // երեսունէրեք, հիսուն/չրկու // հիսունէրկու:** Արտասանական այս տեղաշարժը, ըստ մեր բանավոր հարցման արդյունքների և կենդանի գրական լեզվի արտասանության լուսնների, որոշ չափով նկատվում է նաև արևմտահայերենում. երբեմն նույն բառի

կամ բառաձևի արտասանության մեջ ունենում ենք երկակի հնչում, ինչպես՝ **կ'էրզեմ // կը յէրզեմ, կ'էնթադրեմ // կը յէնթադրեմ, չէրազենք // չը յէրազենք, չէրկնեն // չը յէրկնեն** և այլն: Արտասանական երկրորդ (յէ-ով) տարբերակը՝ որպես ժողովրդախոսակցական ձև, ունի առավելապես ոճական-արտահայտչական նշանակություն:

2. Երբ արմատից կամ բառից նոր բառ ենք կազմում և ունենում ենք հնչյունափոխություն (**է>ի**), ապա այդ արմատը կամ բառը գրվում է **է-ով**: Այլ կերպ ասած՝ շեշտափոխության ժամանակ **է-ն** դառնում է **ի**, իսկ **ե-ն** մնում է անփոփոխ՝ **սէր-սիրել**, բայց՝ **սեր-սերուցք, գէտ-գիտնալ**, բայց՝ **գետ-գետակ, գէր-գիրնալ**, բայց՝ **գեր-գերագոյն, վէր(ք)-վիրակապ**, բայց՝ **վեր-վերին** և այլն:

է>ի փոփոխության ոլորտը ընդգրկում է մեծ թվով բառեր, դրանցից են նաև՝ **դէգ-դիզել, դէմ(ք)-դիմակ, ձէթ-ձիթապտուղ, մէտ-միտումնաւոր, վրէպ-վրիպել, դէտ-դիտակ, կէգ-կիզել, մէջ-միջուկ, մէգ-միգամած, վէճ-վիճել, օրէն-օրինական** և այլն: Ըստ որում, պարտադիր չէ, որ նշված բառը **է-ով** գրվելու համար անպայման բոլոր կազմություններում հնչյունափոխության ենթարկվի. կան բառեր, որոնցով կազմված բաղադրյալ ձևերի մի մասում **է>ի** հնչյունափոխություն չի լինում, ինչպես՝ **գէշ-գիշատիչ**, բայց՝ **գէշութիւն, գէշնալ**, կամ՝ **գէր-գիրուկ, գիրնալ**, բայց նաև՝ **գէրնալ, գէրութիւն** և այլն (տե՛ս էջ 61–62):

3. Բառավերջի երկու արմատական բաղաձայներից առաջ միշտ գրվում է **ե**, ինչպես՝ **բերդ, հրաժեշտ, տենդ, զերդ, վերջ, խենթ, ներկ, քերթ, մեղր** և այլն:

4. Բառերի նախավերջին վանկի վերջում միշտ գրվում է **ե**, օրինակ՝ **երեկոյ, բերան, ոսկեղէն, հայելի** և այլն:

5. **է-ն** գրվում է նաև.

ա) Անկատար անցյալ, անցյալի ապառնի և ըղձական անցյալի ապառնի ժամանակներով դրված բայերում՝ անկատար անցյալ՝ **կ'երգեր, կը խօսէր, կը պատասխանէի, չունէր**, ըղձական անցյալի ապառնի՝ **երգեր,**

խօսեր, պատասխանեի, անցյալի ապառնի՝ պիտի երգեր, պիտի խօսեր, պիտի պատասխանեի:

Արգելական հրամայականում, ինչպես նաև վերլուծական կազմությունների դերբայական մասում գրվում է միայն **ե՝** արգելական հրամայական՝ **մի՛ գրեր, մի՛ նկարեր**, անկատար ներկա՝ **չի երգեր–չ՛երգեր** (արևել.՝ **չի երգում**), **չի ուզեր–չ՛ուզեր** (արևել.՝ **չի ուզում**), անկատար անցյալ՝ **չի գրեր** (արևել.՝ **չի գրում**), **չէինք գրեր** (արևել.՝ **չէինք գրում**) և այլն:

բ) Բառամիջում՝ ձայնավորից առաջ (բացառությամբ **եայ, եօ** հնչյունակապակցությունների)՝ **քրեական, քրիստոնեություն, գործունեություն, գրեին, միջօրեական, հրեուհի, հրեական, հրեություն** և այլն: Բայց՝ **քրիստոնեայ, գործունեայ, հրեայ, արդեօք:**

գ) Բայական վերջավորություններում՝ **ք–ից** առաջ՝ **գրեք, պիտի գրեք, գրեցե՛ք, կը գրեք, մի՛ գրեք** և այլն:

դ) **–ել, –ես, –են, –եսս** հնչյունակապակցություններով վերջացող հատուկ անուններում՝ **Ռափայել, Ներսես, Մովսես, Քել, Մանուէլ, Բաբգեն, Խորեն, Յովհաննես, Վազգեն, Անդրեաս** և այլն:

ե) **–են–ով** վերջացող ոչ բայական բառերում՝ **արդեն, ամեն, հելեն, մեն (միակ), (ծովա)հեն, պատճեն, քեն, հայերեն** և այլն: **Ատեն, ցորեն** և **գեհեն** բառերը գրաբարյան **ատեան, ցորեան** և **գեհեան** ձևերից են, ուստի չեն գրվում **է–ով**: (Տառանունները գրվում են **ե–ով՝ քեն, կեն, մեն**):

զ) **–եթ–ով** վերջացող բոլոր միավանկ բառերում և հատուկ անուններում՝ **գեթ, Սեթ, խեթ, Յամլեթ, Յաբեթ** և այլն: Բազմավանկ բառերը գրվում են **ե–ով՝ աբեթ, անհեթեթ, փաթեթ** և այլն:

է) **եա, եօ, էո** հնչյունակապակցություններ ունեցող փոխառյալ բառերում՝ **խտեալ, իտեա, լեգեոն, պանթեոն**, և հատուկ անուններում՝ **Թեոդոսիա, Թադեոս, Մաթեոս, Կղեպատրա, Գէորգ, Չեօրեքճեան, Էօթենի** և այլն:

6. Օտար բառերի մեջ **է–ե** տառերի գրությունը հստակ օրինաչափությամբ դժվար է սահմանել. պետք է պահպանել գրաբարին մոտ եղանակը՝ **Քեսապ, Նենեթ, քատթ, աթլեթ, Յալէպ, Ալէն, Շէյքսփիր, Սարիթ, Ժուլիթ** և այլն: Առանձին փոխառյալ բառերում բառասկզբում լսվող **է–ն** գրվում է **ե՝ Ելլադա, Եպիկուր, Եպիկուրեան,** նաև **Ելեկտր** արմատով կազմված բառերում՝ **Ելեկտրասին, Ելեկտրալամբ, Ելեկտրալար** և այլն, ինչպես՝ «Թէ՛ **Եդուարդը,** թէ՛ ես շատոնց չէինք այցելած շրջանը...», «Ինչո՞ւ ձեռքդ այդ **Ելեկտրալարին** դպցուցիր. փորձանքի կ'ուզես հանդիպիլ» (Յ. Քյուրքճյան), «Անցեալները, երբ **Ելեկտրական** հոսանքը յանկարծ խզուեցաւ ու սամդուխները մնացին խոր մթութեան մէջ, դուռը բացի ու լոյս տուի» (Կարո Ալակեոզ):

7. Մի շարք բառերի **է–ն** բառաբարդման կամ ածանցման ժամանակ փոխվում է **ե–ի** (գրաբարում **է>ե** տառափոխությունը բնորոշ էր նաև քերականական փոփոխություններին՝ **աղուէս–աղուեսու, եղէգն–եղեգան, պատճէն–պատճենի, Իսրայէլ–Իսրայելի,** աշխարհաբարում ոչ): Դրանք հիմնականում այն բառերն են, որոնք չունեն **է>ի** հնչյունափոխություն.

• **Եղէգ – եղեգնուտ, եղեգնեայ:**

• **Պարէն – պարենապահ, պարենաւորել, պարենաբարձ, պարենամթերք:**

• **Գմբէթ** բառը գրվում է նաև **գմբէթ** ձևով և ապա՝ **գմբէթարդ // գմբէթարդ, գմբէթածել // գմբէթածել, գմբէթագարդ // գմբէթագարդ** (Ստ. Մալխասյանցը նշում է է–ով՝ **գմբէթածել, գմբէթարդ, գմբէթագարդ.** այժմ նախապատվությունը տրվում է **ե–ով** ձևերին):

• **Ամէն** բառի քերականական ձևերի համար հանձնարարելի է է–ով գրությունը՝ **ամենուն, ամենէն, ամէնով:** Նույն բաղադրիչով ածանցավոր կազմությունները ունեն **ե՝ ամենեւին, յամենայն դէպս, այսուամենայնիւ,** բայց՝ **ամէնքը:** Հոդակապով իսկական բարդություններում գրվում է **ե՝ ամենատէր, ամենագէտ, ամենահաս, ամենակալ, ամենատես, ամենասփիւռ** և այլն: Անհոդակապ (կցական) բարդություններում է–ն պահպանվում է՝ **ամէնստեղծ, ամէնատեսց, ամէնընտիր, ամէնուր, ամէնժամեայ, ամէնիմաց, ամէնօրինեալ, ամէնուրեք, ամէնսփիւռ (ամենասփիւռ)** և այլն. «Ահա աս իմ **ամէնօրեայ** տեսարանս է դուրսի աշ-

խարհին» (Ռ. Հատտեճյան), «Արուեստի մարդը, ստեղծագործումի նուիրական ու **ամէնէն** մասնաւոր կարծուած պահերուն անգամ մինակ չէ երբեք» (Բ. Նուրիկյան):

Ածականների գերադրական աստիճանը կազմվում է **ամենա-** և **ամէնէն** ձևերով, ընդ որում, **ամենա-** ածանցը սովորաբար դրվում է բաղաձայնով սկսվող ածականների վրա՝ **ամենալաւ, ամենագէշ, ամենահաս, ամենածանր**, իսկ **ամէնէն** քերականական ցուցիչը՝ ծայնավորով (նաև՝ բաղաձայնով) սկսվող ածականների վրա՝ **ամէնէն աղէկ, ամէնէն անուշ, ամէնէն ազատ**: Այնպես որ, **ամենաընտիր, ամենաուշ, ամենաազնի** ձևերը սովորական չեն և արևմտահայերենում գործածական են դարձել արևելահայերենի ազդեցությամբ:

Ընդամէնը բառը գրվում է է-ով:

Ծանոթություն: Բաղադրյալ բառերի գրության մեջ **ամէն** բառի ուղղագրության վերաբերյալ քննարկումներ շատ են եղել, և որոշ տարակարծություններ կան նաև այսօր: Միօրինակություն հաստատելու համար բոլոր դեպքերում թերևս կարելի է պահպանել հիմք բառի ուղղագրությունը՝ **ամէն. ամէնալաւ, ամէնուն, ամէնսփիւռ, ամէնասփիւռ**:

* **է>ե** տառափոխությամբ են գրվում նաև **Արմէն**–ով բաղադրված **Արմենիա, Արմենուհի, Արմենակ** բառերը:

Ծանոթություն: **Աղէտալի** բառը աշխարհաբարյան կազմություն ունի: Գրաբարը, ըստ Հայկազյան բառարանի, այդպիսի բառ չունի, բայց ունի **աղէտաբեր** և **աղէտաբեր**: Միփթարյան միաբանությունը ընդունում է **ե**–ով տարբերակը՝ **աղէտաբեր**, իսկ նորարարները՝ **աղէտաբեր**:

Ը

Ը ծայնավորի ուղղագրության և արտասանության սկզբունքները նույնն են երկու գրականներում:

1. Բառասկզբում արտասանվող **ը** հնչյունը գրվում է միայն **դ, մ, ն** բաղաձայններից առաջ, ինչպես՝ **ընկեր, ըղձալի, ըմպանակ, ընտանիք, ընել**, ինչպես նաև **ըստ** բառում: Գրվող **ը**–ով սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ՝ **անընդունակ, պարընկեր, գործընկեր, ինքնըստինքեան, արագընթաց**:

2. **Սփ, ստ, զբ, սք, սկ, սք, սպ, զմ, շտ** և նման հնչյունակապակցություններով սկսվող բառերը արևմտահայերենում արտասանվում են նախահունչ **ը**–ով՝ (**ը**)**սփիւռք** (**ը**)**ստինք**, (**ը**)**զբաղիլ**, (**ը**)**զբօսանք**, (**ը**)**զմելի**, (**ը**)**զգոյշ**, (**ը**)**սքափիլ**, (**ը**)**սկսիլ**, (**ը**)**սքողել**, (**ը**)**զմայլելի** և այլն: Չափածո գրվածքներում երբեմն **ը**–ն գրվում է տաղաչափական նպատակներով. «**Ըստուերի** մէջ, լոյսերու մէջ փրփրագին Օովէ՛ր կ'անցնին», «Քա՛ղցր է լողալ համառօրէն որաներուն մէջէն հեղեղ. **Ըզգալ** ուռիլը բազուկին երակներուն արեւազեղ» (Դ. Վարուժան):

Նշված բառերը բարդության մեջ բաղաձայնից հետո արևմտահայերենում դարձյալ արտասանվում են **ը**–ով, որը, իհարկե, չի գրվում՝ **գեր(ը)զգայուն, համա(ը)սփիւռք, ան(ը)սպասելի, հապ(ը)շտապ, վեր(ը)ստանալ** և այլն: Արևելահայերենում նույն դիրքերում լսվում է կիսահունչ **ը՝ Եսկսել, Եզբաղվել, Եստանալ, վերԵստանալ** և այլն:

Ծանոթություն: Եթե **շտ, գտ, ստ** և նման կապակցությունները ստացվել են նրանց միջև եղած **ի** կամ **ու** ձայնավորների հնչյունափոխությունից, ապա **ը** հնչյունը երկու գրականներում էլ արտասանվում է **ս, գ, շ** հնչյուններից հետո: Օրինակ՝ **սուտ–սըտել, շիտակ–շըտկել, զուտ–զըտել**: Արտասանական այս ընդհանուր կանոնից կան նաև այլ շեղումներ: **Ստոտու** բառը արևմտահայերենում արտասանվում է նախահունչ **ը**–ով՝ **[ը]ստ[ը]նտու** (<**ստիճ**), արևելահայերենում՝ **ստ[ը]նտու, սկիհ–ը՝** արևմտահայերենում՝ **ս[ը]կիհ**, արևելահայերենում՝ **Եսկիհ** և այլն:

3. Բառամիջում **ը** հնչյուն է նաև երկու և ավելի բաղաձայնների որոշ կուտակումների միջև՝ դյուրացնելով դրանց արտասանությունը, օրինակ՝ **գըտնըուիլ, վըկայ, վըճարել, ջըրիոս, նըստիլ, կըռիւ, կայսըր, ար–**

Կըղ, անգըղ, կըռկըռալ: Այդ **ը**-ն երկու տարբերակներում էլ գրվում է միայն այն դեպքում, եթե բառի մեջ ուրիշ գրվող ձայնավոր չկա՝ **Մսըր // Մըսր, շըխկ, թըխկ, թրըխկ, դրըխկ:**

Ծանոթություն: Կարծիք կա, որ արդի արևմտահայերենը արտասանության մեջ միտում ունի մի շարք բառերում սղելու վերջնավանկի **ը**-ն՝ **կայ[սր], աս[տղ], դուս[տր], գամ[փռ], ար[կղ]** և այլն:

4. Բառավերջում **ը** հնչյունը գրվում է, երբ արտասանվում է: Այս կանոնը ընդհանուր է արևելահայերենի և արևմտահայերենի համար, սակայն մի շարք բառերում երկու գրականները երևան են հանում բառավերջի **ը**-ի արտասանության, հետևաբար նաև գրության տարբերություններ:

Արևմտահայերենում մի շարք բառեր, ի տարբերություն արևելահայերենի, արտասանվում ու գրվում են **և՛ ը**-ով (կամ **ն**-ով), **և՛ առանց դրա**, ինչպես՝ **ինք(ը), ոչ մեկ(ը), տաս(ը), եօթ(ը), ութ(ը)**, օրինակ՝ «Առաջին օրինակը թերի է եւ ունի վերջին **եօթը** համարները միայն», «...որմէ հետոյ **ինք** պատրաստ էր գալ Լոնտոն և քննարկել հարցի մանրամասնութիւնները» («Հայկազեան հայագիտական հանդէս»), «Որպէս ուսանող **եօթ** տարիներ ապրած եմ Հայաստան...» (Ե. Ճերեճյան), «Ո՛չ հանգիստ կա, ո՛չ ալ քուն ցուրտ յարկին տակ օտարին, Ա՛խ, **եօթն** օրէն աւելի հիւր չպահես ո՛չ որին» (Մուշեղ Իշխան), «Նախ մենք տնկեցինք ամենէն ընտիր եւ սուղնոց տեսակէն մօտ **եօթը** հարիւր նռնենիներ» (տե՛ս Գ. Զուլաքյան), «Ուրիշին փոսը փորոզը **ինքը** մէջը կ'իյնայ», «Սակայն այս տեսակցութենէն **ոչ մէկ** տուեալ կ'արդարացնէ որոշ թուականի մը ճշդումը» (Ս. Նաճարյան), «**Ոչ մէկը** թշնամիին կը հաւատայ», «...երկու խոշոր ժանիքներ, որոնք մինչեւ **ութը** ոտք կ'երկարին» (տե՛ս Գ. Սաքայան):

Արևելահայերենում առաջին երեքը գործածվում են միայն **ը**-ով (կամ **ն**-ով)՝ **ինքը, ոչ մեկը, տասը**, իսկ 7 և 8 թվականները՝ միայն առանց **ը**-ի՝ **յոթ** և **ութ**:

Արևմտահայերենում **ոչ մեկ** և **ոչ մէկը** զուգահեռ ձևերի գործածության վերաբերյալ հետաքրքիր տեղեկություն է տալիս Կարո Առաքելյանը. «Ոչ

մէկը. այս դերանունը իմաստով կը մօտենայ **ոչ ոք** դերանունին,— գրում է նա,— սակայն կայ տարբերութիւն մը. **ոչ մէկը** դերանունը կրնայ գործածուիլ եւ անձի, եւ իրի նշանակութեամբ, մինչդեռ **ոչ ոք** դերանունը՝ միայն անձի նշանակութեամբ: Օրինակ՝

Ոչ մէկը կը խոստովանէր իր մեղքը:
Այս գիրքերէն **ոչ մէկը** կ'ուզեն:

..**Ոչ մէկ.** ունի ածականական կիրարկութիւն, այսինքն՝ կը դրուի գոյականներու վրայ՝ ներկայանալով որոշիչի պաշտօնով: Օրինակ՝

Ոչ մէկ աստղ կ'երեւեր այդ գիշեր»⁷:

Բնագրային օրինակները, սակայն, միշտ չէ, որ խոսում են **ոչ մէկ** դերանվան միայն ածականական կիրառության մասին, ինչպէս՝ «Ես կ'ուզէի, որ **ոչ մէկ** անօթի մնար աշխարհի վրայ» (տե՛ս Դ. Սաքայան, էջ 256):

Որոշ քանակական թվականների՝ **ը**–ով արտասանությունը և գրությունը ճիշտ չեն և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում, այսպէս՝ ոչ թե **հինգը, վեցը** կամ **երեսունըվեց, հիսունըհինգ, քառասունըչորս**, այլ **հինգ, վեց** կամ **երեսունվեց, հիսունհինգ, քառասունչորս** և այլն:

5. Գաղտնավանկ ունեցող մի քանի բառերում արևելահայերենում և արևմտահայերենում նկատվում են արտասանական տարբերություններ. գաղտնավանկը արտասանվում է տարբեր դիրքերում կամ տարբերակներից մեկում չի արտասանվում, այսպէս՝

արևել.՝ **բըզկտել, բըռնըկվել, ընկըծել, կըրկընկվել, Ավստրիա, Ավստրալիա, Փավստոս.**

արևմտ.՝ **բըզըկտել, բըռընկիլ, ընկծել, կըրկընկիլ, Աւըստրիա, Աւըստրալիա, Փաւստոս:**

Օրինակ՝ «Ուր մոզին իր դունչը մըխած՝ կը **բըզըկտէ** խոլորձը գէջ», «Շրթունքներէս ահա վարդեր կը **բըռնկին**», «**Բըռնկեցաւ** ծառը մէկէն Իր

7 Կ. Առաքելեան, Արդի հայերենի քերականութիւն, Գ. Գիրք, Պէյրուք, 1998, էջ 90:

ճիւղերէն» (Մ. Չարիֆյան), «Եղերական գիտութիւնը այդ տղուն, որ ամիսներէ ի վեր փորձը ունէր սարսուռին յաջորդ **բզրկտումին**» (Յ. Օշական), «Ու մի առ մի տենդեր ու գոյն կը **բռընկին**, կը լեննան մեր հոգիի աչքերուն մեր դողացող էութեան» (Բ. Թովսայան):

6. Մասնակի տարբերություններից է նաև այն, որ արևմտահայերենում բառամիջուկում **ը** հնչյունը գրվում է նաև **ու(վ)** բաղաձայնից հետո՝ **պահուըտիլ, կուըտիլ, գզուըռտիլ, կանչուըռտուք**, որ նշանակում է նաև **ը**–ի գրություն՝ **ուան(վան)** հոլովման պատկանող գոյականների բացառական հոլովում՝ **ամառուընէ** (հնց.), **առտուընէ**, **գիշերուընէ**, **իրիկուընէ**, **կէսօրուընէ** (հնց.), **մահուընէ** (հնց.), **վաղուընէ** և այլն, և **–ուըներ** բարբառային հոգնակերտից առաջ՝ **մատուըներ, աչուըներ, ձեռուըներ, ծնկուըներ, ոտուըներ** և այլն:

Արևմտահայերենում **անցնել** ներգործական բայը իր չեզոք զուգահեռին հակադրելու համար հաճախ գրում են **ը**–ով՝ **անցընել–անցնիլ**. «Առաջ կ'ուզես **անցնիլ**», կամ՝ «Եւ մինչ մարդիկ կը խնդան Ու **կ'անցնին** ծանր հեգնութեամբ» (Բ. Թովսայան), բայց՝ «Անիկա ուրախ ժամանակ **կ'անցընէ**», կամ՝ «Այս չորս տարիները **կ'անցընէ** ուսուցչութեամբ եւ գրական աշխատանքներով» (Մ. Իշխան), «Ձուրը շատ օգտակար հեղուկ մըն է. ան ծարաւը **կ'անցընէ...**», «Արմէն, ինձի աղը **կ'անցընէ՞ս**» (Դ. Սաքսայան):

Կարծիք կա, թե իմաստային այդ հակադրությունը խոնարհման մեջ արդեն դրսևորվում է, ուստի համընդարարելի չէ դրա անգաղտնավանկ գրությունը: Բայց դա այդպես չէ, քանի որ, օրինակ, անցյալ ժամանակի մի շարք կազմություններում դրանք ձևով ամբողջությամբ համընկնում են, ինչպես՝ **անցնիլ > կ'անցնէի = անցնում էի, անցընել > կ'անց(ը)նէի = անցկացնում էի**: Հետևաբար ճիշտ է **անցընել** ներգործական–պատճառական բայի **ը**–ով գրությունը՝ **անցընել–անցկացնել**:

Երբ բաղաձայնների կուտակում կա, ուղղախոսության տեսակետից արևմտահայերենում ճիշտ է նկատվում առանձին հատուկ անուններում **ը** գրելը՝ **Գըլճեան, Պըլըտեան, Ֆընտքլեան, Այտընեան** և այլն: Փոխա-

ռությունների վերջին վանկում սովորաբար գրվում է **ը՝ Փարթըր, Հաճըն, Պոսթըն, Քարթըր, Քլինթըն**, թեև հին փոխառություններում չի գրվում՝ **Աղեքսանդր, կղմինտր, լիտր, կուպր, մեթր** (վերջին երեքը հնչում են իբրև մեկ վանկ) և այլն: Արևելահայերենում նույնպես գաղտնավանկի **ը**–ն երբեմն գրվում է ավանդական հայկական կամ օտար արտասանությունը ապահովելու նպատակով, օրինակ՝ **Այտընյան, Չալընյան, Բրայըն**:

Ո և օ

Հայերենի երկու տարբերակներում բառասկզբում **վօ** արտասանվելիս միշտ գրվում է **ո**, իսկ **օ** արտասանվելիս՝ **օ**. **որակ, որս, ոսկոր, որոշ, օրրան, օրոցք, օգուտ, օրհներգ**: Նախաձանց ստանալու դեպքում կամ բարդության մեջ բաղաձայնից հետո **ո**–ն արտասանվում է **օ՝ անօղորմ, բարձրօրակ, կրծօսկր** և այլն: **Օ**–ով սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ, ինչպես՝ **անօգտակար, ապօրինի, կէսօր, բնօրրան, ոսկեգօծ, անօրինակ, անօթեւան, չօգնել, կ'օգնեն**: Մասնակի տարբերություններից է այն, որ արևմտահայերենում բառասկզբում **վօ** հնչյունը **վո**–ով է գրվում **վոհմակ** բառում, ինչպես նաև այն, որ **վ** բաղաձայնից առաջ **օ** լսվում, բայց **ո** է գրվում ոչ միայն **ով** բառում և դրանից կազմված՝ **ովեւէ, ովեւիցէ** բառերում, այլև **ովասիս, ովկիանոս, ովկիան, Ովսաննա** բառերում, ինչպես գրաբարում է. «Ձուրերը հաւաքուելով կը կազմեն աղբիր, առու, վտակ, գետ, լիճ, ծով, **ովկիանոս**» (Դ. Սաքայան):

Ծանոթություն: **Ո**–ն **վօ** է արտասանվում **Գեորգ** օտար բառում՝ > **Գեւորգ**: Հ. Չոլաքյանը նշում է նաև փոխառյալ **քաոս** բառը, որը, ըստ նրա, արտասանվում է **վօ**–ով՝ **քավօս**, սակայն մեր դիտարկումները և եղած կարծիքները այդպիսի արտասանություն չեն վկայում. **քաոս** բառն արևմտահայերենում արտասանվում է **քաօս**:

Արևելահայերենում բառասկզբի **կ** և **չ** մասնիկներից հետո **ո**–ն այսօր հաճախ արտասանվում է ոչ թե **օ**, որը գրական հայերենի կանոնն է, այլ **վօ**, քանի որ **ո**–ն հաջորդում է ձայնավորի. հանդես է գալիս **կը** և **չը** հնչող

մասնիկներից հետո, ինչպես՝ **կ[(ը)վօ]րոշեն, կ[(ը)վօ]րսան, կ[(ը)վօ]րոտա, կ[(ը)վօ]րբա, չ[(ը)վօ]րոնեն, չ[(ը)վօ]րակեն** և այլն: Արևմտահայերենում դա գրական լեզվի կանոն է. **վօ** արտասանվելիս չի աղավաղվում հիմք բառի արտասանական պատկերը: Հիշենք նաև, որ հին ուղղագրությամբ **կը** և **չը** մասնիկները գրվել են դերբայական ձևերից առանձին՝ **կը որոշեն, չը ողջունեն, կը ողջունեն** և այլն:

Ո – օ–ի ուղղագրությունը արևմտահայերենում և արևելահայերենում զգալի տարբերություններ ունի **բառամիջի** և **բառավերջի** դիրքերում:

Հայտնի է, որ **օ**–ն բառամիջում գրվում է, եթե առանձին բառի կամ արմատի սկզբնատառ է: Սա ընդհանուր կանոն է երկու գրականների համար: Մյուս բոլոր դեպքերում արևելահայերենում բառամիջում և բառավերջում **օ** արտասանվելիս գրվում է **ո** տառը՝ **բոլոր, հոսանք, կողմնորոշվել, պահածո, երեկո, գողոն**: Սակայն արևմտահայերենում պատկերը փոքր–ինչ այլ է. այստեղ գործում են բառամիջում **օ**–ի գրության նաև այլ սկզբունքներ՝ տարբեր արևելահայերենից:

Բառամիջում **օ**–ի գրությունը հիշելու համար կան որոշ օգնող կանոններ: **Օ**–ով են գրվում.

ա) –**օն(ք)** և –**օք** (գրբ. գործ. հոլովի քարացած ձև) ածանցները՝ **առօք–փառօք, ատենօք, գործօն, զարթօնք, ընտանեօք, թափօն, թերթօն, կտրօն, ջարդօն, ցալօք**, բայց՝ **թատրոն, կեդրոն, կերոն, ծամոն**, նաև՝ **բարուք (ել)** և այլն:

բ) –**օրեն** ածանցը՝ **արագօրեն, մեղմօրեն, հմտօրեն** և այլն:

գ) **Հայր, մայր, եղբայր** բառերի սեռական–տրական հոլովածները (**այ>օ** հերթագայությամբ) և սրանցով կազմված բարդությունները՝ **եղբայր–եղբոր, եղբորորդի, հայր–հոր, կնքահոր, հորաքոյր, մայր–մոր, մորեղբայր** և այլն:

Բառամիջում **օ**–ով գրվող շատ գործածական բառերը ուղղակի պետք է հիշել: Դրանք են՝ **ակօս, աղօթք, աղօտ, ամօթ, անօթ, անօթի, առաւօտ, արդեօք, արտօնել, արօր, բռնագբօսիկ, բօթ, գործօն, գօտի, դրօշ, եօթ, զբօսանք, զգօն, զօրք, թօթափել, թօթուել, թօշն(իլ), թօն, ծանօթ, ծղօտ, ծնօտ, կարօտ, կօշիկ, կրօն, համառօտ, հետագօտել,**

հօտ, մօտ, մօրուք, յօժար, յօնք, յօրինել, յօրանջել, յօտել, նօսր, նօտար, շօշափել, պաշտօն, սօսափին, տօթ, տօն, ցօղ, ցօղուն, օրօր:

Բառավերջում գրվում է **օ**։

ա) Հատուկ անուններում՝ **Կարօ** (<Կարապետ), **Մանօ** (<Մանուէլ), **Քոնկօ, Մոնաքօ**։

բ) Օտար բառերում կամ նորագույն փոխառություններում՝ **մեթրօ, ռատիօ, օթօ, զերօ//զէո, փիանօ**։ Հոդառության և հոգնակիակազմության ժամանակ այդ **օ**-ն պահպանվում է՝ **Սարօն, օթօն, օթօներ, իմ օթօս** և այլն։ Պահպանվում է նաև բառաբարդման կամ ածանցման ժամանակ՝ **ռատիօհաղորդում, կինօփառատօն**։ Բայց հոլովման ժամանակ այն դառնում է **ո** և հաջորդ ձայնավորին միանում է յ-ով, ինչպես՝ **Մարոյին, Մարոյով, օթոյով, օթոյէն, Կարոյէն, ռատիոյի, կինոյով**։ «— Երէկ գիշեր Հայաստանի **ռատիոյէն** ըսին,— յարեց քովէն ուրիշ մը» (տե՛ս Գ. Քյուրքճյան)։

Հատուկ անունները ազգանուն դառնալու դեպքում **օ**-ն փոխում են **ոյ**-ի՝ **Սարօ–Սարոյեան, Մարտօ–Մարտոյեան** և այլն։

գ) **Օ**-ով են գրվում նաև՝ 1) ձայնարկությունները՝ **տօ՛, ծօ՛, լօ՛**, 2) մի քանի նոտաների (ձայնանիշերի) անուններ՝ **տօ, սօ**, 3) հայերեն մի քանի տառերի անուններ՝ **թօ, հօ, ցօ**։

Արևմտահայերենում **ո**-ի ուղղագրության վերաբերյալ պետք է հիշել։

ա) **Վ**-ից առաջ միշտ գրվում է **ո՛**՝ **հովանոց, Փարաջանով, ծով, սովորական**։

բ) **–ոս, –էոս, –իոս, –ոն**-ով վերջացող հատուկ անուններում ունենք **ո՛**՝ **կաթողիկոս, Եգիպտոս, Սողոմոն, Նեղոս, օգոստոս, Ռեթէոս, Մատթէոս, Իգնատիոս, Սիմոն** և այլն. բայց՝ **Պաւղոս–Պօղոս** (ունենք **աւ>օ**)։

գ) **ո**-ով են գրվում **–ոցք, –նոց, –(ա)ւոր, –ուոր, –ող(ք), –ոտ, –ոջ** մասնիկները՝ **օրօրոց (օրոցք), բազմոց, հազարնոց, թագաւոր, բանաւոր, գինւոր, ծնող(ք), փոշոտ, արիւնտ, ընկերոջ**։

դ) Արմատներում կամ մասնիկներում երկու բաղաձայններից առաջ գրվում է **ո՝ անդորր, յաճախորդ, տոհմ, դրոշմ, կոճղ, Տոսպ(վան), որսորդ, ճամբորդ, գորգ, խորթ, կոտրել, կողմ**: Միակ բացառությունը **նօսր** բառն է, որից՝ **նօսրանալ, նօսրութիւն, անօսր**:

ե) Արևմտահայերենում **ո** տառով վերջացող բառ չկա՝ բացառությամբ **այո** բառի: Բազմավանկ բառերի վերջում գրվում է **ոյ**, բայց կարդացվում է **օ՝ առանց յ–ի՝ հաւաքածոյ [հաւաքածօ], ի վերջոյ [ի վերջօ], չափածոյ [չափածօ], դրածոյ [դրածօ], յետոյ [յետօ]** և այլն: Այս կանոնի մեջ չեն մտնում բարբառային բառերն ու նորագույն փոխառությունները: Միավանկ բառերի վերջնահանգի **յ–ն** արտասանվում է, ինչպես արևելահայերենում է՝ **Նոյ, գոյ, խոյ**:

Օտար բառերում բառամիջի **օ, ո–ի** գրության մեջ նկատվում է որոշ անկանոնություն. դրանցում սովորական էր **օ–ով** գրությունը՝ **փօլիս, Սօնիա, ռոմանթիզմ, փարատօքս, փրօֆեսօր**: Սակայն «վերջերս կարգ մը թերթեր սկսած են բառին մեջ, բացի վերջայանգէն, բոլոր դիրքերուն ալ **Ո** գրել, ինչպէս՝ **լոպի, կոլ, ռոմանթիզմ, Սոնիա, Փոլ, փոլիս, ֆութպոլ** եւ այլն»⁸: Սա հավանաբար պայմանավորված է արևմտահայերենում օտար բառերի տառադարձության հետևյալ սկզբունքով. ֆրանսերենի **օ–ն** տառադարձվում է **ո**, իսկ **au–ն՝ օ**, օրինակ՝ **Lausanne>Լօզան, Paul>Փօլ, Sonia>Սոնիա (Սոնա), Polis>Փոլիս, Professeur>Փրոֆեստօր** և այլն: Ինչևէ, գրավոր խոսքում այդ անմիօրինակությունն առկա է, ինչպես՝ «...Խոնաւ քրտինք մը կը թօջէ քարայրաբան **փրոֆեսորին** եւ իր ուղեկիցներուն մարմինը» (**Յ. Քիրքճեան**, Նոր քերականութիւն հայերէն լեզուի, Աթէնք, 1989), «Մարդը **փրօֆեսօր** է եղեր. իբր այցեգին՝ տասը ոսկին չհանեցաւ» (**Ռ. Մաշոյեան**, Եւ այսպէս ապրեցանք, Իսթանպուլ, 1998): Միօրինակացման ուղիներից մեկը այդ բառերի՝ արևելահայերենում ընդունված (այսինքն՝ **ո–ով՝ փրոֆեսոր**) գրության նախընտրությունն է:

8 **Յ. Չոլաքեան**, Հայերենի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000, էջ 24:

Ծանոթություն: Ըստ Բ. Չոլաքյանի՝ **Սողոմոն** հատուկ անվան մեջ երկրորդ **ո**–ն չի արտասանվում՝ **Սողմոն**: Կա այլ կարծիք, ըստ որի՝ այդ բառն արտասանվում է այնպես, ինչպես արևելահայերենում՝ **Սողոմոն**:

Ու

Այս տառի ուղղագրությունը և արտասանությունը արևելահայերենում չունեն որևէ դժվարություն, արևմտահայերենում, սակայն, ունեն որոշ յուրահատկություններ:

Արևմտահայերենում **ու**–ն, ինչպես արդեն ասվել է, երկու տառերի համադրությամբ արտահայտված պարզ ձայնավոր է՝ **ու(ո + ւ)**: Գրաբարյան **ու**–ն, ըստ Ա. Աբրահամյանի, երկբարբառ է (**ոու**՝ **օս** արտասանությամբ), որի բաղադրիչ տարրերը խիստ սերտ արտասանություն ունենալու պատճառով ժամանակի ընթացքում ձուլվել ու վերածվել են պարզ **ու** ձայնավորի: Մյուս ձայնավորներից զանազանելու համար լեզվաբանը այն կոչում է **երկբարբառային ձայնավոր**⁹: Արևմտահայերենում **ու**–ն տառակապակցություն է և **ու** պարզ ձայնավորի գրային նշանը:

Ու ձայնավորը արտասանվում և գրվում է բառասկզբում (**ուրախ, ուզել**), բառամիջում (արևմտահայերենում բաղաձայնից առաջ) (**նուռ, սուր**) և բառավերջում (**ածու, կատու**):

Ծանոթություն: Եթե **ու**–ն շեշտակիր է կամ կրում է հարցական նշան, ապա երկու գրականներում էլ առոգանության այդ նշանները (պարույկը և շեշտը) պետք է դրվեն տառի առաջին բաղադրիչի՝ **ո**–ի վրա, ինչպես՝ **ո՞ւր, որո՞ւ, սո՞ւր**:

Արևմտահայերենում, բառի մեջ ունեցած իր դիրքի համաձայն, **ու**–ն կարող է հանդես գալ նաև որպես բաղաձայն **վ** հնչյունի գրային նշան: Որպես այդպիսին՝ **ու**–ն հանդես է գալիս բառամիջում՝ ձայնավորից առաջ՝ **Նուարդ, արժանապատուութիւն, աղուոր, առտուրնէ, կուուրտիլ, պատուէր, ազնուօրէն, զինուոր, թօթուէլ** և այլն: Բացառություններ են **Սիլվա, սորվիլ, ժողվել** բառերը. վերջին երկուսը գրվում են **վ**–ով, որովհետև առաջ են եկել նախնական **ժողովել, սովորիլ** բառերից:

9 Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 4–5:

Ծանոթություն 1: Այս շարքում երբեմն նշվում է նաև **ռահվիրայ** բառը, որը, սակայն, բացառություն կամ կանոնից շեղում չէ, քանի որ ստուգաբանորեն բառն իր մեջ ունի **վէր** արմատը, որն էլ ըստ կանոնի գրվում է **վ**-ով, այսպես՝ **ռահվիրայ** = **ռահ (ճամբայ) + վիր (վէր<վիրել–գրբ.՝ կտրել) + ալ:**

Ծանոթություն 2: **Մանուէլ, Սամուէլ** անուններում **ու**–ն պահպանում է ձայնավորի իր արժեքը. «**ու** կապակցութիւնը ուրիշ ձայնաւորէ մը առաջ կ'արտասանուի բաղաձայն «վ», ինչպէս՝ **Աստուած, ստուեր, նուէր, աղուոր** եւ այլն, բացի **Մանուէլ** եւ **Սամուէլ** անուններէն» (տե՛ս **Յ. Չոլաքեան**, Անդաստան, Ա., Հայէպ, 2009, էջ 27): Սակայն կարծիք կա, որ արդի գրական արևմտահայերենում արևելահայերենի ազդեցությամբ գործածական են դառնում **վ**-ով արտասանական ձևերը՝ **Ման[վ]էլ, Սամ[վ]էլ:**

Ու(վ) բաղաձայնը՝ իբրև միջամասնիկ, ներգործական բայերից կազմում է կրավորական բայեր՝ **սիրել–սիրուիլ, դատել–դատուիլ, սպաննել–սպաննուիլ** և այլն:

Ուի տառակապակցությունը արևմտահայերենում քերականական կազմությունների մեջ կարդացվում է և՛ **վի**, և՛ **ուի**. կրավորական բայերում կարդում ենք **վի՝ տարուիլ–տարվիլ, երգուիլ–երգվիլ** և այլն, իսկ սեռական–տրականի ձևերում՝ **ուի**, ինչպես՝ **կատուի, առուի, արուի, թթուի, հարսնացուի** և այլն: Միայն **լեզու** բառի սեռականի ձևն է գրականում կարդացվում **լեզվի**, թեև պոլսահայ բարբառում հնչում է **լեզուի:**

Արևելահայերենի անկատար դերբայում և դրանից կազմվող ժամանակածանցում **ու** կրավորական մասնիկը **ու** ձայնավորից առաջ արևմտահայերենում գրվում է և՛ **խօսում (ե), բերում (եր):**

Տողադարձի ժամանակ **ու(վ)** բաղաձայնից առաջ գաղտնավանկի **ը**–ն գրվում է, իսկ **ու**–ն վերածվում է **ւ**–ի, ինչպես՝ **Նուարդ–Նը–ւարդ, նուէր–նը–ւէր, առտուընէ–առտը–ւընէ, թուում–թը–ւում** և այլն: Այս փոփոխությունը (**ու>ւ**) իբրև կանոն կատարվում է գաղտնավանկի **ը**–ին հաջորդող դիրքում:

Ծանոթություն: Ու>Լ փոփոխությունը այլ դեպքերում ոմանք ընդունում են, ոմանք՝ ոչ, ինչպես՝ **բեր-ուիլ // բեր-իլ, Աստ-ուած // Աստ-ւած** և այլն: Երկրորդ՝ Լ-ով ձևերը հարմար են տեխնիկական առումով, օրինակ՝ պարբերական մամուլի լեզվում կիրառելիս: Առաջինները անխաթար են պահում բառի ուղղագրական պատկերը՝ **դատ-ուած, լեզ-ուի, յատ-ուած, Աստ-ուած**:

1.2. ԵՐԿԲԱՐԲԱՈՎԿԵՐՊՆԵՐԻ (ԵՐԿՅՆՉՅՈՒՆՆԵՐԻ) ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ երկբարբառներով հարուստ էր գրաբարը: Դրանք հնչյունական միավոր են, որ «գոյանում են մեկ վանկի սահմաններում երկու ձայնավորների (կամ ձայնավորի ու ձայնորդի) արտասանական սերտ զուգակցումով կամ համակցումով, որի մեջ դրանցից մեկը պահպանում է իր վանկարար հատկությունը. արտասանական սերտ համակցման բնույթն այնպիսին է, որ դժվար է լինում ընկալել, թե երբ ու որտեղ է վերջանում նախորդող տարրի արտաբերումը, և երբ ու որտեղ է սկսում հաջորդող տարրինը»¹⁰: Ըստ վանկարար կամ լիահունչ տարրի դիրքի՝ երկբարբառները լինում են բարձրացող՝ **եա, ուա, ուե, ուի, ուո**, և իջնող՝ **այ, ոյ, ալ, իւ**: Դրանց արտասանությունը հիմնականում հետևում է գրութայնը, քանի որ երկբարբառները սովորաբար գրվել են հնչյունական սկզբունքով: Սրանք հետգրաբարյան հայերենում, ըստ հայերենագիտական բառարանի տվյալների, կրել են արտասանական զգալի փոփոխություններ. վերածվել են՝ երկհնչյունների՝ **այ>այ, ոյ>ույ, եա>յա, իւ>յու** և այլն, կամ պարզ ձայնավորի՝ **ալ>օ**, և կամ բաղաձայնի ու ձայնավորի կապակցության՝ **ուե>վե** (արուեստ>արվեստ), **ուա>վա** (Նուարդ>Նվարդ)¹¹:

Արդի հայերենում հնչյունական այդ միավորը ընդունված է անվանել **երկհնչյուն**, սակայն «Հայերենագիտական բառարանը» եզրը համարում է անհաջող այն հիմնավորմամբ, որ «երկբարբառ բառը գրաբարում

10 Վ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 202:
11 Տե՛ս նույն տեղը:

նշանակում էր նաև «երկինջյուն»», մինչդեռ իրենց բնույթով երկինջյունները ինչ–որ չափով տարբերվում են երկբարբառներից¹²: Անդրադառնալով հարցին՝ Գևորգ Ջահուկյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Այն հանգամանքը, որ վանկի ընդհանուր կաղապարում **յ–ն** հանդիպում է ձայնավորին անմիջապես նախորդող և հաջորդող դիրքերում, խոսում է **յ–ի** և ձայնավորների կապակցությունների հատուկ բնույթի մասին. այսպիսի կապակցություններն ընդունված է կոչել «երկինջյուններ» (Գ. Սևակ), բայց այս տերմինը չի բացահայտում օբյեկտիվ էությունը: Ավելի ճիշտ կլիներ դրանք կոչել «երկբարբառակերպներ»¹³: Այս տեսակետը հետագայում ավելի ամրապնդվեց լեզվաբանության մեջ: Ժամանակակից արևելահայերենի հնչույթաբանական համակարգը քննելիս լեզվաբան Ամալյա Խաչատրյանը իր ուսումնասիրության «երկինջյո՞ւն, թե՞ երկբարբառ» ենթաբաժնում նույնպես այն համոզումն է արտահայտում, որ **ձայնավոր + յ** կամ **յ + ձայնավոր** զուգորդումները, որոնք ինն են (արևել.՝ **այ, յա, ոյ, յո, ույ, յու, էյ, յէ, յի**), թեև առաջացել են գրաբարյան երկբարբառներից, բայց չունեն նրանց հատուկ գործառությունը. «Ձայնաբանորեն **ձայնավոր + յ** կամ **յ + ձայնավոր** կապակցությունները,— գրում է նա,— դրսևորվում են որպես երկբարբառաման միավորներ, քանի որ դրանց հիմնական մասը կազմված է անցումներից»¹⁴: Անցում ասելով՝ հեղինակը հավանաբար նկատի ունի այն հանգամանքը, որ նշված կապակցությունների մի մասը արդի հայերենում հնչույթաբանորեն տարրալուծվում է տարբեր վանկերի (օր.՝ **Յա–յա–տան**), իսկ մյուս մասը պահպանում է մեկ ճիգով արտասանության հատկանիշը (օր.՝ **ձյուն / ձիւն**): Վերջինը ուսումնասիրողները միասնաբար ընդունում են որպես երկբարբառության հիմնական նախապայման¹⁵: Այս մոտեցմամբ ընդունելի է **երկբարբառակերպ** անվանումը:

Գրաբարի երկբարբառների արտասանական փոփոխությունները աշխարհաբարի երկու ճյուղերին՝ արևելահայերենին և արևմտահայերենին, փոխանցվել են զգալի տարբերություններով: Ստորև այդ տարբերությունները ներկայացվում են ըստ այն երկբարբառակերպների, որոնք

12 Տե՛ս նույն տեղը, էջ 204:

13 **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 86:

14 **Ա. Խաչատրյան**, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988, էջ 67:

15 Տե՛ս նույն տեղը, էջ 159–162:

գոյություն ունեն միայն արևմտահայերենում կամ, լինելով նաև արևելահայերենում, դրսևորում են գրության կամ արտասանության յուրահատկություններ: Դրանք են՝ **իւ, այ, ոյ, եա**:

Արևմտահայերենը հիմնականում պահպանում է գրաբարի երկբարբառների ավանդական ուղղագրությունը:

Իւ

Գոյություն ունի միայն արևմտահայերենում: Իբրև երկբարբառակերպ և տառակապակցություն (**ի + լ**)՝ այն դասական ուղղագրության հատկանիշներից է: Արևմտահայերենում, ինչպես գրաբարում, հանդիպում է բառի բոլոր դիրքերում, բայց երեք տարբեր արժեքներով՝ ձայնավոր, երկհնչյուն և ձայնավոր + բաղաձայն կապակցություն:

1. **իւ**–ը որպես ձայնավորի և երկհնչյունի գրային նշան:

ա) **իւ** տառակապակցությունը **ու** պարզ ձայնավորի (ֆրանս.՝ **u**) գրային նշանն է՝ **առիւծ, սօսափիւն, հիւսիս** և այլն:

Ծանոթություն: Արևմտահայերենում **իւ, էօ** տառակապակցությունները, երբ համապատասխանաբար հնչում են որպես ֆրանսերեն **u** (հիւր) և **eu** (էօժեն), դիտվում են որպես պարզ ձայնավոր. **հիւր** բառի մեջ կա երեք հնչյուն, չորս տառ՝ **հ–ի–ւ–ր, հիւթել** բառի մեջ՝ հինգ հնչյուն, վեց տառ՝ **հ–ի–ւ–թ–ե–ղ** և այլն:

բ) Բառասկզբում և **–ութիւն** ածանցի մեջ **իւ**–ը ունի քմային **ս** արտասանություն՝ **եու>ս**, ինչպես՝ **իւղ, իւրաքանչիւր, բարեկամութիւն, ուրախութիւն**:

2. **իւ**–ը որպես ձայնաւոր + բաղաձայն կապակցության գրային նշան:

ա) Գրվում է բառավերջում՝ **հովիւ, քիւ, թիւ, արծիւ, պատիւ, հաշիւ, շնորհիւ, առթիւ** և այլն: Բառաբարդման կամ ածանցման ժամանակ հնչյունափոխության հետևանքով վերածվում է **ու**–ի և արտասանվում է որպես **վ**՝ **թիւ–թուական, թուաբանութիւն, պատիւ–պատուական, արծիւ–արծուենի, հաշիւ–հաշուապահ** և այլն: Թեք ձևերում **ի–**ն չի

հնչյունափոխվում՝ **հովիւ–հովիւի, հովիւներ, արծիւ–արծիւի, արծիւներ, թիւ–թիւի, թիւեր** և այլն:

Ծանոթություն: Գործածական չէ **պատուի** ձևը. կանոնականը՝ **պատիւ>պատիւի, պատիւէ, պատիւով:** (Ունենք նաև հնացած **պատուոյ** ձևը՝ քարացած կապակցություններում՝ **պատուոյ պահակ, պատուոյ դատ, պատուոյ հարց, պատուոյ նշան,** կամ՝ **կ'երդնում պատուոյս վրայ.** կա նաև՝ **պատուի առ,** որ ունի **պատուէ՛** իմաստը):

բ) Բառամիջում գրվում է ձայնավորից առաջ՝ **դիւան, հիւանդ, Ջիւան** և այլն. տողադարձի ժամանակ **ի–ն՝** մնում, **ւ–ը** գնում է հաջորդ տող՝ **դիւան, հիւանդ:**

Այ

Այ երկբարբառակերպը գոյություն ունի և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում: Հանդիպում է բառի բոլոր դիրքերում՝ բառասկզբում՝ **այրել, այրական,** բառամիջում՝ **հայր, ծայն, կայծ,** և միավանկ (կամ միավանկ վերջնաբաղադրիչով) բառերի վերջում՝ **հայ, ծայ, վայ, բայ, մակբայ, դերբայ, պոլսահայ, արեւելահայ:**

Այ–ը արևմտահայերենում կարդացվում է իբրև պարզ **ա** ձայնավոր հետևյալ դեպքերում.

1) բազմավանկ բառերի վերջում՝ **ապագայ–ապագա, անզգայ–անզգա, ենթակայ–ենթակա, վկայ–վկա,** այդ թվում՝ առանձին հատուկ անունների սեռական–տրական հնացած կամ ժամանակակից հոլովածներում՝ **Սևանայ լիճ, Վանայ ծով, Մարութայ սարեր, Էջմիածնայ Աթոռ,** ինչպես նաև՝ **ա, ի** խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքի կազմության մեջ՝ **խօսեցայ, կը կարդայ, մոռցայ, պիտի հեռանայ, հաւնեցայ:**

2) Որոշ միավանկ բառերի վերջում՝ **կայ, տայ, լայ, գայ** և այլն:

Այսպիսով, վերը նշված դեպքերից բացի, ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում **ա** ձայնավորից հետո բառավերջում գրվում է **յ**, որը չի կարդացվում: Բառի աճման կամ փոփոխության ժամանակ այդ **յ**-ն կարդացվում է, ինչպես արևելահայերենում՝ **երեխայի, ենթակայով, արքայական, կայարան, վկայական** և այլն:

Արևմտահայերենում բառավերջում **յ** չի գրվում հետևյալ դեպքերում.

1. Հայերեն և փոխառյալ հին ու նոր հատուկ անձնանուններում և տեղանուններում՝ **Արա, Երզնկա, Մոսկուա, Սոնա, Եւա, Անանիա, Ատանա, Քանատա, Սպանիա, Իտալիա, Սիպերիա** և այլն (բացառ.՝ **Հրաչեայ**):
2. **Իա** վերջածանց ունեցող փոխառյալ բառերում՝ **լուբիա, քիմիա, մոմիա** և այլն:
3. Նորագույն փոխառություններում և բարբառային բառերում՝ **մամա, պապա, շոբուլա, դաուրմա, օփերա, նոթա, փարա** և այլն:
4. Տառերի և ձայնանիշերի անուններում՝ **դա, ձա, շա, չա, նաև՝ ֆա, լեա** և այլն:
5. **Ահա, հիմա, ապա, հապա** բառերում:
6. Ցուցական դերանուններից մի քանիսում՝ **սա, ասիկա, ատիկա, անիկա**:
7. Չայնարկություններում՝ **հա՛, քա՛, վա՛** և այլն:
8. **Ա** խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականում՝ **կարդա՛, գնա՛, խնդա՛, լողա՛, պոռա՛, լուա՛, խաղա՛**:

Ոյ

Սովորաբար հանդիպում է բառամիջում և բառավերջում: Արևմտահայերենում այն հանդես է գալիս և՛ որպես երկհնչյունների գրային նշան՝ **ոյ** և **ույ**, և՛ որպես պարզ **ո** ձայնավոր:

ա) **Ոյ**-ը բառամիջում՝ բաղաձայնից առաջ, **ույ** երկհնչյունի գրային նշանն է, ինչպես՝ **բոյն-բույն, լոյս-լույս, ողջոյն-ողջույն** և այլն: Չայ-

ճարկություններում գրվում և արտասանվում է **ոյ՝ վո՛ւյ, ո՛ւյ, հո՛ւյ** և այլն:

Բառաբարդման և ածանցման ժամանակ շեշտը կորցնելիս սովորաբար դառնում է **ու՛**՝ հիմքակազմության մեջ երբեմն տարբերվելով արևելահայերենից, ինչպես՝ **գոյն–գունաւոր, բոյն–բունաւեր** (արևել.՝ **բնաւեր**), **թոյլ–թուլամորթ, սոյր–սուրալ, կապոյտ–կապուտակ, բոյթ–բութանկիւն** (արևմտ.՝ նաև **բթանկիւն**): Մի շարք դեպքերում սղվում է՝ **կապոյտ–կապտորակ, սառոյց–սառցադաշտ**, դառնում է ը՝ **բոյթ–բըթամիտ, բըթամատ, սոյր–սըրարշաւ**, կամ մնում է անփոփոխ՝ **թոյլ–թոյլտուութիւն, թոյլատրել, առոյգ–առոյգանալ** և այլն:

բ) Բառասկզբում **ոյ** ունեն միայն **ոյժ** և **ոյծ** բառերը, որոնցից առաջինը հնացած է և այսօր սովորաբար գործածվում է **ուժ** տարբերակով՝ պայմանավորված ուղղախոսությամբ (նաև՝ **ներուժ, ուժանակ**, բայց՝ **աշխոյժ**), երկրորդը առանձին գործածություն չունի և հանդիպում է բաղադրություններում՝ **ուժանալ, ուժացում**:

գ) Բառավերջում **ոյ** երկբարբառակերպ ունեն միավանկ բառերը՝ որպես երկինջյունի գրային նշան: Տարբեր է բառամիջի արտասանությունից. կարդացվում է **ոյ՝ Նոյ, խոյ, գոյ**. շեշտափոխության ժամանակ չի հնչյունափոխվում՝ **Նոյեան Տապան, խոյանալ, գոյական** և այլն: Սա բնորոշ է նաև արևելահայերենին:

դ) Բազմավանկ բառերի վերջում **ոյ**–ը արևմտահայերենում կարդացվում է որպես **ո** պարզ ձայնավոր՝ **դշխոյ, ի վերջոյ, բրածոյ, պահածոյ** և այլն: Արևելահայերենը ուղղագրական փոփոխության արդյունքում, ինչպես հայտնի է, չի պահպանել այդ համը յ–ն:

եա, յեա, եայ

Այս տառակապակցությունները արևմտահայերենին բնորոշ տարրեր են: **եա**–ն գրվում է հայերեն բառերում՝ բաղաձայնից հետո. **յա** երկինջյունի գրային նշանն է՝ **ատեան–ատյան, առաւօտեան–առաւօտյան, Պետ-**

րոսեան–Պետրոսյան, կեանք–կյանք: Բառավերջուն հանդիպում է գրաբարից անցած մի քանի քարացած կազմություններում՝ **համարեա(ր), ողորմեա՛:**

Բառասկզբուն **եա** է գրվում միայն օտար բառերում և ծայնարկություններում՝ **եաման, եարալեան, եուրի, եա՛, եա՛հ, եար, եանիկեան, եաթադան** և այլն:

Յեա գրվում է ածանցավոր բառերում, որտեղ **յ** կիսաձայնը արմատի բաղադրիչ է. իբրև կանոն՝ կրկնակ **յ** չի արտասանվում՝ **երեկոյեան–երեկոյան, Յմայեակ–Յմայակ, Սարոյեան–Սարոյան, ախոյեան–ախոյան, բայց՝ հայեացք–հայ[յ]ացք, Նոյեան–Նո[յ]ան, դայեակ–դայ[յ]ակ:**

Եայ գրվում է բառավերջուն, բայց **յ–ն** չի արտասանվում՝ **եռօրեայ–եռօրյա, երկաթեայ–երկաթյա, ծովափնեայ–ծովափնյա, Հրաչեայ–Հրաչյա:**

1.3. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայ և արևելահայ գրական լեզուները այս ոլորտում ունեն գգալի տարբերություններ: Դրանք արտահայտվում են պայթական բաղաձայնների արտասանության, մասամբ գրության մեջ, առանձին բաղաձայնների ուղղագրության, ինչպես նաև փոխառյալ ու օտար բառերի տառադարձության և գրության մեջ:

Բաղաձայն հնչյունների համակարգում ըստ ձայնի և աղմուկի պարունակության երկու գրականներում էլ առանձնացվում են նույն խմբերը կամ տեսակները՝ **ձայնորդ, ձայնեղ և խուլ, խուլերն** էլ՝ **պարզ խուլեր և շնչեղ** (իրենց մեջ շունչ՝ հազազ ունեցող) **խուլեր:**

1. Երկու գրականների հնչույթային համակարգերի բուն տարբերությունները ի հայտ են գալիս արևելահայերենի եռաշարք և արևմտահայերենի երկշարք բաղաձայնական համակարգերում: Արևմտահայերենի կանոնական քերականության մեջ նշվում է, որ պայթական **խուլերն** արտա-

սանվում են որպես **ծայնեղներ**. **բ, գ, դ, ձ, ջ** տառերը **պ, կ, տ, ժ, ճ** հնչյունների գրային նշաններն են: Օրինակ՝ **պատ–բաղ, կատար–գաղար, տանել–դանել, ծաղիկ–ծաղիգ, ճամբայ–ջամփայ** և այլն: Պայթական **ծայնեղներն** արտասանվում են որպես **շնչեղ խուլեր**. **բ, գ, դ, ձ, ջ** տառերը հանդես են գալիս որպես **փ, ք, թ, ց, չ** հնչյունների գրային նշաններ: Օրինակ՝ **բարել–փարել, գիրք–քիրք, դիմացի–թիմացի, ձայն–ցայն, ջուր–չուր** և այլն:

Սա արևմտահայերենի հնչյունական համակարգի համար ընդհանրական, համապարփակ երևույթ է: Այսինքն՝ որպես կանոն բոլոր դիրքերում պայթական խուլերն արտահայտվում են ձայնեղների, իսկ պայթական ձայնեղները՝ խուլերի գրանշաններով: Այս երևույթը սկզբունքորեն չի անդրադառնում ուղղագրության վրա: «Այսօր... մեր ժողովրդի երկու գրական լեզուներում (արևելահայ և արևմտահայ) միանգամայն այլ արժեքներ են տրվում ձայնեղ և խուլ պայթականներն ու պայթաշփականներն արտահայտող տառանշաններին: Արևելյան գրական հայերենը համեմատաբար ավելի հարազատորեն է արտահայտում այդ տառերին տրված նախնական հնչյունական արժեքները (առավելապես բառասկզբի դիրքում), որին հակառակ՝ արևմտահայ գրական լեզվում դրանց տրվում են այլ հնչյունական արժեքներ: Սակայն, ինչպես հայտնի է, երկու դեպքում էլ գրության ձևը մնում է նույնը՝ ավանդականը, և դրանք (գրության ձևերը) արտաքնապես ոչնչով չեն մատնում իրենց ներքին տարբերությունները»¹⁶:

Արևելահայերենում ձայնեղ պայթականների մասնակի շնչեղ խլացում է նկատվում միայն բառամիջում և բառավերջում, ինչպես՝ **բարձր–բարցր, դեղձ–դեղց, կարգ–կարք, հագուստ–հաքուստ, խուրձ–խուրց, ջարդել–ջարթել, սրբել–սրփել**:

Ծանոթություն: Գրական արևելահայերենի համար բարբառային և գրական նորմի տեսակետից սխալ է մի շարք բառերում պայթականների անհարկի խլացումը՝ **արցան, զարքացում, նվաթել, արցանագրություն, արթելք, քթնել, հա-**

16 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա հատոր, Երևան, 1972, էջ 55:

չողութիւն, կամ անհարկի ձայնեղացումը՝ **Եգորոդ, Աբարան, որդեղ, դբրոց, գործ**:

Արևմտահայերենին հատուկ այս երևույթը հանգեցրել է նրան, որ այստեղ պայթականներն ունեն ոչ թե եռաստիճան, ինչպես արևելահայերենում, այլ երկաստիճան խլազուրկ համակարգ: Պատկերն այսպիսին է.

արևելահայերեն	արևմտահայերեն
բ պ փ	բ փ
գ կ ք	գ ք
դ տ թ	դ թ
ծ ծ ց	ծ ց
ջ ճ չ	ջ չ

Փաստորեն արևմտահայերենում պարզ խուլերի շարքը վերացել է: Այստեղ արևելահայերենի **պ, կ, տ, ծ, ճ** գրանշաններով արտահայտված հնչյուններ գոյություն չունեն: Սա արևմտահայերենում առաջացնում է ուղղագրական լուրջ դժվարություններ:

Երրորդ շարքը՝ շնչեղ խուլերը, երկու գրականներում էլ արտասանվում են նույնությամբ՝ իբրև շնչեղ խուլեր:

Վերջին շրջանում Հայաստան–Սփյուռք հարաբերությունների աշխուժացումը, փոխադարձ շփումները, հավանաբար նաև լեզվի բնականոն զարգացումը արևմտահայ բանավոր–խոսակցական լեզվում նկատելի կերպով նվազեցրել են ձայնեղ–խուլ հակադրությունը կամ փոխանցումը, և հաճախ դժվար է լինում սփյուռքահայի կենդանի խոսքում այսօր արձանագրել ձայնեղների անպայման և հստակ շնչեղ խլացում և հակառակը՝ խուլերի ձայնեղացում: Օրինակ, ըստ հետազոտողի, հունահայ գաղութում ներկա սերունդը հունարենի ազդեցությամբ սկսել է **պ, կ, տ** և այլ գրույթները հնչեցել նաև իբրև **պ, կ, տ** պարզ խուլեր. «Ստացվում է երկվություն: Երկրորդական վարժարաններում, գրական մշակման ենթարկված խոսքում կանոնական է (ուստի և հանձնարարելի) պարզ

խուլ գրույթների ձայնեղացած հնչունը: Խոսակցական մակարդակում պարզ խուլերը հստակորեն տարբերակվում են»¹⁷: Խնդրին հանգամանորեն անդրադարձել է Ռուբեն Սաքապետոյանը՝ հաստատելով շրջանառվող այն տեսակետը, ըստ որի՝ նշված տեղաշարժ-տեղափոխության կանոնը միանշանակ չի գործում արևմտահայերենում, և որ այդ հարցում դեր են կատարում ոչ միայն արտասանական անհատական հատկանիշները կամ տվյալ գաղթօջախում տվյալ գերակա լեզվի ազդեցությունը, այլև լեզվական երևույթներ՝ կախված բառի մեջ հնչյունի ունեցած դիրքից. «Արևմտահայերենում,— գրում է նա,— պարզ խուլերի առկայությունը արտասանության պլանում ուսումնասիրողները կապում են շրջապատող լեզուների ազդեցության հետ, որը բնական է, սակայն ոչ համակարգային: Այն կարող է ընդգրկել հնչյունական որոշակի դիրքեր: Մեր քննության արդյունքում պարզել ենք, որ պարզ խուլերի առկայությունը արևմտահայերենում հաճախ փոխազդեցական հնչյունափոխության հետևանք է: Այսպես, **ախպար** բառում **պ** գրույթը ակնհայտորեն ունի **պ** հնչուն (սպասելի **բ**–ի փոխարեն), քանի որ խուլ **խ**–ից հետո չի կարող արտասանվել ձայնեղ **բ** հնչյունը (այլընտրանքը կարող է լինել **աղբար** հնչունը): Նույնը վերաբերում է **ղբ** հնչյունախումբ ունեցող մյուս բառերին (**եղբայր, աղբյուր, ողբ, ողբալ, աղբ** և այլն): Բառավերջի թույլ դիրքերում ևս առնմանման և տարնմանման հետևանքով պարզ խուլ հնչյունների գրությունը և արտասանությունը համընկնում են, ինչպես օրինակ, **Յայաստան, դժբախտ, հարուստ, միշտ, կորուստ, փախուստ** և բազմաթիվ նման բառերում»¹⁸:

Պետք է նկատել, որ վերջին դեպքում՝ բառավերջի թույլ դիրքում խուլ հնչյունների ոչ հստակ ձայնեղ արտասանությունը պոլսահայ բարբառի բնորոշ հատկանիշներից է, ինչպես իրավացիորեն նկատել է Յ. Աճառյանը: «Խուլ հնչունը,— գրում է նա,— երևան է գալիս հատկապես **խ, ս, շ** և **փ, ք, թ** կամ այլ խուլ ձայներից հետո, և կամ երբ բաղաձայնը գտնվում է մի ուրիշ բաղաձայնից առաջ. ինչպես՝ **թուղթ–թուխտ, հաստ–հաստ, մտանել–մըտնալ, հատանիլ–հատնիլ** «սպառիլ, վերջանալ» և այլն:

17 Տե՛ս Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, էջ 25–27:

18 Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 11–12:

Պոլսեցիին այս բառերը հնչում է խուլ **տ** ծայնով, բայց հենց որ կարիք է լինում հեգեղու կամ վանկերը բաժանելու, նույն **տ**–ն դառնում է **դ**, և վերի բառերը հնչում են առանց խտրության՝ **թուխտը** կամ **թուխդը** և այլն, **հաստ** կամ **հասդ**, **մտնել** կամ **մըդնալ**, **հատնիլ** կամ **հադնիլ** և այլն»¹⁹: Հավանաբար բառավերջի թույլ դիրքում պայթական խուլերի ոչ հստակ ծայնեղ արտասանությունը բնորոշ է եղել գրական արևմտահայերենին ձևավորման շրջանից, պարզապես արտասանական այդ իրողությունը չի արձանագրվել կանոնական քերականության մեջ:

Բաղաձայնական համակարգի այս առանձնահատկությունը՝ ձայնեղ–խուլ տեղաշարժը, արևմտահայերենում պատճառ է դառնում համահունչ համանունների նոր շերտի առաջացման: Մի շարք բառեր, որոնք հիմնականում բնիկ հայերեն բառեր են, պահպանելով իրենց ավանդական գրությունը, արտասանությամբ նույնանում են այլ բառերի հետ, ինչպես՝ **անծաւ–անցաւ, բերդ–փերթ, գայլ–քայլ, գան–քան, գերել–քերել, գիրգ–գիրք, գող–քող, դաս–թաս, դաւ–թաւ դադար–թաթար // թաթառ, դոյլ–թոյլ, ձախ–ցախ, ձող–ցող** և այլն:

Հայ մատենագրության հնագույն հուշարձանների հնչյունական կազմի ուսումնասիրությունը երևան է հանում շատ ուշագրավ մի փաստ: Պարզվում է, որ հին հայերենը մինչև թուրքերենի հնարավոր ազդեցությունների շրջանը (սկսած 14–րդ դարից) այդպիսի արտասանական յուրահատկություններ արդեն ուներ իր մեջ: Դեռ 5–11–րդ դարերի հայ մատենագրության մեջ՝ ձեռագրերի հիշատակարանների լեզվում, հնչյունական այս տեղաշարժը արդեն նշմարվում է. այն արտահայտվում է մի շարք բառերի գրության մեջ, ինչպես՝ **յարկանտէ, մանգունք, ընգերանցն, դաքաղին, երկրպաքեցաւ, քահակցի (=գահակցի), Սարքսի** և այլն²⁰:

Ձայնեղների մասնակի խլացումը հատուկ է նաև արևելահայերենի հնչյունական համակարգին, որի ձևավորման վրա թուրքերենի ազդեցությունը զգալի չի եղել: Պիտի ենթադրել, որ նշված հնչյունական իրո-

19 **Հ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 11:
20 Տե՛ս **Գ. Զահուկյան**, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Երևան, 1997, էջ 12:

ղությունը արդյունք է հայոց լեզվի բնականոն զարգացման, և այն գրական արևմտահայերենին է փոխանցվել արևմտահայ բարբառներից ու միջին հայերենից: Թուրքերենում օրինաչափության առկայությունը ընդամենը նպաստել է այս երևույթի ուժեղացմանը: Չայնեդ-խուլ տեղաշարժ-տեղափոխությունը պոլսահայ բարբառի բաղաձայնական արտասանական համակարգի ամենաբնորոշ հատկանիշն է: «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության մեջ Յրաչյա Աճառյանը այդ մասին գրում է. «Բոլորովին այլ է գրական արտասանությունը, որ պետք է միանգամ ընդ միշտ ի նկատի ունենալ: Պոլսեցի գրականագետը երկու տեսակ արտասանություն ունի. **բուն ժողովրդական** կամ **բարբառային** արտասանություն, որ գործ է ածում տանը, փողոցում, հասարակ խոսակցության միջոցին, և **դպրոցական** կամ **գրական** արտասանություն, որ գործ է ածում դպրոցում, որևէ գիրք կարդալու ժամանակ կամ գրական անձերի հետ խոսելիս: Տարբերությունը կայանում է **բ, գ, դ, ձ, ջ** տառերի արտասանության մեջ, որոնք բարբառային ձևով հնչվում են թրթռուն (կամ խուլ), իսկ գրական ձևով թավ (**փ, ք, ք, ց, չ**): Այսպես միևնույն **դուռը բաց** նախադասությունը եթե ուղղված է մի հասարակ դժնապանի, արտասանվում է **դուռը բաց** կամ **տուռը պաց**, իսկ երբ ուղղված է մի գրական անձի, արտասանվում է **թուռը փաց**: Ավելացնենք սակայն թե այս թավերը բացարձակապես նույն չեն Կովկասյան թավերի հետ և շնչի քանակության կողմից նրանցից մի քիչ պակաս են: Այս պատճառով էլ պոլսեցին, որ եվրոպական **բ, կ, տ** տառադարձում է իրոք **փ, ք, ք**, առանց այլևայլի կարող է տառադարձնել նաև **բ, գ, դ**, որ և ավելի հարմար է համարում շնչի տկարության պատճառով: Այսպես՝ **Paris** գրվում է անխտիր թե՛ **Փարիզ** և թե՛ **Բարիզ**, բայց ոչ բնավ **Պարիզ**, որ ըստ Պոլսեցոց պիտի հնչվեր **Bariz**»²¹:

Պետք է ավելացնել նաև, որ Պոլսի բարբառում «սովորական բառերի» արտասանության ժամանակ, ինչպես նշում է Աճառյանը, բառասկզբում թրթռուն բաղաձայնները (ձայնեղները՝ **բ, գ, դ, ձ, ջ**) մնում են ձայնեղ (**բակ-բագ, բանալ-բանալ, գարի-գարի, դանակ-դանագ, ջուր-ջուր, ձայն-ձայն**), բառամիջում և բառավերջում դառնում են թավ (խուլ՝ **փ, ք, ք, ց, չ**՝ **բանբասանք-փամփասանք, ձգել-ցքել, յաջողել-յաջո-**

21 **Գ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 11–12:

ղէլ, ձեռագործ–ցեռաքօրծ): Իսկ գրական–գրքային բառերում և այսպես կոչված հոգևոր–կրոնական ոլորտին վերաբերող բառապաշարում միշտ դառնում են խուլ (**բազմիլ–փազմիլ, բարի–փարի, գիտնական–քիղնագան, դաս–թաս, ձայնաւոր–ցայնավօր, բուրվառ–փուրվառ, աբեղայ–ափեղա, գաւիթ–քաւիթ**): Ըստ պոլսահայ բարբառի բառարանի, որ ներկայացնում է Աճառյանը՝ **պ, կ, տ, ծ, ճ** խուլերը բառասկզբում միշտ հնչում են իբրև ձայնեղներ՝ **կաթ–զաթ, կակուղ–զագուղ, ծածուկ–ծածուգ, ճանաչել–ջաշնալ** (հանդիպում են խիստ աննշան բացառություններ՝ **ծնծղայ–ցնծղա, կենդանութիւն–կենթանութիւն**), իսկ բառամիջում և բառավերջում, որպես կանոն, դառնում են **բ, գ, դ, ծ, ց՝ ապուր–աթուր, ցածանալ–ցածնալ, խիղճ–խիղջ, տեսակ–ղէսագ**²²: Բայց մի շարք բառերում բառամիջի և բառավերջի դիրքերում **պ, կ, տ, ծ, ճ** հնչյունները արտասանվում են իրենց գրային նշաններին համապատասխան, ինչպես՝ **մատնել–մատնէլ, հաստատ–հաստադ, հասկանալ–հասկնալ, կսկիծ–զըսկիծ** և այլն²³:

Գրական արևմտահայերենում պայթական բաղաձայնների արտասանական այս յուրահատկությունը պայմանավորել է բաղաձայնական **բ–փ, գ–ք, դ–թ, ծ–ց** և **ջ–չ** շարքերի ուղղագրական որոշ տարբերություններ արևելահայերենից: Մի խումբ բառերի գրությունը տարբեր է արևելահայերենից, ինչպես՝ **Բաբգէն, բացագանչել, գծուծ, գունտ, զանկապան, լինտ, խենդ, կղմիտոր, հաջել, հունտ, ճամբել, ճողբել, ճամբորդ, ճշղել, Միսաք, պէխ, տժգոյն, փափաք** և այլն: Օրինակ՝ «Չաջող շունը խածնող չ'ըլլար», կամ՝ «Չեն կրնար բացատրել՝ թէ ինչո՛ւ շուները չեն **հաջեր**» (Դ. Վարուժան), «Ատենօք **հունտ** մը յոյսի՛ հոգիիս մէջ կը բանար Ուրախութեան ծառ մը մեծ» (Վ. Թեքեյան), «Պիտի ծորին,— հիւսելով **դրասանքներ** երփներփեան» (Վ. Շուշանյան), «Այսուհետեւ դուն անշուշտ **ճամբուդ** վրայ շարունակ Պիտի գտնես ծաղիկներ բազմաբուրեան, բազմերանգ» (Մուշեղ Իշխան), «Կասկած չկար, Սուլեյմանի գիւտը **ճիշդ** էր» (Ա. Հայկազ), «Ի՞նչպէս կը համարձակուի հայ քահանայ մը **վնճտել** ազգին տունէն, աստուծոյ տունէն» (Վ. Մալյան), «Վեհապետը զարմանքով կը կատարէ անոր **փափաքը**», «Չեռք ձեռքի տուած շարու-

22 Տե՛ս նույն տեղը, էջ 32–90:

23 Տե՛ս նույն տեղը, էջ 183–233:

նակ կ'աշխատին նորութիւնները **փճացնելու**» («ժամանակ»), «...Կեանքը կ'երեւի **գծուծ**, պզտիկ, անհորիզոն» (Վ. Շուշանյան):

Դրանց մի մասը արևմտահայերենում ունի երկակի գրութիւն՝ **դրասանգ // դրասանք, թաքուն // թագուն, գերդ // գերթ, խենդ // խենթ, կարկաչ // կարկաջ, հունտ // հունդ, սնտուկ // սնդուկ, փափաք // փափագ** և այլն, ինչպես՝ «Սառէն լուծուած կը **կարկաջեն** առուակներ» (Դ. Վարուժան), «Չորցաւ աղբիւրը սրտիս, **քաղցրակարկաչ** այս սրտին» (Վ. Թեքեյան), «Սպասաւորներ, ճերմակ գիշերազգեստներով՝ փութացին **սնդուկները**, պառուներն ու ծրարները տանիլ վեր, մաքուր յարկաբաժին մը», «Ամէն կիրակի այսպէս **սնդուկը** գրկած է մինչեւ ետինք», «...Իր խոշոր ու պղտոր վրձինները փոխնիփոխ կը զարնէ **սնտուկի** մը» (Յ. Օշական), «...Ինչպէս նաեւ ջրհանաւոր գունագեղ **սնտուկէ** մը, որ կը տարուէր հրդեհին վայրը» (Ա. Գոչունյան), «Այս փոքրիկ քաղաքին մէջ ծնած Սարոյեանի գրական համբաւը այսօր այլեւս կը սաւառնի **երկրագունդի** բոլոր հորիզոններուն վրայ» (Վահե Հայկ), «**Երկրագունտին** կը նայի ու կը մարի խնդալէն» (Զահրատ):

Վերջին շրջանում երկակի գրութիւն ունեցող մի շարք բառերի ուղղագրութեան մեջ արձանագրվում է միօրինակացման միտում, ինչպես՝ **գունտ>գունդ, զնտան>զնդան, թանգ>թանկ, խենդ>խենթ, գամբ>գամբ, խնծոր>խնծոր, ծղրիտ // ծղրիդ>ծղրիթ, կարկաջ>կարկաչ, փափագ>փափաք** և այլն: Այս օրինակներում, եթե հաշվի չառնենք առանձին բացառություններ, դժվար չէ նկատել արևելահայերենի ազդեցությունը: Ցանկալի է՝ բոլոր այն դեպքերում, երբ զուգաձևություններից ընտրության հնարավորություն կա, նախապատվությունը տալ արևելահայերենին մոտ կամ համընկնող տարբերակներին, քանի որ դա ևս մի քայլ է իրար մոտեցնելու մեր երկու գրականները:

2. Զգալի տարբերություններ կան մի քանի բաղաձայնների գրութեան մեջ՝ պայմանավորված հին և նոր ուղղագրութեան տարբերություններով: Նկատի ունենք **հ-յ, վ-ւ** տառերի գրությունը:

Յ – յ

Արևելահայերենում այս տառերի այբբենական արժեքի և ուղղագրական իրացման որևէ անհամապատասխանություն չկա: Մինչդեռ արևմտահայերենում պատկերը էապես այլ է: Բառասկզբում **յ**-ի և **հ**-ի գրության համար ավարտուն սկզբունքներ արևմտահայերենում չկան, և հիշողությանը պետք է յուրացնել այդ բառերի մեծ մասի ուղղագրությունը:

Բառասկզբում ծայնավորից առաջ մի շարք բառերում արտասանվում է **հ**, գրվում է **յ**:

Այդ բառերից են՝ **յազենալ, յագուրդ, յախճապակի, յախումն, յակինթ, յաղթել, յաճախ, յամառ, յամր** (դանդաղ), **յանդ, յանդուզն, յանկարծ, յանձնել, յանցանք, յաջող, յառաջ, յատակ, յատուկ, յարաբերութիւն, յարադիր, յարգանք, յարդ, յարդարել, յարկ** (պետք), **յարմար, յաւիտեան, յափշտակել, յեղափոխել, յետադաս, յիշել, յիմար, յոգնակի, յոյզ, յոյս, յոյն, յորդ, յորդորել, յորձանք, յորջորջել, յուշել, յուռթի, յօժար, յօդուած, յօրինել, յօրանջել, յօնք:**

Յ-ով գրվող գործածական բառերից են՝ **Յայաստան, հազնիլ, հազ, հազար, հազիւ, հալածել, հակում, հաղորդել, հաճելի, հաճոյք, համ, համբերել, համբոյր, համեստ, հայելի, հայր, հայցական, հայցել, հանդուրժել, հանել, հարցնել, հարս, հաց, հեռու, հեծնել, հեղուկ, հեշտ, հիմնել, հիւանդ, հոգի, հոգալ, հոլով, հողմ, հող, հոսիլ, հով, հունձք, ինչպես նաև համ– և հակ– նախածանց ունեցող բառերը՝ համադաս, համագումար, համաձայն, հակառակ, հակասել, հակոտնեայ, հակամարտ և այլն:**

Բառաբարդման կամ ածանցման ժամանակ գրությունը պահպանվում է՝ **կնքահայր, արեւելահայ, գլխահակ, սիրայօժար, բարեյոյս, անյաջող, բարձրայարկ** և այլն:

Յ և **յ** բաղաձայնների ուղղագրությունը հիշելու համար կան որոշ օգնող կանոններ.

ա) **Յ**–ն գրվում է օտար և փոխառյալ բառերի սկզբում և համապատասխանում է օտար լեզուների **Y** և **yi** տառերին, ինչպես՝ **Յակոբ, Յովսէփ, յակինթ, Յուդա, Յիսուս, Յովհաննէս, Յունիս, յրելէան, Յունաստան, Յասմիկ** և այլն: Երբեմն նաև՝ **Յերուսալիմ** (Yerusalim), **Եակոբսոն** (Yacobson), **Յասոն** (Yason) և այլն:

բ) Գրաբարի **ի** նախդիրը ձայնավորով սկսվող բառերից առաջ դառնում է **յ** և գրվում է բառի հետ միասին. կարդացվում է **հ՝ ի>յ>(ի)**. **յ**–ն դրանցում նախանասնիկ է՝ **ի առաջ>(յ)առաջ**, նմանապես՝ **(յ)ուշարար, (յ)անձնաժողով, (յ)աւելում, (յ)ետադաս, (յ)արգելի, (յ)ետո, (յ)օրինուածք, (յ) ուղարկաւորութիւն, (յ)ափշտակել** և այլն:

գ) **Ղ**–ից առաջ միշտ գրվում է **յ՝ յղել, յղի, յղփանալ, յղացում, յղկել**, նաև՝ **յստակ** և դրանով բաղադրված բառերը՝ **յստակութիւն, յստակաճալ**:

Մյուս բաղաձայններից առաջ գրվում է **հ՝ հլու, հպատակիլ, հնդիկ, հպիլ, հպարտ, հմայել, հմուտ, հնարել, հրաման, հրապարակ, հրաժարիլ, հսկայ** և այլն:

դ) Տասնավոր **հինգ** թվականը գրվում է **հի (յ)** տառով՝ **յիսուն** (հավանաբար այն հիմքով, որ **հինգ** բառի արմատի տարբերակն է **յի**–ն):

(Բառավերջում **յ**–ի գրության մասին տես էջ 26–27):

Վ և ւ

Արևելահայերենում **վ** տառի (**ւ**–ը բացակայում է) գրությունը դժվարությամբ չունի: Առանձին բառերում, արևմտահայերենում նույնպես, **վ–ֆ** գրության շփոթություն է առաջանում՝ կապված դրանց մոտ արտասանության հետ՝ **հարավ, ավտո, նավթ** և այլն: Արևմտահայերենում **վ** և **ւ** տառերի գրության որոշ սկզբունքներ կան:

ա) Բառասկզբում՝

* **վ** արտասանվելիս միշտ գրվում է **վ՝ վարդ, վազել, վտակ, վեճ**:

* **վո** լսվելիս միշտ գրվում է **ո**. բացառություն է **վոհմակ** բառը:

բ) Երկու ձայնավորների միջև միշտ գրվում է **ւ՝ աւագ, հաւասար, հաւաք, բաւել, բարձրաւանդակ, նաւակ:**

գ) Ո տառից հետո միշտ գրվում է **վ՝ գովել, ծով, հոլով, Յովհաննէս:** Բարդացման կամ ածանցման դեպքում այդ գրությունը պահպանվում է՝ **գովաբանել ջատագովել, վարդավառ, հարթավայր, մտավախութիւն, նաւավար, անվախ:**

Մնացած բոլոր դեպքերում բառամիջում և բառավերջում գրվում է **ւ՝ բարեւել, հարաւ, լաւ, թիւ, հիւանդ, անիւ:**

Ծանոթություն: Ի–ով գրվող **ծիւ, ծիւ** կամ **ծիւ–ծիւ, ճիւ–ճիւ** և նման բնածայնական բառերը որպէս հիմքեր բառակազմությանը մասնակցելու դեպքում սովորաբար գրվում են **վ–ով՝ ճվճվալ, ճվվալ, նվնվալ, նվվալ, նվվոց, ծվծվուն** և այլն: Հանձնարարելի չեն **ւ–ով, ինչպէս նաև ու–ով** և գաղտնավանկով ձևերը՝ **ճւճալ, նւալ, սլուըլալ, սլուըլոց**²⁴:

Ամփոփելով բաղաձայնների գրության և արտասանության վերաբերյալ ասվածը՝ ավելացնենք, որ արևմտահայերենում բառի գրությունը երբեմն հարմարեցվում է բառի ճիշտ կամ ներդաշնակ արտասանությանը: Սա բխում է արևմտահայ գրական լեզվի զարգացման մեկ այլ յուրահատկությունից, այն է՝ հնարավորին չափ բարեհունչ արտասանել բառը և չաղավաղել նրա պատկերը: Բացի արևմտահայերենի բաղաձայնական համակարգում առկա տեղաշարժ–տեղափոխությունից՝ հավանաբար նաև սա է պատճառներից մեկը, որ հայերեն մի շարք բառերի գրության մեջ արևմտահայերենը և արևելահայերենը երևան են հանում տարբերություններ: Օրինակ՝ **բամբակ, բոբիկ, բարդի, գանգ, գունդ, խնջոյք, ճիշտ** և մի շարք այլ բառեր արևմտահայերենում գրական նորմի տեսակետից ավելի բարեհունչ են արտասանվում, երբ ունեն փոփոխված՝ հնչողությանը հարմարեցված գրություն, ինչպէս՝ **բամպակ (փամբագ), բոպիկ (փոբիգ), բարտի (փարդի), գանկ (քանգ), խնճոյք (խնջոյք),**

24 Ըստ **Յ. Չոլաքյանի** ընդունված են **ւ–ով** ձևերը՝ **ճւճալ, ճւալ** և այլն, բայց մեր հարցումները և դիտարկումները խոսում են հոգուտ **վ–ով** ձևերի: Ստ. Մալխասյանցը նույնպէս հանձնարարում է **վ–ով** գրությունը՝ **ճվծվալ, ճվծվոց, ճվճվալ, ճվճվուն** և այլն (տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, Երևան, հ. II, III, 1944):

Ճիշդ (ջիշթ) և այլն: Հակառակ դեպքում կունենայինք այդ բառերի ոչ այնքան բարեհունչ արտասանական տարբերակներ՝ **փամփազ** (<բամբակ), **փոփիզ** (<բոբիկ), **ջիշտ** (<ճիշտ), **փարթի** (<բարդի) և այլն: Արևելահայերենում բաղաձայնների արտասանությունը օրինականացվել է համապատասխան որոշումներով²⁵:

1.4. ՓՈՒՆԱՌՅԱԼ ԵՎ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԳՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ (ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ) ԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արևելահայերենի համար նոր ժամանակներում փոխառությունների հիմնական աղբյուր է եղել ռուսերենը, կամ այլ լեզուներից փոխառությունները կատարվել են ռուսերենի միջնորդությամբ: Ռուսերենի արտասանական և գրադարձման յուրահատկությունները էապես ազդել են արևելահայերենում փոխառյալ բառերի արտասանության վրա: Այդ ազդեցության արդյունքում ձևավորված տառադարձումները հաճախ հեռու են փոխատու լեզվի արտասանական յուրահատկություններից: Օտար բառերի (մասնավորապես անգլերեն բառերի և անգլերենում գործածվող հատուկ անունների) տառադարձությունը փոխառության աղբյուրի արտասանական առանձնահատկություններին ավելի մոտեցնելու նպատակով մի շարք բառերի համար ՀՀ տերմինաբանական կոմիտեն հանձնարարում է որոշակի կանոններ: Դրանցից մեկը, օրինակ, հետևյալն է. անգլերեն **p, t, k**–ն և **k** արտասանվող **c**–ն տառադարձել բառասկզբում **փ, թ, ք**, մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**, այսպես՝ **Փիտ** (Pitt), **Քարտեր** (Carter), **միստեր** (mister) և այլն²⁶: Ըստ տառադարձման նոր կանոնի՝ ռուսերենի միջնորդությամբ փոխառված **test** բառը, որ մինչև վերջերս արևելահայերենում գրադարձվում էր **տեստ** (ռուս.՝ **тест**), այժմ գրադարձվում է **թեստ**: Վերջինս ակնհայտորեն մոտ է բառի բնագրային արտասանությանը, թեև առավել հարազատ արտասանությունը (համապատասխան գրությամբ) կլիներ **թեսթ**–ը: Տառադարձության նշված կանոնները արևելահայերենում անգլերեն բառերի արտասանությունը ավելի

25 Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 1988, «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 2006:

26 Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 2006, էջ 178–181:

են մոտեցնում փոխառության աղբյուրի արտասանական առանձնահատկություններին:

Ծանոթություն: ՀՀ տերմինաբանական կոմիտեի՝ անգլերեն բառերի հայերեն տառադարձության մասին որոշումը արդեն լայն տարածում գտած բառերի և հատուկ անունների ավանդական ուղղագրությունը թողնում է անփոփոխ, ինչպես՝ **կոնգրես, Տվեն, Վաշինգտոն, Թրումեն, Վալտեր Սկոտ, Մանչեստր** և այլն (տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 2006, էջ 178–181):

Արևմտահայերենը հիմնականում հետևում է ֆրանսերենի գրադարձությանը կամ պարզապես ձգտում է հավատարիմ մնալու բնագրի արտասանությանը, այսինքն՝ գրադարձության ժամանակ պահպանում է փոխատու լեզվի պայթական բաղաձայնական համակարգը: Ֆրանսերենի հետևողությամբ արևմտահայերենը ավելի հարագատ է մնում բնագրին: Վերջին շրջանում գնալով մեծանում է նաև անգլերենի ազդեցությունը: Այդ ազդեցությունների արդյունքում երկու գրականներում ստեղծվում են միևնույն բառի արտասանական տարբերակներ: Օրինակ (սկզբում տրվում է արևելահայերեն տարբերակը)՝ **ակացիա (акация)** – **աքասիա** (ֆր.՝ agacia), **ալկոհոլ** (ռուս.՝ алкоголь) – **ալքոլ** (ֆր.՝ alcool), **տոննա** (ռուս.՝ тонна) – **թոն** (ֆր.՝ ton), **ռոմանտիզմ** (ռուս.՝ романтизм) – **ռոմանթիզմ** (ֆր.՝ romantizme = վիպականութիւն), **Ալբերտ** (գերմ.՝ Albert, ռուս.՝ Альберт) – **Ալպեր / Ալբեռ** (ֆր.՝ Albert. վերջին **t**–ն չի կարդացվում) և այլն²⁷:

Բնագրային օրինակներ՝ «Ետ կը դառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ, **Կարաւանին** հետ աստեղց ասոնք կուզան վերստին» (Վ. Թեքեյան), «Որովհետեւ այդ **ալքոլը** միայն մարմինը չէ, որ կը փտեցնէ, այլև հոգին» (Ռ. Սևակ), «Չէի ճանչնար տակաւին **նարտ** զբաղած պատուարժան անձերուն տրամադրութիւններն ու կարծիքները», «Արշակ Զօպանեանի Օտեօնի հրապարակի այդ սենեակը ժամադրավայր մըն էր բոլոր հայ **պոհեմներուն**, որոնք գրեթէ ամէն օր հոնտեղ կը հաւաքուէին խօսե-

27 Տե՛ս նաև **Ռ. Սաքապետոյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 22–26:

լու եւ երբեմն ալ սուրճ խմելու համար, եթէ կարելիութիւն ըլլար խահուէ, շաքար ու **լամպարը** վառելու համար **ալքոլ** ճարել» (Ե. Օտյան), «...ժողովուրդին **մոթֆֆներն** են, որ օրինակուեցան միայն» (Յ. Օշական), «Վեռհառնի պէս երկարածիգ է իր մտածումով, **սանթիմանթալ** է յաճախ՝ առանց **տինամիք** ըլլալէ դադրելու» (Շ. Շահնուր), «Առանց տեսնելու նաեւ **տռամը** նման հայրենասիրութեան մը, միմակութիւնը, խորթ մնալու ցաւը» (Ն. Սարաֆյան), «Ես վերն էի, երբ Եգիպտոսի **մոմիաներուն** մէջ ծայն մը առի» (Համաստեղ):

Օտար բառերի տառադարձության և արտասանության վերաբերյալ ուշագրավ բացատրություններ է տալիս Հրաչյա Աճառյանը. «Բելգիայի մայրաքաղաքը,— գրում է նա,— ֆրանսերեն գրությամբ գրվում է **Bruxelles**, որ ըստ օրինի պիտի հնչվեր **Բրյուքսել**, բայց հնչվում է **Բրյուսել**: Դրա համար էլ արևմտահայերը գրում են **Պրիքսել**, իսկ արևելահայերը գրում են **Բրյուսել** (խրատվելով ռուսերեն **Брюссель** ձևից): ...**ճապոնիա** երկրանունը չինական ծագում ունի (ճապոնացիք իրենց երկիրը կոչում են **Նիպպոն**): Չինարենում այդ բառը կազմված է **ja** «արեգակ, արև» + **pən** «ելնել, ելք, ծագել», ուստի նշանակում է «Արևելք» (այսպես է կոչված, քանի որ այդ երկիրը գտնվում է Չինաստանի արևելքում): Նախ ֆրանսիացիք գրել են իրենց լեզվի տառադարձությամբ **Japon**, որ շատ համապատասխան է չինարենին և կարդացվում է **ժապոն**: Նույնը անգլիացիք կարդում են **Ջապոն**, որովհետև անգլերենում **ժ** չկա, և տառը կարդացվում է անգլերենում **ջ**: Սա առաջին քայլն է սխալ տառադարձության: Գերմանացիք, վերցնելով նույն բառը, կարդում են **Յափոն**, որովհետև իրենց լեզվի մեջ ո՛չ **ժ** կա և ո՛չ էլ **ջ**, այլ **j** տառը կարդացվում է **y=j**: Գերմաներենից էլ նույն բառը, անցնելով ռուսերենի, գրվում և հնչվում է **Япония**: Հայերենում արևմտահայերը գրում են **ճաբոն**, որ համապատասխանում է անգլերենին (գրությամբ և հնչումով): Արևելահայերը, մերթ հետևելով ռուսերենին, գրում են **Յապոնիա** (այժմ հնց.՝ *Յու. Ա.*) և մերթ հետևելով արևմտահայերենին, գրում են **ճապոնիա**, որի մեջ **ճ** տառի հնչումը սխալ է, որովհետև արևմտահայ ձևով է»²⁸:

28 **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր VI, Երևան, 1971, էջ 74, 77–78:

Փոխառությունների և օտար բառերի արտասանության մեջ երկու ճյուղերում դրսևորվող տարբերությունները ավելի ակնառու են օտար աշխարհագրական անունների և անձնանունների արտասանություն-գրության մեջ. ներկայացնում ենք միայն արևմտահայերեն տարբերակները.

Աշխարհագրական անուններ՝ **Արժանտին, Բարիզ // Փարիզ, Ինտոնեզիա, Իսթամպուլ, Յոլանտա, ճաբոն // ճափոն, Ճիարալթար, Շիբալո, Շուէտ, Պաքու, Պրագիլ, Պրահա // Փրակա, Պրիլքսէլ, Պուլկարիա, Ռունանիա, Ռուսիա, Սիպերիա, Սպանիա, Վուլկա, Տարտանէլ, Տիդիս, Քալիֆորնիա // Գալիֆորնիա, Քանատա // Գանատա, Քուպա, Քոնկո, Ֆինլանտա** և այլն:

Անձնանուններ՝ **Բուշքին // Պուշկին, Չապէլ, Չօհրապ, Էտկար Փօ, Թուրքոյ, Ժագ // Ժաք, Լոպանֆ, Լուքֆիկ, Կի տը Մոփասան, Կղեպատրա // Քլէօփաթրա, Կոկոլ, Զրանդ, Զիկօ, Ճիմի, Ճիւան, Ճոն, Մակելլան, Մատլէն, Նելիտով, Նուպար, Շաթօպրիան, Չօպանէան, Պալզաք, Պաղտասար, Պոտլէռ, Ռոպէր, Վիքթոր, Տանդէ // Տանթէ, Տաստանէսկի // Տոսթանէսկի, Տոնիէլ, Գոլոմպոս // Քոլոմպոս, Օլկա, Ֆլոպէր // Ֆլոպէռ** և այլն:

Ծանոթություն: Հնում փոխառված հատուկ անունները պահպանել են ուղղագրությունը: Դրանց արտասանությունը համապատասխանում է լեզվի ընդհանուր հնչական համակարգին՝ **Մարտիրոս, Պօղոս, Պետրոս, Եգիպտոս, Գրիգոր** և այլն:

Բնագրային օրինակներ՝ «Կառուցումի շատ մեծ վարպետ մըն է **Թուռկենե:** Այդ հարցին մէջ այնքան բժախնդիր է ան, որքան **Ֆլոպէռ**», «Ինչպէ՞ս ընդունիլ թէ **Սթենտալ** և **Պալզաք** կառուցուած ըլլալու թերութիւն ունին» (Շ. Շահնուր), «Անդրադառնալով **Փրակայի** մէջ տեղի ունեցած հանդիպման...», «Քանի մը օր առաջ **Ուաշինկթընի** մէջ նախագահ **ճորճ Պուշի** հետ տեսակցութեան ընթացքին կանաչ լոյս ստացած էր...», «Կրօնական միացեալ արարողութիւն **Կլէմտէլի** Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ» («Ասպարեզ»):

Ընդհանրացնելով օտար և փոխառյալ բառերի գրադարձության վերաբերյալ ասվածը՝ կարելի է ասել, որ արևմտահայերենում բաղաձայնական համակարգի տառադարձումը ունի հիմնականում հետևյալ ուղղվածությունը. **բ, գ, դ, ձ, ջ** տառերը տառադարձվում են **պ, կ, տ, ժ, ճ**, և համապատասխանաբար՝ **պ, կ, տ, ժ, ճ** տառերը՝ **փ, ք, ց, չ**: Վերջին՝ **փ, ք, ք, ց, չ** շարքը մնում է նույնությամբ: Այսպես (սկզբում տրվում են արևելահայերեն տարբերակները).

բ–պ՝ անբիոն–ամպիոն, բանկ–պանք, բասկետբոլ–պասքեթպոլ, բենզին–պենզին, բրոնզ–պրոնզ, ալբոմ–ալպոմ, ֆուտբոլ–ֆուբպոլ.

պ–փ՝ պալտո–փալթօ, պաթետիկ–փաթեթիք, պարտիա–փարթի.

գ–կ՝ գազ–կազ, գրամ–կրամ, գրանիտ–կրանիթ, լոգարիթմ–լոկարիթմ, օրգան–օրկան.

կ–ք՝ ակացիա–աքասիա, կազինո–քազինօ, կիլո–քիլօ, կրեմ–քրեմ, տակտիկա–թաքթիք, տեխնիկա (տեխնիկական)–թեքնիք, ֆրանկ–ֆրանք.

դ–տ՝ դարչին–տարչին (հայ.՝ կասիս), դելֆին–տելֆին (տլփին, տոլֆին), դրամա–տրամ, դոլար–տոլար, դոկտոր–տոքթոր²⁹, ժանդարմ–ժանտարմ, իդեալ–իտեալ, ֆիդայի–ֆետայի.

տ–թ՝ արտիստ–արթիսթ, տաքսի–թաքսի, տիպ–թիք, տրակտոր–թրաքթոր, մետրո–մեթրօ, մետր–մեթր, միստիկ–միսթիք, ռոմանտիկ–ռոմանթիք.

ջ–ճ՝ ջահել–ճահել, ջան–ճան, ջենթլմեն–ճենթլմեն, ջեյրան–ճէյրան:

Այսպիսով, արևմտահայերենում օտար բառերի տառադարձությունը մոտ է փոխատու լեզվի արտասանական առանձնահատկություններին:

²⁹ Արդի արևմտահայերենում **դոկտոր** բառն ընդունված է գործածել գիտական աստիճանը նշելու համար, իսկ **տոքթոր**–ը՝ բժշկի համար:

Արևելահայերենում նույն իրողության զարգացումը իրական հիմք կարող է ստեղծել նորագույն փոխառությունների տառադարձության և արտասանության մեջ առկա ընդհանրությունները զարգացնելու համար:

Ծանոթություն: Սփյուռքահայ մամուլը արևելահայերենով նյութերում սովորաբար պահպանում է արևելահայերենի տառադարձությունը՝ **ամբիոն, տակտիկա, տեխնիկա, ֆակուլտետ, արտիստ** և այլն, օրինակ՝ «Արեւելեան Լեզուների երկու **ֆակուլտետները** յաջողութեամբ ավարտելուց հետոյ Օրբելին... մնում է Համալսարանի Հայ-Վրացական Բանահիւսութեան **Ամբիոնում**» («Հայկազեան հայագիտական հանդէս», Հատոր Լ, Պէյրուք, 2010, էջ 190), «Այստեղ կինոխցիկը կլանել եւ արձանագրել է ոչ-այնքան **ֆիզիկական**, որքան ոգեղէն իրականութիւնը» (նույն տեղը, էջ 252):

1.5. ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ-ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) **Ռ** և **ր** տառերը գրաբարում և արևելահայերենում հստակորեն տարբեր հնչույթների պայմանական նշաններ են, սակայն արևմտահայերենում **ռ** բաղաձայնը արտասանվում է փոքր-իմջ փափուկ՝ **ր**-ի նման: Գրեթե վերացած է **ռ-ր** արտասանական հակադրությունը՝ **վառարան-վարարան, բառ-փար, ձմեռ-ցմեր, լեռ-լեր** և այլն: «Նշված հակադրության թուլացման պատճառով արևմտահայերենում **ր-ռ** հնչույթների տարբերակումը հաճախ հստակ չի դրսևորվում և տեղիք է տալիս ուղղագրական սխալների»³⁰: Առանձին բառերում և բառաձևերում փոխված է նաև ուղղագրությունը՝ **փնտռել, լեռ-լեռան, ամառ-ամրան, ձմեռ-ձմրան** և այլն, օրինակ՝ «Թնդանօթն այն տղըընդէր **լեռան** կատարն հանեցին» (Դ. Վարուժան), «**Ձմրան** պարզ գիշեր» (Մ. Մեծարենց), «Ցաւով տեղեկացայ թէ Էվգաֆը չբաւոր տղոց իբր **ամարանոց** ծառայող այդ քամբին վրայ ձեռք դնելու կը միտի...», «Հաւաքուած տուներուն **դրան** առջեւ, կը սկսէին երգել» («Ժամանակ»), «Գիտնական մը օգնական մը կը **փնտռէր** կարելոր գործի մը համար» (Դ. Սաքայան): Հնչյունական այդ առանձնահատկության ապացույցներից է նաև այն, որ հայերեն և

30 **Ա. Սարգսյան**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, էջ 25:

օտար մի շարք բառեր (կամ դրանցով բաղադրված կազմություններ) գրության մեջ ունեն և՛ **ր**-ով, և՛ **ռ**-ով տարբերակներ (նախընտրելի են առաջինները), ինչպես՝ **Րաֆֆի-Ռաֆֆի**, **իռլանտացի-իրլանտացի**, **ռոք-րոք**, **ռեուլվեր-րեուլվեր**, **ռեժիմ-րեժիմ** և այլն: Օրինակ՝ «Անոնց մեջ կար համակրելի ընտանիք մը՝ բաղկացած զուարթ **իրլանտուհի** մը...» («Ժամանակ»):

Արտասանական այս յուրահատկությունը պատճառ է դառնում արևմտահայերենում համանունների նոր շարքի առաջացման՝ **բառ-բար [փար]**, **բարք-փառք [փարք]**, **գերի-քեռի [քերի]**, **լուռ-լուր [լուր]**, **մրմռալ-մրմռալ [մրմրալ]**, **տառ-տար [դար]**, **յամար-համար-համառ [համար]**, **գամել-քամել [քամել]**, **դուռ-թուր [թուր]**, **դեռ-դեր-թեր [թեր]**, **վառել-վարել [վարել]**, **վառ-վար [վար]**, **առատ-արատ [արադ]**, **առու-արու [արու]** և այլն:

բ) Հունարենից փոխառյալ մի շարք բառերում աշխարհաբարում պահպանվեց գրաբարյան որոշ հնչյունների գրությունը: Գրաբարը չուներ **ֆ** հնչյունը, հունարենի **ֆ**-ն հայերենում գրադարձվում էր **փ**-ով: Արևելահայերենում այդպիսի բառերի թիվը սահմանափակ է՝ **փիլիսոփա**, **Փալստոս**, **փյունիկ**, **փասիան**, վերջին շրջանում նաև՝ **Ափրոդիտե**, **Ռափայել**: Արևմտահայերենում դրանց թիվը փոքր-ինչ ավելի է՝ **դեղ-փին**, **սատափ**, **Ափրիկե**, **Ռափայել**, **ամփիթատրոն**, **Վոսփոր**, **Սոփոկլես**, **Քսենոփոն**: Օրինակ՝ «...եւ այսօր՝ **Ափրիկեի** ամենէն հեռաւոր խորշերէն մինչեւ Ռուսաստանի բոլոր հայաբնակ քաղաքները ...եւ այլուր ալ, «Անահիտ»ը կը կարդացուի», «Մենք պէտք է մեզի վարպետ առնենք ամէն այն մտքերը, որոնք մեծ ու կատարեալ եղած են, առանց ժամանակի, ցեղի ու երկրի խտրութեան, –յոյն **Սոփոկլեսը** եւ իտալացի Տանթեն, գերման Կեօթեն եւ ֆրանսացի Ֆլուպերը, անգլիացի Շեքսպիրը եւ ռուս թուրկենէֆը» (Ա. Չոպանյան), «Պալեանները յորդուց որդի **Վոսփորի** ափունքները կը զարդարէին մարմարակերտ ապարանքներով» (Ջ. Եսայան), «Տէր Մաթոսենց Հաճի Մուրատը՝ մաքսանենգ, ասպատակ... լիճին **ամփիթատրաձեւ** լեռներուն վրայ հաստատեց իր գահակալութիւնը» (Հ. Օշական):

3. Հին հայերենն ունեցել է երկու լ՝ առաջնալեզվային և կատկային. «...Մեկը՝ նուրբ լ,— բացատրում է Հրաչյա Աճառյանը,— որ արտասանվում էր լեզվի ծայրով, ինչպես այսօրվա մեր լ ձայնը, և երկրորդ՝ հաստ կամ թանձր լ, որ արտասանվում էր լեզվի հետևի մասով: Այսպիսի հնչյուն ունեին նաև լատինները, ունեին լեհերը, և ինքս էլ լսել եմ Պոլսի հունաց արդի արտասանության մեջ: Այսպիսի լ ձայնը հին հայերը գրում էին **ղ** տառով, որ ապա, ավելի թանձրանալով, դարձավ արդի կոկորդական **ղ**, և սրանով ստացանք այնպիսի աններդաշնակ բառեր, ինչպես են՝ **խաղաղ, խաղող, ուղեղ** և այլն: Սրանք նախապես հնչվում էին **խալալ, խալոլ, ուլել** և այլն»³¹: Ըստ որում, Աճառյանը այս երևույթի ձևավորումը կապում է բարբառների հետ և որպես ժամանակաշրջան է նշում մինչև կիլիկյան հայերենը: Մի շարք փոխառյալ բառերում ականտահայերենը պահում է լ-ի թանձր կամ հաստ արտասանությունը, որ արտահայտվում է **ղ** տառի գրությամբ, արևելահայերենը դրանք հնչեցնում է լ-ով, ինչպես՝ **Պլատոն-Պղատոն, Ալեքսանդրիա-Աղեքսանդրիա, Ելիսեյան-Եղիսեան, Օլիմպոս-Ողիմպոս, օլիմպիադա-ողիմպիատ** և այլն: Օրինակ՝ «Շատոնց **Գաղղիա** երթալու էր, ատեն չէր ունենար», կամ՝ «...Հայ կնիկներն ու աղջիկները քիչ մը հով կ'առնեն, քիչ մը **Ողիմպոսի** մաքուր ու զով օղէն կը խմեն» (Հ. Օշական):

Ծանոթություն: Վերջին շրջանում հավանաբար արևելահայերենի ազդեցությամբ նշված բառերից մի քանիսը ավելի հաճախ գրվում և արտասանվում են լ-ով, ինչպես՝ **Պլատոն, պլատոնական, իսկ եղուզակ** ձևը արևմտահայերենում հնացած է. գործածական է և հանձնարարելի **յելուզակ**-ը:

գ) Արդի հայերենը մի շարք բառերի արտասանության մեջ պահպանել է հին հայերենին բնորոշ հարաշեշտության հատկանիշը. կամ շեշտվում է նախավերջին կամ նրան նախորդող մեկ այլ վանկի ձայնավորը (օրինակ՝ **որպէ՛սզի, իհա՛րկէ, գրե՛թէ, մի՛թէ, նա՛նաճաւանդ, մի՛միայն, մի՛զուցէ, նո՛յնպէս, ո՛րեւէ, ցո՛յց տալ, այնպէ՛ս որ, մա՛նր, բա՛րձր, ո՛րերորդ, քանի՛ երորդ** և այլն), կամ առկա է երկակի արտասանություն (օրինակ՝ **գո՛ւցէ-գուցէ՛, գո՛նէ-գոնէ՛, մա՛նաւանդ-մանաւա՛նդ, նո՛յնիսկ-նույնի՛սկ, նո՛յնքան-նոյնքա՛ն, նա՛եւ-նաե՛ւ, նո՛յնպիսի-**

31 Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 128:

Նոյնպիսի՝ և այլն): Ըստ որում, երկակի արտասանություն ունեցող այս տարբերակներից արևմտահայերենը հակված է նախապատվությունը տալու առաջիններին, այսինքն՝ այն ձևերին, որոնցում շեշտը վերջին վանկի վրա չի դրվում՝ **գո՛նէ, նո՛յնքան, գո՛ւցէ** և այլն: Բացի այդ, արևմտահայերենում հարաշեշտություն ունեցող բառերի թիվը անհամեմատ շատ է, քան արևելահայերենում, ինչպես՝ **միա՛նաբար, մաս-նա՛ւորաբար, արդի՛նաբերական, մի՛այն, ամբո՛ղջապէս, ի՞նչպէս, ի՞նչու, անպա՛յմանօրէն, երկրո՛րդաբար, անվրի՛պօրէն, ա՛յնպէս, ահա՛ւասիկ, ո՛րքան, ա՛յսչափ, միա՛նգամայն** և այլն: Օրինակ՝ «**Ի՞նչպէս** համբերեր, մէկ չէ, երկու չէ» (Համաստեղ), «Օուլութիւնը **ա՛յնքան** դանդաղ կ'ընթանայ, որ աղքատութիւնը շուտով ետեւէն կը հասնի» (Հ. Գազանճյան), «Հանդիսականները կը տարակուսէին, թէ եւրոպացի աշխարհառշնչակ երաժիշտներու հետ **ի՞նչպէս** կրնար մրցիլ սովորական մարդ մը՝ առանց գործիքի, առանց համբաւի» (տես Կ. Առաքելյան): Սա ձևավորում է արևելահայերենից տարբեր և միայն արևմտահայերենին բնորոշ հնչերանգ:

Պետք է ասել, սակայն, որ արևմտահայերենի համար սա կանոնական չէ, և հաճախ նույն հեղինակի խոսքում հանդիպում են շեշտադրության զուգահեռ տարբերակներ, ինչպես՝ «**Ի՞նչպէս** եղաւ աջակողեան միշը, ... **ինչպէ՞ս** թէ սիւներու ետեւը» (Լ. Շանթ), «**Ի՞նչու** այդպէս յանկարծ անցաւ Խինդն ու պարը ցաւի դարձաւ», «Որո՞ւ կողմէ եւ **ինչո՞ւ**, ի՞նչ պատճառաւ» (Զ. Խրախունի), «Սուրճը **ի՞նչպէս** պիտի խմէք», «Սուրճը **ինչպէ՞ս** կը խմէք» (Դ. Սաքայան), «Եւ երեւակայեցէ՛ք, այդ երկերը **ո՛րքան** խորապէս տարբերին իրարմէ, **ո՛րքան** զանազանուին կեանքը պատկերացնելու իրենց ձեւին, դրուազներու հիւսուածքին եւ ոճին մէջ՝ **ա՛յնքան** աւելի ինքնատիպ, ուրեմն արժեքաւոր կը նկատուին անոնք», «Երեւակայեցէ՛ք թուստոն, ի՛նչ հոյակապ վէպեր յօրինեց, եւ **որքա՛ն** զմայլելի արուեստով» (Ա. Անդրեասյան): Այս երևույթը առավելապէս հանդիպում է բանավոր խոսքում, ուստի պիտի ենթադրել, որ սա նաև օտար լեզուների անմիջական ազդեցության հետևանք է, իսկ գրավոր խոսքում՝ նաև հեղինակային անհետևողականության դրսևորում:

դ) Քնայնացումը հատուկ չէ երկու գրականների: Բայց եթե արևելահայերենի խոսակցական տարբերակում **–ություն** ածանցով կազմություններում կան այլ բառերում (**ատյան, տեխնիկա, արդյունք** և այլն) յ կիսաձայնի ազդեցությամբ կան ռուսերենի նմանողությամբ ինչ–որ չափով դա դրսևորվում է, ապա արևմտահայերենի և՛ գրական, և՛ խոսակցական տարբերակներում նշված երևույթը չի գործում:

ե) Նույն բաղաձայնների «կից հնչման ժամանակ արևելահայերենը միտում ունի նմանօրինակ դեպքերը հնչելու իբրև երկար բաղաձայն՝ **գարունն ահա, մի քիչ չիր** և այլն, արևմտահայերենը նույն դիրքում սովորաբար հնչում է որպես երկգագաթ բաղաձայններ (նրանց միջև որոշ դադար ստեղծելով)»³²:

32 Տե՛ս Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, էջ 32–33:

2. ՀՆՉՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հայերենում հնչյունափոխությունը պայմանավորված է հիմնականում շեշտադրությամբ: Երկու գրականներում էլ շեշտը կայուն—շարժական է և դրվում է բառի վերջնականի ձայնավորի վրա: Բառի ածման կամ փոփոխության ժամանակ թույլ դիրքում հայտնված մի շարք ձայնավորներ կորցնում են շեշտը և ենթարկվում հնչյունափոխության: Ձայնավորների փոփոխության առանձին իրողություններ, թվում է, չեն կապվում շեշտադրության հետ, քանի որ հանդիպում են բառի ուղիղ ձևերում, ինչպես՝ **մոռանալ—մոռնալ, հասանել—հասնել, անկանել—ընկնել, հարսանիք—հարսնիք** և այլն: Դրանք առաջացել են հին հայերենի ձայնավորների մեջ կատարված պատմական փոփոխությունների արդյունքում: Այդ փոփոխությունների հիմքում դարձյալ ընկած են հայերենի շեշտադրության առանձնահատկությունները: «Բառական ուղիղ ձևերում ձայնավորների սղման կամ **ը**—ի փոխվելու հիմնական շարժառիթը,— կարողում ենք միջին հայերենին նվիրված ուսումնասիրության մեջ,— անպայմանորեն եղել է միջին հայերենի շեշտադրության առանձնահատկությունը: Հենց այն հանգամանքը, որ երկվանկ և բազմավանկ բառերի թեքման ժամանակ, բացի **ի, ու** ձայնավորներից, այդ փոփոխության էին ենթարկվում նաև մյուս ձայնավորները, հիմք է տալիս ասելու, որ բառական ուղիղ ձևերում ևս բառամիջի ձայնավորների սղումը կատարվել էր շեշտի ազդեցությամբ: Ըստ որում, այս հնչյունափոխությունը խիստ տիպական է կիլիկյան հայերենի և միջին հայերենի արևմտյան այլ տարբերակների համար»³³: Սկզբունքորեն նույն կարծիքին է արևմտահայ քերականներից Հովհաննես Գազանճյանը: Խոսելով հայերենում հնչյունափոխության յուրահատկությունների մասին՝ նա զարգացնում է այն տեսակետը, ըստ որի՝ հնչյունափոխությունը լեզվի բնականոն զարգացման արտահայտություններից մեկն է՝ պայմանավորված լեզվի՝ սեղմության ձգտելու միտումներով, իսկ բառական ուղիղ ձևերում արձանագրվող հնչյունափոխությունը նա պայմանավորում է հայերենի շեշտադրության կամ

33 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա հատոր, Երևան, 1972, էջ 88:

արտասանական յուրահատկություններով: «Լեզուն՝ իր դարաւոր ընթացքին մէջ, կը ձգտի երկար հնչիւններն ու բառերը կարճեցնել,— գրում է նա,— տառախումբերը պարզել՝ սղելով, ամփոփելով բառերը եւ սղուածը՝ կրկին սղելով: Լեզուին այս ճիգին արդիւնքն են բոլոր ձայնափոխութիւնները»: Եվ ապա՝ «Երբոր բառի մը ծայրը՝ հոլովումով, ածանցումով, կամ բարդութեամբ նոր մասնիկ կամ բառ մը կ'աւելնայ, նոյն բառին վերջին շեշտեալ վանկը կը մնայ բառին սկիզբը կամ մէջը, որով կը կորսնցնէ իր շեշտը եւ կը դառնայ ընդունակ ենթարկուելու ձայնափոխութեան. ինչպէս՝ **գիր–զըրի, յաւտ–յաւիտեան, սենեակ–սենեկապետ** եւն: Հին հայերէնի կարգ մը բառերու միջանկեալ ձայնաւորներուն անկումը՝ աշխարհաբարի մէջ, ճիշտ նոյն պատճառէն առաջ եկած է, զի միջանկեալ վանկերն անշեշտ են: Այսպէս՝ **հարսանիք, արել, խորովել** եւն. եղած են **հարսնիք, արել, խորվել** եւն»³⁴: Ձայնավորների հնչյունափոխության առանձին իրողություններ պայմանավորված են արտասանական այլ գործոններով, որոնց մասին կխոսվի հետագա շարադրանքում:

Առաջնորդվելով այն մտածմամբ, որ հայերենում հնչյունափոխությունը ի վերջո պայմանավորված է մեր լեզվի շեշտադրության և արտասանության առանձնահատկություններով՝ երկու զրականների հնչյունափոխական յուրահատկությունները ստորև ներկայացնում ենք՝ հաշվի առնելով ինչպես ավանդական քերականության մեջ ընդունված սկզբունքներն ու դասակարգումը (դիրքային, պատմական, փոխազդեցական), այնպես էլ հայերենի շեշտադրության առանձնահատկությունները: Ըստ այսմ առանձնացրել ենք հնչյունափոխության հետևյալ երեք տեսակները՝ **ձայնավորների հնչյունափոխություն, երկինչյունների հնչյունափոխություն, փոխազդեցական հնչյունափոխություն**:

34 **Յովհ. Գազանձեան**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 58–59:

2.1. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի երկու տարբերակներում հիմնականում հնչյունափոխվում են **է (ե), ի, ու, ը**, սակավ՝ **ա, օ (ո)** ձայնավորները:

Ա ձայնավորի հնչյունափոխությունը

Հնչյունափոխության տեսակետից **ա**–ն երկու գրականներում էլ կայուն ձայնավոր է: Ընդունված է ասել, որ **ա**–ի հնչյունափոխության դեպքերը հազվադեպ են և մեր լեզվի համար համակարգային երևույթ չեն: Ասվածը թերևս առավել բնորոշ է աշխարհաբարի արևելահայ ճյուղին, քանի որ միջին հայերենում արդեն «այս ձայնավորի երբեմնի կայունության հատկությունը խախտված է»³⁵, իսկ արևելահայերենում և մասնավորապես արևմտահայերենում արձանագրվում են հնչյունափոխական որոշակի իրողություններ, որոնք մասնակի տարբերություններով վկայում են արևմտահայ աշխարհաբարում **ա** ձայնավորի հնչյունափոխության նկատելի աշխուժացման մասին: Այդ փոփոխությունները հիմնականում երկու կարգի են, որոնցում էական դերակատարում ունի շեշտադրությունը:

1. Բազմավանկ բառերում բառամիջի **ա** ձայնավորը, կորցնելով շեշտը, սղվում է կամ վերածվում է **ը** գաղտնավանկի՝ **ա>ը**: **Ա** ձայնավորի այս փոփոխությունները, ընդունված է ասել, մասնակի բնույթ ունեն և գործող օրինաչափության արդյունք չեն, այսպես՝ **առաջ–առջեւ, աստված–աստծու, դադար–անդադրում, համար–համրել, մարել–մարմրել, մատաղ–մատղաշ, շաբաթ–երեքշաբթի, շիտակ–շտկել, պատառ–պատռել, պարապ–պարպել, սատակ–սատկել, ցամաք–ցամքոց, քաղաք–քաղքենի** և այլն: Արևմտահայերենում հնչյունափոխական այս իրողությունները հանդիպում են ավելի շատ բառերում, քան արևելահայերենում: Վերը նշվածներին կարելի է ավելացնել հետևյալները, որոնք հատուկ են միայն արևմտահայերենին, ինչպես՝ **ծերմակ>ծերմկիլ, շալակ>շալկել, ցամաք>ցամքիլ, ճակատ>ճակտի, հաւան>հաւնիլ, գաւակ–գաւկի**: Օրինակ՝ «Ցամքի՛լ ծաղիկ հասակի մէջ, Ո՛հ, չէ

35 Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 74:

այնչափ ցաւ ինձ համար» (Պ. Դուրյան), «Ի՞նչ ըրիր **գաւկիղ** համար. ի՞նչ ըրիր մեր **գաւկիհն** համար» (Շ. Շահնուր), «...Ես այս դէմքը չեմ **հաւ-
նիր** կոր» (Ն. Ակիշյան), «Հայերենը հոս կը **դադրէր**» (Ռ. Հատտեճյան), «Դուրսի թուրքերը դուռը քանդելու աշխատանքը **դադրեցուցին**» (Արամ Հայկազ):

Շաբաթ բառի սեռական—տրական հոլովածևում ունենք հնչյունափոխ-
ված և անհնչյունափոխ հիմքերով տարբերակներ՝ **շաբթու** // **շաբա-
թուան** // **շաբթուան**: Կարծիք կա, որ **–ու–**ով հոլովածևը՝ **շաբթու**, հնա-
ցած է, թեև մամուլի լեզվում տակավին գործածվում է՝ «Կ'ըսէր թէ **շաբ-
թու** մէջ կատարելի բացառիկ նիստին հրաւիրուած են մամուլի ներկա-
յացուցիչներն ալ», «Անցեալ **շաբթու** մեր նուիրեալ աշխատակիցնե-
րէն...» («Ժամանակ»): Ինչ վերաբերում է **–ուան–**ով հոլովածևերին,
պետք է ասել, որ սրանք երբեմն գործածվում են իրարից տարբեր իմաստ-
ներով. առաջինը՝ անհնչյունափոխ տարբերակը (**շաբաթուան**)՝ *շաբաթ
օրվա*, երկրորդը (**շաբթուան**)՝ *շաբաթվա յոթ օրը* նշանակություններով:
Սակայն արդի գրական արևմտահայերենի համար երկու դեպքում էլ **շա-
բաթուան** ձևը կանոնական է, օրինակ՝ «**Շաբաթուան** միւս օրերուն
ի՞նչեր կը զգան անոնք...» (Ռ. Հատտեճյան):

2. Արևմտահայերենում նշվում են **ա** ձայնավորի՝ բարբառներից և միջին
հայերենից փոխանցված հնչյունափոխության դեպքեր, որոնք արևելա-
հայերենին հատուկ չեն կամ համեմատաբար քիչ են հանդիպում: Դա
ա–ի սղումն է կամ անկումը և կամ **ա>ը** հնչյունափոխությունը բառական
ուղիղ ձևերում: Այս հնչյունափոխությունը, թեև աշխարհաբարին է անցել
լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարված փոփոխութ-
յունների հետևանքով, սակայն, ինչպես իրավացիորեն նկատված է, ի
վերջո կատարվել է շեշտի ազդեցությամբ. «Արդեն պատմական շրջա-
նում սկսել է ընդհանրանալ նախաշեշտ վանկերի ձայնավորների, այդ
թվում նաև **ա–ի** արտասանության թուլացումը, և քանի որ տվյալ դեպ-
քում **ա–ի** կորուստը կամ փոփոխությունը չի անդրադարձել բառիմաստի
շփոթության վրա, ուստի և այն ընկել կամ սղվել է: Հայերենի այն տարբե-
րակներում, որտեղ բազմավանկ բառը, բացի գլխավորից, ունեցել է նաև
երկրորդական շեշտ, այն էլ առաջին վանկում, **ա–ի** սղումը կամ անկումը

տեղի է ունեցել միջնավանկում: Այս երևույթը հատկապես հատուկ է կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին»³⁶:

Բառական ուղիղ ձևերում **ա**-ի սղումը կան **ա>ը** փոփոխությունը արևմտահայերենում ավելի տարատեսակ դրսևորումներ ունի:

1. Գրաբարից ավանդված **ան** ներածանցով մի շարք բայական կազմույթուններում **ա** ձայնավորը սղվում է կան վերածվում **ը** ձայնավորի: Հնչյունափոխական այս տեսակը գործում է նաև արևելահայերենում՝ որպես գրաբար-միջին հայերեն-աշխարհաբար պատմական փոխանցումների արգասիք: Այսպես, ունենք՝ **գտանել-գտնել, իջանել-իջնել, մտանել-մտնել** և այլն: Գրական արևմտահայերենում այս իրողությունը ընդգրկում է մի քանի տասնյակ բայեր: Խոսելով պոլսահայ բարբառում այս կարգի բայերի մասին՝ Հրաչյա Աճառյանը դրանք բաժանում է երկու տեսակի. 1) **սովորական բայեր** և 2) **անվանական բայեր**: Առաջիններում **ա** ներփակ ձայնավորը կարող է մնալ, սղվել կամ **ը**-ի վերածվել, ինչպես՝ **իմանալ-իմանալ, չարանալ-չարնալ, գողանալ-գողնալ, հասկանալ-հասկընալ, մոռանալ-մոռնալ**: Երկրորդներում, որոնք կազմված են ածական բայափոխներից, **ա** ձայնավորը ենթարկվում է հնչյունափոխության, ինչպես՝ **արթնանալ-արթըննալ, թուլանալ-թուլնալ, նորանալ-նորնալ, տաքանալ-տաքնալ, շատանալ-շատնալ**: Երկրորդ խմբի բայերից շատերը, ըստ լեզվաբանի, նոր կազմություններ են և հին ձևերի հետ հանդես են գալիս որպես զուգաձևություններ³⁷: (Դրանք, իհարկե, միայն պայմանականորեն կարելի է անվանել «նոր կազմույթուններ», որքանով որ գրաբարից ավանդված չեն):

36 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 74: Այս աշխատության մեջ դիտարկվում է **ա**-ի միայն սղումի կան անկումի դեպքը. չգիտես ինչու, չի նշվում **ա>ը** փոփոխությունը: Մինչդեռ դա վկայված է միջին հայերենում բազմավանկ բառերի միջնավանկում ավելի վաղ, իսկ սկզբնավանկում ավելի ուշ (15-16-րդ դարերից): Հենց նշված աշխատության մեջ այդ իրողության վերաբերյալ բերվում են բնագրային օրինակներ՝ **պէտ անէն հիւընդին, գարթ ի յընգողնէն** և այլն (տե՛ս նույն տեղը, էջ 74-76):

37 Տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 14-15:

Աճառյանի այս դասակարգումը սկզբունքորեն գործում է նաև գրական արևմտահայերենում: Տարբերությունը միայն առանձին բայերի և առանձին ձևերի նախընտրության մեջ է: Բերենք մի քանի օրինակ: Պոլսահայ բարբառի **կարմրիլ** և **կարմիրնալ** զուգաձևերը նույնությամբ անցել են գրական լեզու. երկրորդը ունի խոսակցական երանգ: Նույն ածական հիմքով ստեղծվել են հնչյունափոխված նոր ձևեր՝ **կարմրնալ** և **կարմրանալ**: Բարբառում **կապոյտ** բառակազմական հիմքով ունենք **կապտիլ** և **կապուտնալ** ձևերը: Սրանցից գրականին չի անցել առաջինը՝ **կապտիլը**, սակայն գրական լեզվում գործածության մեջ են ևս չորս նոր կազմություններ՝ **կապուտանալ**, **կապտանալ**, **կապտել**: **Դեղնիլ** և **դեղիննալ** ձևերից անցել է առաջինը: Բարբառային **կարօտիլ** և **կարօտնալ** ձևերից բացի, գրական արևմտահայերենում այսօր գործածական է նաև **կարօտանալ**–ը (գրբ.՝ կարօտանամ)³⁸: **Մըթըննալ**, **մթնանալ**, **մութնալ** և **մըթնել** տարբերակներից գրական լեզվին է անցել միայն մեկը՝ **մըթըննալ**–ը (նաև՝ **մթնել**, **մթնիլ**): Գրականին չեն անցել բարբառային **ծարվիլ** և **ծարվընալ** ձևերը: Գործածվում է գրաբարից ավանդված **ծարալիլ** (գրբ.՝ ծարալիմ, ծարալեն) անհնչյունափոխ կազմությունը, ինչպես նաև **ծարալնալ** ձևը: **Կակղիլ** և **կակղնալ** ձևերից անցել է **կակղիլ**–ը. գործածվում են նաև **կակղանալ** (գրբ.՝ կակղանամ) և համեմատաբար նոր կազմված **կակուղնալ** ձևերը³⁹: Այստեղ որևէ օրինաչափություն արձանագրելը դժվար է: Ինչպես տեսնում ենք, գրական արևմտահայերենին են անցել ինչպես հնչյունափոխված, այնպես էլ անհնչյունափոխ ձևեր՝ բաղադրված թե՛ բայակազմական և թե՛ բառակազմական հիմքերով: –**ան**– ներածանցի անհնչյունափոխ ձևով կազմությունների մի մասը ավանդված է գրաբարից: Դրանք հնչյունափոխված տարբերակների հետ հաճախ կազմում են զուգաձևեր, ինչպես՝ **թեթեւանալ // թեթեւնալ**, **թուլանալ // թուլնալ**, **խոշորանալ // խոշորնալ**,

38 **Կարօտիլ**–ը ունի նաև *ուզել*, *պահանջել*, *պետք ունենալ* լրացական իմաստները. «Այս գործին ամբողջացումը երկու տարուան կը կարօտի» (տես **ԳՆԷԼ արքեպս. ՃԷՐԷՃԵԱՆ, Փարամազ Կ. Տօնիկեան**, Հայոց լեզուի նոր բառարան, առաջին հատոր, Պէյրուք, 1992):

39 Տե՛ս հմտ.՝ **Յ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, **Ա. Տերխաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան, Երկրորդ հատոր, Պէյրուք, 1992, **ԳՆԷԼ արքեպս. ՃԷՐԷՃԵԱՆ, Փարամազ Կ. Տօնիկեան**, Հայոց լեզուի նոր բառարան, առաջին հատոր, Պէյրուք, 1992, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատոր առաջին, Երևան, 1979, հատոր երկրորդ, Երևան, 1981:

կանաչանալ // կանաչնալ // կանաչիլ, կորանալ // կորնալ, համեղանալ // համեղնալ, հասկանալ // հասկնալ, հինանալ // հիննալ, շատանալ // շատնալ, սեւանալ // սեւնալ, վերանալ // վերնալ և այլն: Սրանցից մի քանիսը նվազ գործածական են, ինչպես՝ **կորնալ, վերնալ**, իսկ մի քանիսն էլ երևան են հանում նաև իմաստային տարբերություններ, ինչպես՝ **նեղանալ**–նեղվել, սրողել, բարկանալ, զայրանալ, իսկ **նեղնալ**–նեղ դառնալ, **շատանալ**–բավականանալ, գոհանալ, **շատնալ**–բազմանալ, ածել, կուտակվել և այլն: (Այդ մասին տե՛ս էջ 97–99): Հնչյունափոխված ձևերը հիմնականում արևմտահայ բարբառներից և միջին հայերենից են:

Հետաքրքիր տարբերություններ են արձանագրում գրաբարից ավանդված **սպանանել** և **ելանել** բայերը: Այս երկուսն էլ միջին հայերենում հանդիպում են հնչյունափոխված տարբերակներով՝ **սպաննիլ // սպաննել // սպանել** և **ելնել // ելլել // ելնալ** և այլն: Արևելահայերենին անցան **սպանել** և **ելնել** տարբերակները, իսկ արևմտահայերենին՝ **սպաննել**–ը և **ելլել**–ը: Արևմտահայերեն տարբերակների ընտրությունը Ա. Այտընյանը բացատրում է դրանց հեշտ արտասանվելու հանգամանքով. «**ելլել** բային հին ձեւն էր **ելնել** (գրբբ. **ելանել**),— գրում է նա,— որ հնչման դիրութեան համար եղած է **ելլել**: (Առհասարակ լեզուաց կանոն է որ **լն** կամ **ըլլայ լլ** եւ կամ **նն**)»⁴⁰: Օրինակ՝ «Այդ տակնուվրայ եղած ներաշխարհով, կնոջս՝ Ալիսին հետ, **կ'ելլենք** կ'երթանք Մնակեանն ու մեզ ճաշի հրաւիրող բարեկամի մը տունը» (Վ. Պերպերյան), «...ուր այս երկրի մեծագոյն նախագահը՝ Աբրահամ Լիմբըն, **սպաննուեցաւ**, 1865ին...» (Բ. Նուրիկյան):

Բնագրային այլ օրինակներ՝ «Մարդս ամեն կարդացածը կամ լսածը **հասկնալու** պարտաւոր չէ» (Հ. Պարոնյան), «Չէին **հասկնար** իրար, Սինոնին գիտցած հայերէն միակ բառերը մօր, եղբօր եւ իր անուններն էին» (Վ. Մավյան), «Բայց մեղդները – աշուն էր – **շատցան**» (Զահրատ), «Չեն միջամտեր, միայն՝ **չմոռնաս** այդ մասին շարադրութիւն մը գրել ինձի»

40 Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 64:

(Պ. Սնապյան), «Մարդոց միտքը ազատագրե՛, ու անմիջապես կեանքէն կը կտրուին, կը **չորնան**» (Վ. Օշական):

Նախաշեշտ վանկի **ա** ձայնավորի թուլացման հետևանքով ունենում ենք **ա**–ի սղում կամ **ա>ը** հնչյունափոխություն մի քանի ոչ բայական կազմություններում, ինչպես՝ **ամաչկոտ>ամըչկոտ, բաղանիք–բաղնիք, հարսանիք>հարսնիք, տասանոց>տասնոց, օրուանէ>օրուընէ** և այլն, օրինակ՝ «Այդ **հարսնիքը** ամբողջ թաղին **հարսնիքը** եղաւ» (Ռ. Ջարդարյան), «— **Տասնոց** չեմ առած,— կ’ըսէք ձեր գրութեան մէջ» (Ա. Ծառուկյան): Հնչյունափոխական նույն իրողությունը հանդիպում է նաև առանձին բայերի բառակազմական հիմքերում, ինչպես՝ **ճանաչել>ճանչնալ, ամաչել>ամըչնալ, փաթաթել>փաթթել, կատաղել>կատղիլ** և այլն: Օրինակ՝ «Երթա՛լ, երթա՛լ, չը **ճանչնալ** Մարդ ու Աստուած, Ձո՛յգ երթալ՝ ձեռքդ քո՛յր ձեռքի մէջ դըրած» (Ռ. Սևակ), «Հասկցայ, թէ գիս սեղանին առջեւ չէին նստեցուցած, որպէսզի **չամչնամ** ու շատ ուտեմ» (Ա. Ծառուկյան), «Ժամանակը զանոնք **բաժնեց** իրարմէ» (Շ. Շահնուր), «Շատ չանցած **կատղած** թուրք զօրքը մտած էր գիւղ» (Վ. Մավյան), «...Ես **կ’ամչնայի՛** դիտելով այն զոյգերը, որոնք իրարու **փաթթուած** կը պարէին» (Ա. Գոչունյան), «Դիւրին պատասխանող տղայ չէր, քիչ բան կը **հաւնէր** արդէն» (Պ. Սնապյան):

Ծանոթություն: Գեղարվեստական գրականության մեջ հանդիպող առանձին հնչյունափոխական ձևեր՝ **յաւերժհարս, արծել** (Դ. Վարուժան), տաղաչափական նպատակներով են արված և չպետք է դիտարկվեն որպես կանոնական ձևեր:

2. Բառասկզբում, հատկապես ն ռնգայինից առաջ **ա** ձայնավորի վերածումը **ը**–ի հանդիպում է միայն արևմտահայերենում, ընդհանուր հնչյունափոխություն չէ և բնորոշ է թվով շատ քիչ բառերի, ինչպես՝ **առնել>անել>ընել, ասել>ըսել**: Սա ուշ միջնադարի մատենագրության մեջ արձանագրված իրողություն է, որ փոխանցվեց արևմտահայերենին: Օրինակ՝ «խոսրովին **ըսածը** է՛ս պէտք է **ըսէի...**» (Պ. Սնապյան), «Ինչպէ՞ս **ըրի**, ես ալ կը գարմանամ» (Ռ. Հատտեճյան):

Արևմտահայերենում բառասկզբում **ա>ի** հնչյունափոխության մասնակի դեպք է **անկանհիլ>իյնալ** փոփոխությունը, որը, ըստ Աճառյանի, առաջացել է հետևյալ ձևով. նախ **անկանհիլ**–ը դարձել է **ընկնհիլ**, ապա նախահունչ **ը**–ն վերջին **ի** ձայնավորի առնմանությամբ փոխվել է **ի**–ի՝ **ինկնհիլ**, հետո՝ **իյնհիլ** և ապա լծորդության փոփոխությամբ դարձել է **իյնալ**, այսպես՝ **իյնալ<իյնհիլ<ինկնհիլ<ընկնհիլ<անկանհիլ**: Արևելահայերենը **ա>ը** հնչյունափոխությամբ և երկրորդ **ա**–ի սղունով պահպանել է հնչյունափոխական առաջին քայլը՝ լծորդության փոփոխությամբ՝ **ընկնել**:

Օ (ո) ձայնավորի հնչյունափոխությունը

Այս ձայնավորը, ինչպես գրաբարում և միջին հայերենում, այնպես էլ արդի հայերենի երկու տարբերակներում կայուն ձայնավոր է: Շատ քիչ բառերում է շեշտակորույս լինելիս ենթարկվում հնչյունափոխության, ինչպես՝ **որկոր–որկրամուլ, օրօր–օրրան, մօտ–մտերիմ** և այլն: Արևմտահայերենում հանդիպում է նաև միջին հայերենից և բարբառներից փոխանցված՝ նախաշեշտ վանկի **ո** թույլ ձայնավորի սղուն կամ **ո>ը** հնչյունափոխություն, ինչպես՝ **սովորիլ–սորվիլ, դողդողալ–դողդղալ, ժողովել–ժողվիլ, թորշոմել // թռռոմել–թռռմիլ // թօշնիլ, կողպել–կղղպել**: Օրինակ՝ «Յեռուներէն ուտի մը թաւ հեծօքը կու գայ **դողդղալէն**» (Մ. Մեծարենց), «Անոնց մէջ էր նաեւ Թաթօ Կարոյի ծերունի ու **դողդղան** դէմքը» (Համաստեղ), «Փիեռ ամբողջ ճիգ մը թափեց կարելի եղածին չափ քիչ **դողդղացնելու** համար մամակը իր մատներուն մէջ» (Շ. Շահնուր), «Խելքերնիդ գլուխնիդ **ժողվեցէք**, վերջ ի վերջո...» (Դ. Վարուժան, թարգմ.), «Առաջին անգամ իսկ լսելուս հոգիս սարսեց, ու դիւրութեամբ **սորվեցայ** բառերն ալ, եղանակն ալ» (Արամ Հայկազ), «Ի՛նչ նստեր ես... դուռը **կղպեր**՝ մութին կուլաս...» (Վ. Օշական), «Հիմա հեռու կ'ապրիմ սենեակը **կղպուած** ձայնս շուք տարածուող ու փոշի» (Գ. Պըլտյան):

Օ(ո) ձայնավորի հնչյունափոխությունը երկու գրականներում էլ կրում է մասնակի բնույթ, արձանագրվում է սակավ օրինակներում:

Է և Ե ձայնավորների հնչյունափոխությունը

Ուղղագրության փոփոխության արդյունքում արևելահայերենում և արևմտահայերենում է և Ե տառերի գրության մեջ առաջացան ուղղագրական զգալի տարբերություններ. գրաբարի է–ն բառամիջում և բառավերջում տառադարձվեց Ե–ով, և փոփոխվող ու չփոփոխվող է, Ե հնչյունների գրությունը նույնացավ: Երկու գրականներում որոշ տարբերակվածություն առաջ եկավ այս հնչյունների փոփոխություններում: Հետևաբար նպատակահարմար է դրանց հնչյունափոխությունը ներկայացնել առանձին–առանձին:

Ե ձայնավորի հնչյունափոխությունը

Արևելահայերենում հիմնականում հնչյունափոխվում է փակ վանկի Ե–ն և այն էլ միայն բառակազմության ժամանակ՝ **դեգ–դիզել, հրավեր–հրավիրատոմս, սեր–սիրել** և այլն: Սա հին հայերենի է–ն է, որ փոխանցվեց արևմտահայերենին և նույնպես հնչյունափոխվում էր բառակազմության ժամանակ՝ **հրաւէր–հրաւիրել, սէր–սիրել, վէպ–վիպասան, տէր–տիրանալ** և այլն: **Դեւ** բառը երկու գրականներում էլ բառակազմության ժամանակ ենթարկվում է հնչյունափոխության՝ **դեւ–դիւահար, դիւային**:

Ե ձայնավորը արևմտահայերենում կայուն է. հնչյունափոխվում է խիստ սակավ դեպքերում: Մասնակի տարբերություն է մի քանի դեպքերում բառակազմում և բառամիջի փակ վանկում Ե–ի սղումը կամ վերածվելը **ի** ձայնավորի՝ **երեկոյ>իրիկուն, մենակ>մինակ**: Օրինակ՝ «Սա **իրիկուն** ըլլայի ես, Լի երգովը թռչուններուն, մարդերուն» (Մ. Մեծարենց), «Հոն ուր քեզի օր մը **մինակ** ես թողի...» (Ռ. Սևակ), «Ի՛նչ նստեր ես **միս–մինակ** խանութիդ մէջ» (Վ. Օշական): **իրիկուն**–ը առաջացել է **երեկոյ>երիկուն** զարգացումով, որտեղ միջին ձայնավորի ազդեցությամբ նախածայն **ե(է)**–ն դարձել է **ի**, այսպես՝ **իրիկուն<երիկուն<երեկոյ**, ինչպես պոլսահայ բարբառում՝ **երիցակին>իրիսկին**: **Մինակ**–ը, ըստ Հրաչյա Աճառյանի, առաջացած կարող է լինել միջին հայերենի **մինագ** ձևից, ինչպես՝ **մինաւորիգ<մինաւոր**⁴¹:

41 Տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 19–20:

Այս հնչյունափոխությունը հանդիպում է նաև բայական կազմություններում՝ **արգել(ք)>արգիլել** (բայց՝ **արգելարան**), **կեղել>կեղուել**, **աւերել>աւրել**, **գիտենալ>գիտնալ**, **կարենալ-կրնալ**, **վախենալ>վախնալ**՝ «Կ'ուզէի ուտել լափել բոլորը ու չէի կրնար», «Վստահութեամբ, նաեւ ապահովութեամբ կրնանք նայիլ աղամանդաշող հորիզոնին...» («Ժամանակ»), «Կը հարցնէր մայրս երկչոտութեամբ, **վախնալով** որ քաղաքական պատասխանատուութիւն մը խնդրոյ առարկայ է» (Ա. Գոչունյան), «Լաւ գիտես որ բժիշկը **արգիլած** էր» (Դ. Վարուժան, թարգմ.):

Հնչյունափոխության այս տեսակը նույնպես բարբառներից և միջին հայերենից արևմտահայերենին փոխանցված հնչյունափոխական իրողություն է՝ պայմանավորված նախաշեշտ վանկի ձայնավորի թույլ արտասանությամբ:

Ծանոթություն 1: Արևմտահայերենի խոսակցական տարբերակում վկայվում է նաև հին հայերենի **եղբայր** բառին զուգահեռ **աղբար** ձևի գործածությունը, որը բարբառային ծագում ունի և գործածական է եղել նաև միջին հայերենում: «Ինչպես որ աշխարհ կու գան եզը կամ ծառը, ճիշդ այնպես ալ աշխարհ եկած է Փիլիկ **աղբարը**» (Համաստեղ):

Ծանոթություն 2: Արևելահայերենի **լցնել** բայը (գրբ.՝ **լնում**, **լցուցանեմ**) արևմտահայերենում գործածվում է միջին հայերենից (տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Երևան, Ա հատոր, 1987) փոխանցված **լեցնել (լեցուիլ)** տարբերակով, ինչպես՝ «Անոնց երգարձակ կտուցներն ալ **լեցուեցան** նոյն մեղեդիներով» (Վահե Հայկ):

Ծանոթություն 3: **խեղճ** հիմքից բաղադրված **խղճուկ** բառը արևմտահայերենում գործածվում է նաև չհնչյունափոխված տարբերակով՝ **խեղճուկ**, օրինակ՝ «Եւ այն ալ հեռատեսիլէն արուած գեկոյցի մը **խեղճուկ** բառերով» (Ա. Անդրեասյան), «Ցերեկի այդ մռայլ երեսով **խեղճուկ** մուրացիկներ չէին» (Համաստեղ):

Է ձայնավորի հնչյունափոխությունը

Է ձայնավորը բառասկզբում երկու գրականներում էլ ունի հնչյունափոխական գրեթե նույն հատկանիշները: Է–ով սկսվող ընդամենը մի քանի բառ ունենք՝ **է, էգ, էշ, էջ(ք)**: Առաջինը չի հնչյունափոխվում՝ **էական, էութիւն**: Մյուս երեքը բառակազմության մեջ սովորաբար ենթարկվում են հնչյունափոխության՝ **իգական, իգանալ, իշամեղու, իշաբեռ, իշայր, իջնել, իջեւանել** և այլն: Էշ արմատով մի շարք բարդություններ երկու գրականներում էլ գործածվում են զուգահեռ տարբերակներով՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ՝ **էշավարի // իշավարի, էշայծեամ(ն) // իշայծեամ, էշարած // իշարած, էշատեր // իշատեր** և այլն: Արևմտահայերենը ունի **էշուկ** և **իշուկ** տարբերակները⁴², մինչդեռ ըստ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ արևելահայերենում առաջինը գործածական չէ:

Արևմտահայերենում է ձայնավորը խիստ փոփոխվող է բառամիջում: Փակ վանկի է–ն, բառակազմության ժամանակ շեշտակորույս լինելով, փոխվում է ի ձայնավորի՝ **մէգ–միգապատ, դէմ–դիմաց, պէտ(ք)–պիտանի, կէտ–կիտել, կիտուած, զէն(ք)–զինակիր** և այլն: Սա ընդհանրական կանոն է արևմտահայերենի համար: Առանձին կազմություններում արևմտահայերենը հակված է պահպանելու անհնչյունափոխ հիմքերը, ինչպես արևելահայերենում **ե** ձայնավորը՝ **հրէշ–հրէշութիւն, հրէշօրէն, աղէկ–աղէկնալ, աղէկութիւն, զէն(ք)–զէնընկեց, օրէնք–օրէնսդիր, օրէնսգէտ, վրէժ–վրէժխնդիր, երէց–երէցկիւն** և այլն: Հոլովման և հոգնակի կազմության ժամանակ պահպանվում է անհնչյունափոխ հիմքը՝ **մէգ–մէգի, հրաւեր–հրաւերներ, վէճ–վէճով, վրէժ–վրէժի, շէն–շէներ** և այլն: Սա հատուկ է նաև արևելահայերենի **ե(է)** ձայնավորին՝ **հրավերներ, վեճեր, վեպեր, հանդեսի** և այլն: Բացառություն են **տեր, սեր, մէջ** բառերի հոլովածները՝ **տիրոջ, սիրոյ, միջի**. հոգնակիները մնում են անփոփոխ՝ **տերեր, սերեր, մէջներս / մէջերնիս**:

42 Տե՛ս **ԳՆԷԼ արքեպ. Ճէրճեան, Փարամազ Կ. Տօնիկեան**, Հայոց լեզուի մոր բառարան, առաջին հատոր, Պէյրուք, 1992:

Արևմտահայերենում հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներով են հանդիպում **աղէտ** բառով կազմությունները՝ **աղէտալի** // **աղիտալի**, **աղէտաւոր** // **աղիտաւոր**, **աղէտաբեր** // **աղիտաբեր**: Օրինակ՝ «Մնալ երկուքին միջեւ...», այնքան **աղիտաւոր** մեզի համար» (Ս. Սարաֆյան), «Մեր ազգին պատմութիւնը արձանագրած է աւելի փոթորկալից շրջաններ եւ **աղիտալի** անցքեր» (Ս. Նաճարյան): Առավել ընդունելի են անհնչյունափոխ ձևերը, որոնք համընկնում են արևելահայերենի համապատասխան ձևերին:

Սէր բառը թեքված ձևերում հանդիպում է անհնչյունափոխ հիմքով, ինչպես՝ «Միշտ անգիտակցաբար մենէ բան մը տալով նախ, այդ փոխ տրուածը բազմապատկուած ետ առնելով, յետոյ՝ երբ հասկցող էակ է մեր **սէրին** առարկան» (Վ. Թեքեյան), «Աղէտին առաջին ամիսները անսահման **սէրով** ու գորովով իրարու սեղմուած, իրարու կապուած էին Փարիզի մայքերը նետուած երիտասարդները» (Շ. Շահնուր): Կանոնական են **սիրոյ** և **սէրով** // **սիրով** կազմությունները: **Սէրին** ձևը խոսակցական է, իսկ գործիականի **սիրով** և **սէրով** ձևերը առանձին կիրառություններում ունեն իմաստային որոշակի տարբերություն. առաջինը՝ **սէրով**–ը, վերաբերում է սիրո զգացումին. «**Սէրով**, **սէրով** խոցեցիր զիս, Սիրտըս **սէրով** խոցեցիր. Սիրտըս քահել, վարդի՛ պէս բաց, Դագաղի՛ պէս խոցեցիր...» (Ռ. Սևակ): Երկրորդը՝ **սիրով**–ը, նշանակում է **հաճույքով**, **հաճությամբ**, ինչպես՝ «**Սիրով** (=հաճույքով) կը կատարեմ խնդրանքդ»:

Արևմտահայերենում է ծայնավորը, փակ վանկում շեշտակորույս լինելով, հնչյունափոխվելու դեպքում կարող է գրադարձվել **ե**–ի՝ **աղուէտաաղուեսուկ**, **պարէն**–**պարենապահ**, **ամէն**–**ամենագէտ** (տե՛ս էջ 11–12): Չի գրադարձվում կրկնավոր բարդություններում՝ **պէսպէս**, **կէտ**–**կէտ**, և մի շարք այլ բառերում՝ **աղէտ**–**աղէտաբեր** (// **աղիտաբեր**), **քէն**–**քէնոտ**, **օրէն**–**անօրէնութիւն**, **տէր**–**տէրութիւն** (// **տիրութիւն**), **գէշ**–**գէշութիւն**, **հրէշ**–**հրէշութիւն** և այլն:

Բառավերջի է–ն չի հնչյունափոխվում՝ **աշտէ**–**աշտէներ**, **աշտէակիր**, **հիւլէ**–**հիւլէի**, **հիւլէագէտ**:

Ը ձայնավորի հնչյունափոխությունը

Բացի արևելահայերենում հանդիպող հնչյունափոխական մեկ դեպքից՝ գաղտնավանկի **ը**-ի սղում՝ **կայսըր-կայսրուհի, ժանըր-ժանրութիւն**, արևմտահայերենում նշվում են այդ ձայնավորի հնչյունափոխության ևս երկու դեպք:

1. Արևմտահայերենում սահմանական եղանակի անկատար ներկա և անցյալ ժամանակաձևերը կազմող **կը** մասնիկը ձայնավորով սկսվող բայերից առաջ կորցնում է **ը** հնչյունը. դրա փոխարեն դրվում է ապաթարց՝ **կը > կ⁴³: Կ՝** մասնիկը արտասանվում ու գրվում է բայի հետ՝ **կ՝ըսես, կ՝ընէ, կ՝օրօրէք, կ՝օրհնենք** և այլն. «Եւրոպա **կ՝ապաստանի** երիտօրքական շարժման երրորդ մեծ դէմքը», «1900 Յուլիսիւն տեղի **կ՝ունենայ** Սասնոյ Սպաղանք գիւղի ջարդը» («Հայկազեան հայագիտական հանդէս»):

2. **Սը (մըն)** անորոշ հոդի **ը** մասնիկը ձայնավորով սկսվող բառերից առաջ սղվում է, որի փոխարեն դրվում է ապաթարց՝ **գիրք մըն է – գիրք մ՛է, կեանք մըն ալ – կեանք մ՛ալ**. «Դուք խօսեցէք քիչ **մը**, մենք Աբիստղոմ աղային հետ պզտիկ գործ **մ՛ունիմք**» (Հ. Պարոնյան), «Օ՛ն, հառաչ **մ՛ալ**, արցունք մըն ալ. – վերջի՛նն է» (Դ. Վարուժան): Այս հնչյունափոխությունը գործում է հիմնականում չափածո խոսքում: Տաղաչափական նպատակներով երբեմն **մը** հոդի **ը**-ն սղում են բաղաձայնից առաջ, բայց սա անհատական ոճի արտահայտություն է կամ մնացուկային երևույթ և գրական լեզվի նորմերից չի բխում, օրինակ՝ «Ձոյգ մը բիբեր, զոյգ **մ՛հոգեվարք** կայծռիկ» (Դ. Վարուժան), «Վարդի **մ՛համար** լքեց զիս», «Մղում **մ՛յամառ** նորէն քայլերս ուղղեց հո՛ն» (Մ. ՋարիՖյան):

43 Հնչյունափոխության այս մասնակի դրսևորումը, իհարկե, ուղղակիորեն չի առնչվում շեշտափոխության հետ: Այս և նման հնչյունափոխական իրողությունները **կը երթամ-կ՛երթամ, չի իմանար-չ՛իմանար, մի իջներ-մ՛իջներ, մոռանալ-մոռնալ, սովորել-սորվիլ, բաղանիք-բաղնիք, բաժանել-բաժնել** և այլն, Ա. Այտընյանը դասում է հնչյունների փոփոխության **անփոփում** կոչվող տեսակի մեջ՝ «Գրերու ամփոփմունքը» (տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 274–275):

Ի ձայնավորի հնչյունափոխությունը

Այս ձայնավորը երկու գրականներում էլ խիստ փոփոխվող է:

1. Բառասկզբում սակավաթիվ բառերում բառակազմության ժամանակ **ի**–ն հնչյունափոխվում է **ը**–ի՝ **ինձ–ընծուղտ, իղձ–ըղձալի, ինչ–ընչաքաղց**:

2. Բազմավանկ բառերի բառավերջի փակ վանկի **ի**–ն բառակազմության ժամանակ սովորաբար սղվում է՝ **դեղին–դեղնաւուն, միջին–միջնադար, հաշիւ–հաշուակալ** (արևել.՝ **հաշվապահ**), **գետին–գետնանցում**: Արևմտահայերենը այդ **ի**–ն երբեմն պահում է՝ «Բնակիչներեն **պղինձ**է ամանները ժողվելով զանոնք դրամի փոխակերպեց եւ գործատրերեն տուրքեր հաւաքեց», «Բայց գտնուեցան ելմտական այնպիսի պաշտօնեաներ, որոնք **անբարեխիղճութիւն** նկատեցին նման արարքի մէջ գտնուիլ» («Ժամանակ»):

Ծանոթություն: Մի շարք դեպքերում երկփակ **ի** ունեցող բառերն ու արմատները բառակազմության մեջ արևելահայերենում գործածվում են հնչյունափոխված հիմքով, արևմտահայերենում պահպանում են անփոփոխ հիմքերը կամ հանդես են գալիս զուգահեռ ձևերով (սկզբում տրվում են արևելահայերեն ձևերը)՝ **բջիջ–բջջային / բջիջային, շիլ–շլութիւն / շիլութիւն, սիրտ–սրտխառնուք / սիրտխառնուք, ծիծ–ծծմայր / ծծմայր** (նախընտ.) // **ծիծմայր** (տե՛ս Ռ. Սաքապետոյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 20):

3. Բազմավանկ բառերում բառավերջի բաց վանկի **ի**–ն բառակազմության ժամանակ կարող է և՛ պահպանվել (**այլազգութիւն, արիական, կղզիաբնակ, անպարտելիութիւն, անկարելիութիւն**), և՛ սղվել (**անօթի–անօթութիւն, կատաղի–կատաղաբար, զաղտնի–զաղտնապահ, հայրենի–հայրենական, հայելի–հայելասրահ, բարի–բարօրութիւն**): Այստեղ որևէ կայուն օրինաչափություն երկու գրականներում էլ դժվար է սահմանել: Մի շարք դեպքերում գործածական են համարվում նույն բառի և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ տարբերակները, ինչպես՝ **ամեհութիւն // ամեհիութիւն, բարութիւն // բարիութիւն, գիւղացու-**

թիւն // գյուղացիութիւն, գոլորշանալ // գոլորշիանալ, խելացութիւն // խելացիութիւն, վաղեմութիւն // վաղեմիութիւն և այլն: Սրանցից մի քանիսը արևմտահայերենում և արևելահայերենում տարբերվում են գործածության որոշ հաճախականությամբ կամ նախընտրելի և ոչ նախընտրելի, հանձնարարելի և ոչ հանձնարարելի լինելու հատկանիշներով: Օրինակ՝ ըստ «Հայոց լեզվի նոր բառարան»-ի տվյալների՝ արևմտահայերենում գործածվում է **ակնյայտութիւն** հնչյունափոխված բաղադրյալ հիմքով կազմությունը (**ակն + յայտնի + ութիւն**), որը «Արդի հայերենի բացատրական բառարան»-ով արևելահայերենում չի վկայվում, իսկ **ակնհայտնիություն** բառի փոխարեն նույն բառարանը արևելահայերենի համար սովորական է համարում **ակնհայտություն** տարբերակը՝ *Ակնհայտնիություն, տե՛ս Ակնհայտություն* նշումով: Մեկ ուրիշ օրինակ՝ ըստ արևելահայերենի բացատրական բառարանների՝ հնչյունափոխված հիմքով **հղություն** կազմությունը հնացած է. արևելահայերենում գործածական է անհնչյունափոխ հիմքով տարբերակը՝ **հղիություն**: Մինչդեռ արևմտահայերենի՝ վերը նշված բառարանի վկայությամբ՝ արևմտահայերենում գործածական է հենց հնչյունափոխված հիմքով տարբերակը՝ **յղութիւն**: Հանդիպում է նաև բնագրերում. «Խնդումներս եւ առատածեռն հայրը կրցած էր սիրաշահիլ տիկին Պիւքը, որ հակառակ իր յաւիտենական **յղութեան**, կ'աշխատի ու կը շարժի անվերջ» (Շ. Շահնուր): Կամ՝ **քենակալ** բառը արևմտահայերենը գործածում է երկու տարբերակով՝ **քենակալ** և **քենեկալ**: Արևելահայերենում գործածական է միայն առաջինը՝ արմատի **ի** ձայնավորի սղումով կազմված ձևը՝ **քենակալ**: Երկրորդը, որ կազմված է արմատի **ի** վերջնահնչյունի և **ա** հոդակապի հնչյունափոխությամբ (**քենի + ա + կալ < քենեկալ**), արևմտահայերենին է անցել միջին հայերենից:

4. Արևելահայերենում **ի** ձայնավորը, բաց վանկում հանդիպելով **ա** ձայնավորի (**ակ** նասնիկից առաջ), փոխվում է **յ**-ի՝ **որդի-որդյակ, հոգի-հոգյակ, կղզի-կղզյակ**, արևմտահայերենում փոխվում է **ե**-ի. պահպանվում է գրաբարյան ուղղագրությունը՝ **որդի-որդեակ (<որդի + ակ), հոգի-հոգեակ (<հոգի + ակ), կղզի-կղզեակ (<կղզի + ակ), պատանի-պատանեակ (<պատանի + ակ), աղաւնի-աղաւնեակ (<աղաւնի + ակ)**: Նույն դիրքում **ի**-ն **ո** ձայնավորին հանդիպելիս գրաբար հղու-

վաճակներում փոխվում է **Լ-ի՝ որդի-որդւոյ** (<որդի + ո + յ), **ոսկի-ոսկւոյ** (<ոսկի + ո + յ), **հոգի-հոգւոյ** (<հոգի + ո + յ) և այլն:

Երկու գրականների համար ընդհանուր հնչյունափոխական իրողություն է, երբ բառակազմության ժամանակ բազմավանկ բառի բաց վանկի **ի** ձայնավորը, միանալով **ա** հոդակապին, կարող է փոխվել **ե-ի**, ինչպես՝ **բարի + ա + կամ>բարեկամ, հոգի + ական>հոգեկան, տարի + ա + վերջ>տարեվերջ** և այլն: (Բայց երկու տարբերակներում էլ ունենք նաև՝ **արդիական, որդիական, արիական, կղզիանալ**):

5. Արևելահայերենում բազմավանկ բառերի վերջնավանկի **ի** ձայնավորը եզակիում **ու** հոլովիչով հոլովվելիս ընկնում է՝ **որդի-որդու, գինի-գինու** և այլն (ընկնում է նաև **տարվա** ձևում՝ **տարի-տարվա**), **ի-ով** հոլովվելիս մնում է՝ **Սոչիի, Վեդիի, Անիի, Գյումրիի** և այլն:

Արևմտահայերենում **ի-ով** վերջացող գոյականները հոլովվում են **ի** հոլովիչով, ուստի հիշյալ բառաձևերում **ի** ձայնավորի անկում չի արձանագրվում, այսպես՝ **գինի-գինիի, որդի-որդիի, ուսուցչուհի-ուսուցչուհիի, կիսանդրի-կիսանդրիի, պատանի-պատանիի, Անի-Անիի** և այլն: Օրինակ՝ «...**Աւագանիին** կեդրոնատեղին դարձուց զայն» («Ժամանակ»), «Զգաց **հոգիին** վերելքը ու երակներուն մէջ՝ արիւնին ջերմութիւնը» (Ա. Արփինե), «Ով որ յիշէ կարմիր վարդերուն հէքիաթը, թող չմոռնայ **աստուածուհիին** ցաւն ալ» (Շ. Նարդունի), «Տիկին Մինեօ դիպուածաւ կու տայ իր նախկին **աշակերտուհիին** անունը՝ Սուլանժ» (Վ. Շուշանյան):

Արևելահայերենում այս բառերի գործիական հոլովում հանդիպում են զուգահեռ կազմություններ՝ **ուղիով-ուղով, այգիով-այգով, մատանիով-մատանով, գինիով-գինով, որդիով-որդով, ոսկիով-ոսկով**: Սակայն արևմտահայերենում նույն հոլովաձևում սովորական է անհնչյունափոխ ձևը՝ **ուղիով, գինիով, ոսկիով** և այլն՝ «Ու կ'արբենամ **գինիով** Անիունի մեծ կարասին» (Դ. Վարուժան):

6. Արևմտահայերենում օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի **չի**–ն ձայնավորով սկսվող բայերից առաջ ենթարկվում է հնչյունափոխության. **ի**–ն սղվում է, որի փոխարեն գրավոր խոսքում դրվում է ապաթարց, ինչպես՝ **չի երթար–չ’երթար, չի ըսեր–չ’ըսեր, չի ուտեր–չ’ուտեր, չի ըլլար–չ’ըլլար** և այլն: Արևմտահայերենում սրանք զուգահեռ կազմություններ են: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել նաև հետևյալին. ըղծական անցյալի ապառնիի եզակի երրորդ դեմքի կազմության մեջ **չ** ժխտական մասնիկը ուղղակի ավելանում է բայափոխման և առանց ապաթարցի: Իբրև անցյալի ձևեր՝ դրանք գրվում են **է–ով**, ինչպես՝ **չուզեր, չըներ, չօգներ**: Բանավոր խոսքում վերջինները արտասանվում են առանց դադարի, և դժվար չէ նկատել նաև, որ ներկայի ժխտականի կազմության մեջ արտասանության ժամանակ շեշտվում է բառի ոչ թե վերջին (ինչպես ըղծականի դեպքում), այլ առաջին վանկը. հմմտ.՝ անկատար ներկա՝ **չ’ըսեր** (արևել.՝ **չի ասում**), **չ’երթար** (արևել.՝ **չի գնում**), **չ’ըլլար** (արևել.՝ **չի լինում**), բայց՝ ըղծական անցյալ՝ **եթէ չըսէր** (արևել.՝ **եթե չասեր**), **թող չերթար** (արևել.՝ **թող չգնար**), **չըլլար** (արևել.՝ **չլիներ**): Բնագրային օրինակներ՝ «Գործակցութիւնը **չ’իրականանար**՝ արտաքին միջամտութեան հարցով Ռեզայի անզիջող կեցուածքին պատճառով», «...որոշումը շրջանային վարչութիւններուն կողմէ խանդավառութեամբ **չ’ընդունուիր**» («Հայկազեան հայագիտական հանդէս»), «Միայն դժբախտներու սեւ օրն է, որ երկար է ու **չ’անցնիր**, չի քալեր...» («ժամանակ»), «Բայց իր յիշատակը կ’ապրի եւ օր **չ’ըլլար** որ իր խօսքը չընեն» (Գ. Զուրապ), բայց՝ «Եթէ **չիրականանար** անոր ծրագիրը, մենք մեծ դժուարութիւններ ունենալու էինք» («Ազդակ»):

Ընդունված է արևմտահայերենի **մը** անորոշ հոդի ծագումը բացատրել **մի** անորոշ հոդի **ի** ձայնավորի հնչյունափոխությամբ՝ **մի>մը**–մարդ **մի>մարդ մը**: Սակայն արևմտահայ քերականներից Հ. Գազանճյանը **մը**–ի առաջացումը կապում է հնչյունափոխական այլ իրողության հետ, որ ավելի հավանական է թվում մեզ. «...Գրաբարի **իմն, ոմն** անորոշ ածականները,— գրում է նա,— աշխարհաբարի մէջ եղած են **մը** (անկունով նաեւ **ի** և **ո**–ի): Սակայն **ն** կը վերահաստատուի **եմ** բային սահմանա-

կան ներկայի եւ անկատարի բոլոր ձեւերէն եւ **ալ** շաղկապէն առաջ, օրինակ՝ **մարդ մըն ալ, ասիկա պալատ մըն է** և այլն»⁴⁴: Այնպէս, ինչպէս առաջացել է **ը** որոշիչ հոդը՝ վերջնահանգում (**ը**) **ն>ը** զարգացումով. «... Զմնտ. բառակազմական հետևյալ տեղաշարժերը՝ **խառ(ը)ն>խառը, սառ(ը)ն>սառը, ...տաս(ը)ն>տասը, ին(ը)ն>ինը** և այլն: Այս կերպ բաղաձայնահանգ հիմքերին կցված **ն** հոդը նույն օրինաչափութեամբ փոխարինվել է **ը**-ով. **քաղաք(ը)ն=քաղաք(ը)ն>քաղաքը**»⁴⁵:

7. Արևմտահայերենը, ինչպէս նշվել է, որպէս կանոն ձևակազմութեան (հոլովման և հոգնակի կազմութեան) ժամանակ անփոփոխ է պահուծում հիմքերը: Փակ վանկի **ի** ձայնավորը արևմտահայերենում համեմատաբար կայուն է:

Արևելահայերենում մի շարք միավանկ բառերի փակ վանկի **ի** ձայնավորը հնչյունափոխվում է **ը**-ի, ինչպէս՝ **գիրք-գըրքեր, միտք-մըտքեր, գիր-գըրեր, գիծ-գըծեր, սիրտ-սըրտեր**, կամ՝ **գըրքի, գըրքից, գըրի, գըրից**, այլ դեպքերում չի հնչյունափոխվում՝ **թիմ-թիմեր, կիրծ-կիրծեր, հիմք-հիմքեր, ծիրք-ծիրքեր**, կամ՝ **թիմի, թիմից, թիմով, հիմքի, հիմքից, ծիրքով** և այլն:

Ծանոթություն: Միջին հայերենում թուրքերենի միջնորդութեամբ պարսկերենից փոխառված **փիլիսփ** բառը (կերակրատեսակ) արևմտահայերենին է անցել նույնութեամբ՝ առանց հնչյունափոխութեան (**փիլիսֆ** (հնգ.) // **փիլիս**) («Մայրիկս շատ ցաւեցաւ չկրնալ տեսնելու համար զքեզ, ...թէ իր **փիլիսֆն** ուտելով՝ իր տանտիկնութեան յարզը բարձրացուցած պիտի ըլլայիր» (Դ. Վարուժան)). արևելահայերենը գործածում է բառի հնչյունափոխված տարբերակը՝ **փլիսփ** («Գառան **փլիսփ** է ուտում, վրան էլ նռան ջուր խմում» (Ավ. Իսահակյան)): Արևմտահայ գրականում սովորական է այդ բառի հայերեն տարբերակը՝ **եղինծ**:

Արևելահայերենին հատուկ վերը նշված հնչյունափոխված հիմքով ձևերը արևմտահայերենում սովորաբար ունենում են անհնչյունափոխ հիմ-

44 **Յովհ. Գագանձեան**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 69:

45 **Դ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 409:

քեր, ինչպես՝ **գիրք–գիրքերու, գիրքի, միտք–միտքերնիս, միտքի, գիր–գիրեր, սիրտ–սիրտեր, սիրտի** և այլն: Սակայն այս կանոնը կայուն չէ. գործածվում են նշված բառաձևերի նաև հնչյունափոխված տարբերակները՝ **գիրեր // գրեր, սիրտեր // սրտեր, միտքի // մտքի, միտքեր // մտքեր** և այլն, ինչպես՝ «**Սիրտերը** մեր գարնանային Կը վառին Ծառերուն պես արքենի» (Բ. Թովալյան), «Քաղցրութիւն, հոտ, **միրգերու** բոյրը՝ գինիէ ու աշնանային ծաղիկներով: **Սիրտերը**՝ կակուղ» (Հ. Օշական), «Խաժակ փառաբանութիւնը ըրաւ **գիրին** ու արուեստին», «Քաղաքական տօները յաճախ արեան **բիծեր** կ'ունենան իրենց վրայ», «Սկսան հայերէն **գիրքեր** տպուիլ», «Դժուարութիւն կը կրէին համդարտ **միտքով** իրենց խմբագրական աշխատանքը տանելու...» (Ա. Գոչունյան), «Միջա-հասակ, սիրուն, ներդաշնակ **գիծերով**, ծուկի նման մարմին մը ուներ» (Կարո Ալակետոզ), «Կրնա՞ր վայրկեանի մը մէջ մոռնալ ամէն ինչ ու նոր բացուած սա տետրակը գոցելով՝ վերադառնալ հին **գիրքին**» (Ն. Ակիշյան), «...եւ **քիթին** ճիշդ ծայրը կախուած վտանգը չի տեսներ» (Վեհանուշ Թեքեյան): Բայց ունենք նաև՝ «Ու մեղմութեամբ մտերմանալ շրջապատող հոգիներուն. **սրտերու** մէջ լուսարծագանգ ըլլալ գերագոյն համադրութիւն» (Բ. Թովալյան), «Մեզմէ վրիպող ուժեր կը զարնեն մեր **սրտերուն** դուռները» (Հ. Օշական), «Մինչ այդ ողջագուրուններ տեղի կ'ունենան սիրազեղ **սրտերու** միջեւ...», «...Հանդարտեցնելու համար գայթակղեալ **մտքերը**» (Ա. Գոչունյան), «Անպայման **քթին** տակէն երգ մը կը մռմռար» (Ա. Ազնավուրյան):

Արևելահայերենում փակ վանկի **ի** ձայնավոր ունեցող մի շարք բազմավանկ բառեր հոլովվելիս հնչյունափոխվում են, ինչպես՝ **գործիչ–գործչի, փրկիչ–փրկչի, բաժին–բաժնի, Մկրտիչ–Մկրտչի, Լուսաւորիչ–Լուսաւորչի, թարգմանիչ–թարգմանչի**, կամ՝ **թոնրից, նախրից, ուսուցչից, հովվից, գրչով, գավթով, ծաղկով** և այլն: Սրանց չհնչյունափոխված տարբերակները զրական արևելահայերենի համար խորթ են, ունեն խոսակցական երանգ կամ հնացած են, մինչդեռ զրական արևմտահայերենի համար սովորական են, ինչպես՝ **գործիչի, Մկրտիչի, Լուսաւորիչի, թարգմանիչի, գրիչի, ծաղիկի, հովիվի, թոնիրի, գաւիթի, կամ ուսուցիչէ, ուսուցիչով, փրկիչէ, փրկիչով, բաժինէ, բաժինով, գաւիթէ, գաւիթով** և այլն: Օրինակ՝ «Վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային Պիտ՝

հասուննայ մաս մ՝Յիսուսի **մարմինէն**» (Դ. Վարուժան), «Կարդաց Յարութիւնը **գիրքին** վրայէն կենսագրական **բաժինին** մէջ մատիտով աւելցընելով մահուան թուականը» (տե՛ս Զ. Քյուրքճյան), «Վենետիկի Մխիթարեանները 18րդ դարու **սկիզբէն** հաստատուելով Վենետիկի Սուրբ Ղազար կղզիին մէջ (1717), լծուեցան ժրաջան աշխատանքի եւ շատ ծառայութիւններ մատուցին հայոց մշակոյթին ու գրականութեան» (Մուշեղ Իշխան), «Սեպտեմբերի **սկիզբներն** էին» (Յ. Օշական), «Բուխարիկներէն բարձրացող կենսաւետ ծուխը հանդարտօրէն կը բարձրանար ամպոտ **երկինքին** դէմ», «Աննկարագրելի գիշեր մը անցուցած էր **ամուսինին** թեւերուն մէջ» (Ն. Ակիշյան), «Սուրբ **Սարգիսի** Շաբաթ գիշերը մեր տան մէջ 12 հոգինոց երկու սեղան կը սարքուէր» («ժամանակ»), «— Եկ՛ւր, եկուր անցի՛ր **անկողինիս** այս կողմը եւ գլուխդ մօտեցո՛ւր ինձի» (Ռ. Դատտեճյան):

Ինչպես արեւլահայերենում, այնպես էլ արևմտահայերենում փակ վանկի **ի** ձայնավոր ունեցող բազմաթիվ այլ բառեր հոլովվելիս չեն հնչյունափոխվում, ինչպես՝ **կործանիչի, եղանակիչի, մարդկայինի, կարծիքի, մասնիկի, տորմիղի, քրքիջի, դպիրի, կեղեքիչի, կամ՝ զարմիկի, զարմիկից / զարմիկէն, զարմիկով, վարիչի, վարիչից / վարիչէն, վարիչով, խրճիթի, խրճիթից / խրճիթէն, խրճիթով** և այլն:

Այսպիսով, գրական արևմտահայերենի համար ձևակազմության ժամանակ հնչյունափոխված տարբերակները սովորական չեն և առավելապես բնորոշ են չափածո խոսքին: Հանձնարարելի և իշխող են անհնչյունափոխ հիմքով ձևերը՝ **գիրէն, գիրքով, սիրտեր, միտքեր, նաև՝ հեռագիրներ, ծրագիրի, ծրագիրէ, ծրագիրով, ծրագիրներ, պատմագիրքեր, զարդագիրեր, սկիզբէն** և այլն:

Ծանոթություն: Մի շարք բառերում արևմտահայերենում ձևակազմության ժամանակ սովորական է **ի–ի** սղումը՝ **լուսին–լուսնի, պատիւ–պատուի, երկիր–երկրէ, երկրով, երկրէն**, թեև գործածական են նաև դրանց անհնչյունափոխ հիմքով կազմությունները՝ **լուսնի, պատուի, կամ՝ երկիրի, երկիրէն, երկիրով** և այլն:

Ու ձայնավորի հնչյունափոխությունը

Երկու գրականներում էլ **ու**-ն շեշտի կորստի դեպքում փոփոխվող ձայնավոր է: Տարբերությունները առավելապես դրսևորվում են ոչ թե բառակազմության, այլ հողլվման և հոգնակի կազմության ժամանակ: Արևմտահայերենը այս դեպքում նույնպես հակված է անփոփոխ պահելու ձևակազմական հիմքերը: Այսպես.

1. Բառասկզբում **ու** ձայնավորը երկու գրականներում էլ սակավաթիվ դեպքերում է ենթարկվում հնչյունափոխության՝ **ոււնայ-ընպանակ-ընպելիք, ունդ-ընդդեհն, ունչ-ընչացք**: Սրանք հնից եկող ձևեր են, քանի որ միավանկ բառերի բառասկզբի շեշտակիր **ու**-ն որպես կանոն մնում է անփոփոխ՝ **ուղտ-ուղտապան, ուրց-Ուրցաձոր, ուս-ուսապարկ** և այլն: Անփոփոխ է մնում միավանկ այն բառերում, որոնք վերջավորվում են մեկ բաղաձայնով՝ **ուլ, ուշ, ութ, ուս** և այլն: Դեռևս միջին հայերենում գրավոր լեզվի մեջ իր արտահայտությունն է ստացել բանավոր-խոսակցական լեզվից փոխանցված՝ **ու**-ի պատմական հնչյունափոխության մեկ այլ երևույթ՝ **ու**-ի անկումը բառասկզբում՝ **ղ**-ից առաջ՝ **ուղարկել-դրկել**: Այս իրողությունը փոխանցվեց գրական արևմտահայերենին (պոլսահայ բարբառում նաև՝ **ուխատաւոր>ըխտաւոր, ուղեղ>ըղեղ** և այլն): Արևելահայերենը պահպանեց բառի ուղիղ ձևը:

2. Ու ձայնավորը երկու գրականներում էլ **բառակազմության** ժամանակ փակ վանկում սղվում կամ դառնում է **ը**՝ **աշուն-աշնանացան, մածուն-մածնապուր, դուռ-դռնապան, մուխ-մքխալ, շուն-շքնական, ջուր-ջրաման, լուռ-լռակեաց**: –ում և –(ա)սուն ածանցների ձայնավորը բառաբարդման կամ ածանցման դեպքում սովորաբար չի սղվում, ինչպես՝ **խնդումբես, ուսումնական, եօթանասունամեակ** (բայց՝ **յիսուն-յիսնամեակ // յիսունամեակ, քառասուն-քառասնամեակ // քառասունամեակ**):

Առանձին բառեր դրսևորում են հնչյունափոխական մասնակի տարբերություններ: Այսպես՝ արևմտահայերենում բառակազմական զուգահեռ ձևեր է ստեղծում **խոստում** բառը. ըստ բառարանային տվյալների՝ հավա-

սարապես գործածական են այդ բառի և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքից կազմությունները, ինչպես՝ **խոստումնագիր // խոստմնագիր, խոստումնազանց // խոստմնազանց, խոստումնալից // խոստմնալից, խոստումնադուժ // խոստմնադուժ** և այլն: Հաճախ են հանդիպում նաև բնագրային կիրառություններում, ինչպես՝ «...Կը բուլրուէին **խոստմնալից** ու **խոստմնապահ** այս պայուսակին շուրջը» (Գ. Ջոհրապ), «Այդ շրջանին «Մարմարա» կոչ ըրած է ընթերցողներուն՝ օժանդակել երկու **խոստմնալի** երիտասարդներու...» (Ա. Գոչունյան): Մինչդեռ արևելահայերենում գործածական են դրանց միայն անհնչյունափոխ ձևերը՝ **խոստումնազանց, խոստումնալից** և այլն:

Արթնանալ բառի ածական բայահիմքը արևելահայերենում ձևավորվել է **ու** ձայնավորի անկումով՝ **արթնանալ–արթնարթուն**, իսկ արևմտահայերենում՝ **ու>ը** հնչյունափոխությամբ՝ **արթնանալ–արթըննալ**: Արևելահայերենը վերցրել է գրաբարյան ձևը (**արթնանամ, զարթնանամ**՝ «Քուն հեղգացեալ մարմնոյս **արթնանայ** հոգեւոր զուարթութեամբն»), իսկ արևմտահայերենը որդեգրեց գրաբարում ռամկական համարվող **արթըննալ** տարբերակը, որ զանազան տարբերակային ձևերով գործածական էր դարձել միջին հայերենում՝ **արթըննալ, արթընալ, արթնալ, արթնուլ** («Եթէ ոք խօսողին ձայնէն **արթըննայ**՝ այլ չի կարէր քնել»⁴⁶): Օրինակ՝ «Իսկ անդորրին մէջ դաշտերուն ահա ծըղրիդ մը **արթընցած** Կը լեցնէ իր երգերով ամբողջ Անհունն աստեղամած» (Դ. Վարուժան):

3. Արևելահայերենում փակ վանկի **ու–ն** ձևակազմության ժամանակ մի շարք բառերում հնչյունափոխվում է, ինչպես՝ **մածուն–մածնի, աշուն–աշնան, խումբ–խմբի, ծնունդ–ծննդի, սնունդ–սննդի**, կամ **ջուր–ջրի, ջրից, ջրով, ջրեր, դուռ–դռան, դռնից, դռնով, դռներ, տուն–տնից** և այլն:

Արևմտահայերենում նույն դիրքում **ու–ն** սովորաբար մնում է անփոփոխ՝ **մածուն–մածունի, աշուն–աշունի** և այլն, կամ՝ **ջուր–ջուրի, ջուրէ, ջուրով, ջուրեր, դուռ–դուռի, դուռնէ // դուռէ, դուռնով // դուռով, դուռներ, շուն–շունի, շունէ, շունով, շուներ, տուն–տունի, տունէն**: Օրի-

46 Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ա հատոր, Երևան, 1987:

նակ՝ «Ամեն ինչ մոխիր է, յիշատակ. լճակները ի զուր չյուզուին. Ոչ շառաչ, ոչ հառաչ **ջուրին** տակ. ալիքը՝ գերեզման ալիքին» (Ձ. Գազանճյան), «Աղբիւրները չչորցած՝ **ջուրին** արժէքը չես գիտնար» (տե՛ս Դ. Սաքայան), «Ամեն **գարունին** Տափան Մարգար իր գոմէշներուն հետ դաշտ կ'ելլէր» (Համաստեղ), «Չինական կուռքի նման գոհարագարդ, **աշունի** ծառերուն ու ծաղիկներուն մէջ նստած էր տունը» (տե՛ս Հ. Չոլաքյան), «...Հաճեցէք **թուղթին** յանձնել այս մասին ձեր ընելիք բողոքները», «Ու հաւաքուած հազարաւոր **ժողովուրդին** ուղերձ մը արտասանելով յայտնեց...» (Ա. Գոչունյան), «Գալով Օրիորդ Արաքսիին, կ'երեւի **սնունդի** պակասէ նիհարցած, թոքերը տկարացած էին» («Ժամանակ»):

Ծանոթություն: Այս գոյականներից շատերը արևմտահայերենում ունեն նաև հնչյունափոխված հիմքերով զուգահեռ կազմություններ՝ **մատուռ-մատրան, աշուն-աշնան, շուն-շան, տուն-տան, դուռ-դրան-դմնէ-դմնով, դմներ** և այլն:

Երկփակ **ու** ունեցող միավանկ բազմաթիվ բառեր երկու գրականներում էլ հոգնակի կազմելիս և հոլովվելիս չեն հնչյունափոխվում, ինչպես՝ **կուռք-կուռքի, կուռքեր, մուրճ-մուրճի, մուրճեր, տուփ-տուփի, տուփեր, լուր-լուրի, լուրեր** և այլն:

4. Բառավերջի բաց վանկի ու-ն երկու գրականներում բառաբարդման կամ ածանցման դեպքում սովորաբար վերածվում է վ-ի (արևմտ. պահպանելով գրությունը)՝ **կատու-կատուագգի, աղու-աղումագ, ձու-ձուածեղ, լեզու-լեզուական:** (Բայց ունենք նաև՝ **վաշխառուական, վերարկուաւոր, կապալառուական**):

Ու-ն նույն դիրքում անփոփոխ կարող է մնալ ձևակազմության մեջ (հոլովվելիս)՝ **դասատու-դասատուի, դասատուից / դասատուէն, դասատուով, ուրու-ուրուի, հարսնացու-հարսնացուի, ժողովածու-ժողովածուով:** Արևմտահայերենը, սակայն, անփոփոխ է պահում նույն կազմությունն ունեցող մի շարք գոյականների հոլովական հիմքերը, որոնք արևելահայերենում հնչյունափոխվում են, ինչպես՝ **առու-առուի-առուէն-առուով, կատու-կատուի-կատուէն-կատուով,** կամ՝ **մեղու-**

մեղուի, եղջերու–եղջերուի, բու–բուի, արու–արուի, թթու–թթուի և այլն (**ու**–ն այս կազմութուններում կարդացվում է որպես **ու** ձայնավոր):

Ծանոթություն: Հոգնակիի կազմության դեպքում հիմնականում բառավերջի դիրքում **ու** ձայնավորը երկու գրականներում էլ չի հնչյունափոխվում՝ **ժողովուրդ–ժողովուրդներ, մեղու–մեղուներ, ուրու–ուրուներ:**

5. –ուն ածանցով բայանունները երկու գրականներում էլ **ան** հոլովման դեպքում կորցնում են **ու** ձայնավորը՝ **հոլովում–հոլովման, շարժում–շարժման, ուսում–ուսման:** Սակայն արևմտահայերենում նախընտրելի են այդ գոյականների **ի** հոլովման ձևերը, որոնցում հիմքը մնում է անփոփոխ՝ **շարժում–շարժումի, հոլովում–հոլովումի, համբարձում–համբարձումի:**

6. Ու ձայնավորը արևելահայերենում բառամիջում (փակ վանկում) հոլովման կամ հոգնակիի կազմության դեպքերում դառնում է գաղտնավանկի **ը**, երբ միավանկ բառը՝ որպես բարդ բառի երկրորդ բաղադրիչ, չի պահպանում իր հիմնական իմաստը, ինչպես՝ **անձրևաջուր–անձրևաջ(ը)րի–անձրևաջ(ը)րեր, արժեթուղթ–արժեթ(ը)ղթի–արժեթ(ը)ղթեր:** Արևմտահայերենում նույն դիրքում **ու** ձայնավորը որպես կանոն մնում է անփոփոխ, ինչպես՝ **անձրևաջուր–անձրևաջուրի–անձրևաջուրեր, արժեթուղթ–արժեթուղթի–արժեթուղթեր, հողաթումբ–հողաթումբի–հողաթումբեր, նամակատուփ–նամակատուփի–նամակատուփեր:** Օրինակ՝ «Վերոյիշեալ համբաւաւոր երաժշտագէտները ...**չքախումբով** մը հոգեզմայլ երգեցողութեամբ վերացան եւ վերացուցին մեզ՝ ներկայ հաւատացեալները», «Հայրս երբեմն **խմբագրատունէ** դարձին սրտնեղած երբ տուն գար, կը մթագներ մեր բնակարանին մթնոլորտը» («Ժամանակ»):

7. Փակ վանկի ու ձայնավոր ունեցող միավանկ և բազմավանկ մի շարք բառեր արևելահայերենում հոլովվում կամ երբեմն նաև հոգնակի են կազմում և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով, ինչպես՝ **թուզ–թուզի//թզի, թզեր//թուզեր, բուբ–բբի//բուբի, բբեր//բուբեր,**

քուրմ–քրմի//քուրմի, քրմեր//քուրմեր, կամ խունկ–խունկի//խնկի, բայց խունկեր, հունձ–հունձի//հնձի, բայց հունձեր, կամ ծնունդի//ծննդի, բլուրի//բլրի, մածունի//մածնի, կորուստի//կորստի, անդունդի//անդնդի, փախուստի//փախստի, ծմերուկի//ծմերկի և այլն: Մասնագիտական գրականության մեջ հանձնարարելի են համարվում դրանց անհնչյունափոխ տարբերակները, քանի որ «փոփոխվածները հնացած են և անբարեհունչ»⁴⁷: Մինչդեռ արևմտահայերենում գործածական են հենց անհնչյունափոխ տարբերակները՝ **թուզի, թուզեր, քուրմի, քուրմեր, խունկի, խունկեր, հունձի, հունձեր, կամ ծնունդի, բլուրի, մածունի, կորուստի, անդունդի** և այլն: Օրինակ՝ «Ձեփիւռը թեթև խաղեր կը սարքէր վայրի **թուփերու** հետ» (Ն. Ակիշյան), «Բայց անոր մատները չէին ձգեր աղջկան ձեռքը... **կամուրջի** մը պէս՝ մահուան ու կեանքին մէջտեղը», «Յագին՝ որ պիտի գալարուէր... **կուրծքին** անդունդներէն ու սողոսկէր պիտի դէպի կոկորդը» (Հ. Օշական):

Ծանոթություն: Արևմտահայերենում **մանուշակագոյն** բառին զուգահեռ գործածվում է նաև **մանիշակագոյն**-ը. «**Մանիշակագոյն** վերին աստիճանի գեղեցիկ ծաղիկներ, բայց այդքան միայն» (տե՛ս Հ. Չոլաքյան): Կազմված է ասորերենից փոխառյալ **մանիշակ** նախատիպից (տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 256), սակայն երբեմն թյուրիմացաբար ընկալվում է որպես հնչյունափոխական տարբերակ:

2.2. ԵՐԿԱՐԲԱՌԱԿԵՐՊԵՐԻ (ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ) ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայերենում շեշտի նկատմամբ զգայուն են և, բառաթեքման կամ բառակազմության ժամանակ շեշտակորույս լինելով, հնչյունափոխվում են հիմնականում **ի, եա, ոյ** երկբարբառակերպները և **եայ**-ը:

47 **Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան**, Ժամանակակից հայոց լեզու, հատոր 1, Երևան, 1979, էջ 139–140:

Իւ (արևել. յու)

Քիչ է ենթարկվում հնչյունափոխության և տարբերություններ գրեթե չի դրսևորում արևելահայերենից, եթե նկատի չունենանք ուղղագրական տարբերությունները:

ա) Մի քանի բառերում սղվում է՝ **սփիւռ(ք)**–սփռել, սփռոց, **մրջիւն**–մրջնանոց, մրջնաբոյն, մրջնակեր, **ալիւր**–ալրավաճառ և այլն: Այստեղ երկու գրականները չունեն տարբերություններ:

Կան մասնակի տարբերություններ՝ կապված առանձին բառերի կամ բառածևերի հետ: Օրինակ՝ **ծիւն** բառով բաղադրված առանձին կազմություններում, ըստ բառարանների տվյալների, արևելահայերենը նախապատվությունը տալիս է հնչյունափոխված ձևերին կամ գործածում է երկու տարբերակներն էլ՝ **ծնաբուլք // ձյունաբուլք, ձնաջուր // ձյունաջուր, ձնագնդակ // ձյունագնդակ, ձնակույտ, ձնհալ, ձնծաղիկ**, իսկ արևմտահայերենը նախընտրում է դրանց մի մասի անհնչյունափոխ ձևերը՝ **ծիւնաջուր, ձիւնագնդակ, ձիւնակույտ, ձիւնահալք** և այլն: Օրինակ՝ «Կակուղ ձիւնին վրայէն արդէն անցած էր ճամբաները մաքրող ինքնաշարժը, եւ այժմ կարծրացած հողը ցեխի կը վերածուէր **ծիւնհալի** պատճառաւ» (Ն. Ակիշյան):

Նույն իրողությունը արծանագրվում է նաև **արիւն** բառով բաղադրված մի շարք կազմություններում. արևելահայերենը նախապատվությունը տալիս է հնչյունափոխված ձևերին կամ գործածում է երկու տարբերակներն էլ՝ **արնաթաթավ // արյունաթաթավ, արնանման // արյունանման, արնալերդ // արյունալերդ**, մինչդեռ արևմտահայերենի համար սովորական են դրանց անհնչյունափոխ տարբերակները՝ **արիւնաթաթաւ, արիւնանման, արիւնալերդ**. «Գայլը վիրաւորուած էր, ուսն ու վիզը՝ **արիւնաթաթախ**» (Դ. Սաքայան): Հնչյունափոխական մասնակի տարբերություններ են նշվում **արիւն** բառով բաղադրված նաև այլ ձևերում: «Այսպես, **արյուն** ձևույթի **յու** երկհնչյունը արևելահայերենում բառաբարդման ժամանակ կամ մնում է անփոփոխ և կամ սղվում է (**արյունարբու, արնանման**), մինչդեռ արևմտահայերենում վկայված են նաև

յու–յա (իւ–եա) հնչյունափոխությամբ կազմվող ձևեր՝ **արնագույն–արյանագույն, արնագին–արյանագին...** Հանդիպում են նաև **արենագույն, արենագին, արենակից...** բառածևերը, որոնք ակնհայտորեն կազմված են **արյուն** բառի սեռականի՝ **եա–ե** ընդհանրական հնչյունափոխությամբ⁴⁸:

բ) **–ութիւն** ածանցով բառերի ներքին հոլովման դեպքում **ա** հոլովիչից առաջ հնչյունափոխվում է **ե–ի** և հոլովիչի հետ կազմում է **եա** եռաբարբառ, իսկ վերջինս, եզակի բացառականում շեշտակորույս լինելով, վերածվում է **ե–ի՝ ուրախութիւն–ուրախութեան–ուրախութենէ–ուրախութեամբ, քաջութիւն–քաջութեան–քաջութենէ–քաջութեամբ**, նմանապես՝ **արիւն** բառի սեռական–տրական և գործիական հոլովներում՝ **արիւն–արեան** (գործած.՝ **արիւնի**), **արեամբ** (գործած.՝ **արիւնով**):

գ) Մի քանի բառերում բառաբարդման կամ ածանցման դեպքում երկու գրականներում էլ դառնում է **ե (իւ>ե, արևել.՝ յու>ե)՝ բնութիւն–բնութեանապաշտ, միութիւն–միութեանական, եղջիր–եղջերաւոր, եղջերափող, արիւն–արիւնակից // արենակից, արենաչափ**:

Ծանոթություն: **–իւն** ածանցով կազմված բնածայնական գոյականները ածականի են վերածվում **–ուն** և **–ան** ածանցներով՝ **շառաչիւն–շառաչուն, հաջիւն–հաջան, մլաւիւն–մլաւան** և այլն: Միջին հայերենին, ինչպես նաև պոլսահայ բարբառին ու արևմտահայ մի շարք այլ բարբառների հատուկ է եղել այս երկբարբառակերպի վերածվելը **ու** պարզ ծայնավորի՝ **արիւն–արուն, ձիւն–ձուն, ձիւթ–ձութ** և այլն:

Այ

Այ երկբարբառակերպը երկու գրականներում էլ խիստ հազվադեպ է ենթարկվում հնչյունափոխության:

Հին գրական հայերենի **այ** երկբարբառը, ինչպես արդեն ասվել է, տակավին միջին հայերենում ուներ երկհնչյունային արտահայտություն կամ

48 **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 24:

հանդես էր գալիս պարզ **ա** ձայնավորի արժեքով: **Այ**-ի պատմական փոփոխությունները, որ միջին հայերենում արդեն վկայված են, ընթացում են հիմնականում երկու ուղղությամբ՝ **այ>ա, այ>է**: Դրանցից առաջինը ծավալվում և օրինաչափ է դառնում առավելապես արևմտյան, իսկ երկրորդը՝ արևելյան բարբառներում⁴⁹: Նույն իրողությունները աստիճանաբար տեղափոխվում են գրական լեզու, սակայն ունենում են մասնակի դրսևորումներ: Արևելահայերենում **այ>է** փոփոխությունը գտնում ենք որոշ խոսակցական ձևերում՝ **այս>էս, այսքան>էսքան, հայր>հէր, քայլել>քէլել** և այլն: Արևմտահայերենում **այ>ա** փոփոխությունը գտնում ենք և՛ որպես զուտ բարբառային և խոսակցական կազմություն՝ **հայր-հար, մայր-մար, ձայն-ձան** և այլն, և՛ որպես խոսակցականից գրական լեզվին փոխանցված կազմություն, ինչպես՝ **այդ>ատ>ատիկա, այս>աս>ասիկա, այլ>ալ, այն>ան>անիկա, քայլել>քալել, փայլ-փլիլ>փայլփլիլ // փալփլիլ** և այլն (սակավաթիվ բառերում՝ **այ>է**, ինչպես՝ **այր-այրիկ>էրիկ, այրել>էրել**): Օրինակ՝ «Վասն զի ա՛լ չենք խօսիր, մե՛ծ հայր» (Դ. Վարուժան), «Միջոն՝ վարժապետին վեր վար **քալուածքին** հետեւելով՝ արտասանեց...», «Թամար, իր **երկան** սիրտը իրեն դարձնելու համար, շատ սուրբերու գացած՝ շատ բաներ փորձած էր...» (Համաստեղ), «Դէպի բաղնիքին դին **քալեց**» (Հ. Օշական), «Չամձորոյքը, յաճախ, կը **քալէ** դէպի մահ» (Շ. Նարդունի), «Ծօ՛ ես **աս** թուղթն բան մը չեմ հասկնար կոր», «**Ալ** երբե՛ք, երբե՛ք չես կրնար խաբել զիս» (Շ. Շահնուր), «Զգուշացի՛ր այն բարեկամէդ որ քու թշնամիներուդ **ալ** կը յաճախէ» (տե՛ս Հ. Գագանճյան):

Արևմտահայերենում դրանցից մի քանիսն ունեն նաև գրաբարից անցած գրական զուգահեռներ՝ **այն // ան, այս // աս, այսպէս // ասանկ** և այլն:

Ոյ (արևել.՝ ույ)

1. Ածանցման կամ բառաբարդման ժամանակ (ինչպես արևելահայերենի **ույ** երկինջուներ) սովորաբար վերածվում է **ու** ձայնավորի՝ **թոյլ-թուլամորթ, թուլանալ**, (բայց՝ **թոյլտուութիւն, թոյլատրել**), **պարոյկ-պարոյկել, կապոյտ-կապուտաչեայ, պտոյտ-պտուտակ, սոյր-սուրալ**:

49 Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա հատոր, Երևան, 1972, էջ 91:

«Այս հնչյունափոխության հիմքը, պետք է կարծել, նույնն է, ինչ որ շեշտի տակ հանդես եկող մյուս երկբարբառներից, այն է՝ նախաշեշտ հնչյունափոխված ձևի անցումը բառական ուղիղ ձևին»⁵⁰: Սա, որպես հին հայերենի հնչյունական հատկություն, միջին հայերենից ավանդաբար փոխանցվել է աշխարհաբարի երկու ճյուղերին: «Միջին հայերենի շրջանում **ոյ>ու** փոփոխությունն արդեն ավարտված իրողությունն է,— կարդում ենք միջին հայերենին նվիրված ուսումնասիրություններում,— և հաստատվում է վկայությունների բավական լայն ընդգրկմամբ ու փաստերի առավել լայն հաճախականությամբ»⁵¹: Բառաբարդման կամ անցման ժամանակ տեղի ունեցող այս հնչյունափոխությունը բնորոշ է երկու գրականներին: Մասնակի տարբերություններ են ի հայտ գալիս միայն առանձին բառերի կազմության մեջ, օրինակ՝ **խարոյկ** և **մակոյկ** բառերից բաղադրված առանձին ձևերում արևմտահայերենը բառակազմական հիմքերը հնչյունափոխում է, իսկ արևելահայերենը՝ ոչ, ինչպես՝ **խարույկահանդես—խարուկահանդես, մակույկավոր—մակուկաւոր, մակույկավար—մակուկավար, մակույկել—մակուկել** (առավել տարածված է **մակոյկել—ը**) և այլն:

Հնչյունափոխական այս իրողությունը, որ միջին հայերենից պատմականորեն փոխանցվեց աշխարհաբարին, օրինաչափ է ոչ միայն բառակազմության մեջ, այլև բառական ուղիղ ձևերում և թեքման ժամանակ (այս դեպքում նկատի ունենք հոլովական վերջավորությունները): Երկու գրականներում էլ կարելի է արձանագրել այդպիսի հնչյունափոխության բնորոշ օրինակներ (համընկնող ձևերը տրված են շեղ, միայն արևմտահայերենին բնորոշ ձևերը՝ թավ), ինչպես՝ Աստծու (<Աստծոյ), *ուժ* (<**ոյժ**) – *ուժով, վատուժ, վատոյժ, զինուժ, անոյժ, ներոյժ, որդու (<որդւոյ), հոգու (<հոգւոյ), անուշ (<**անոյշ**), սառնանոյշ (=պաղպաղակ), *ըղձանոյշ* (=պարիկ, հավերժահարս), մնուշ (<**նմոյշ**), ստուգանոյշ (=էտալոն), **որու** (<որոյ), **իրիկուն** (<երեկոյ), *քնքուշ* (<քնքոյշ), *լուծ* (<լոյծ), *շուտ* (<շոյտ) և այլն: Բերված օրինակներից երևում է, որ հնչյունափոխական այս իրողության պարագային կոնկրետ ձևերի նախընտրության մեջ որևէ կայուն սկզբունք չի գործում: Եթե հոլովական ձևերում առկա տարբերությունը*

50 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 102:

51 Նույն տեղում:

հիմնականում պայմանավորված է արևմտահայերենում հնչյունական փոփոխությունների ընդհանուր միտումով (անփոփոխ պահել հիմքերը, ինչպես՝ **որդի-որդիի, գինի-գինիի**, արևել.՝ **որդւոյ-որդու, գինոյ-գինու**), ապա այլ դեպքերում առկա է գրաբարի՝ **Աստուած-Աստուծոյ, ոյժ, անոյշ** (արևել.՝ **Աստծոյ-Աստծու, ոյժ-ուժ, անոյշ-անուշ**), երբեմն միջին հայերենի՝ **որու, իրիկուն** (արևել.՝ **որոյ-որի, երեկոյ-երեկո**), ազդեցությունը:

Արևմտահայերենում սովորական են **ոյժ** և **անոյշ** բառերի թե՛ անհնչյունափոխ և թե՛ հնչյունափոխված ձևով գործածությունները, ինչպես՝ «Ու պիտի ապրի՛մ, վիշտը նոր **ուժեր...**» (Մ. Մեծարենց), «Հողին քաշողութենէն տարուած եւ դիմադրելու **ոյժէն** զուրկ՝ կ'իյնան թաւալզոր», «Պէտք է որ բնութեան **ուժերուն...** հակազդուի իմացական անհատը», «Պէտք է որ պայքարը սկսի այս երկու **ոյժերուն** միջեւ», «Դրացի մը վերջապէս ուզեց խօսիլ, եւ Փիեռ խելագարի մը պէս վազեց, վազեց, «քէսէ»ն ափին մէջ **ուժով** մը սեղմած» (Շ. Շահնուր), «Ափիւռքահայութիւնը տակաւին սեւեռած է իր աչքերը դէպի Լիբանան, որովհետեւ լիբանանահայութենէն կը քաղէ իր կենսահիւթը, իր **ոյժը**» (Ս. Նաճարյան): Արդի արևմտահայերենը նախապատվությունը տալիս է հնչյունափոխված ձևերին՝ **ուժ** և **անուշ**:

Արևմտահայերենում **անոյշ** բառի հնչյունափոխված տարբերակը՝ **անուշ-ը, քաղցր, սիրելի, խաղաղ** և արևելահայերենին բնորոշ այլ իմաստներից զատ, ունի նաև մի շարք այլ իմաստներ՝ **անուշեղեն, քաղցրավենիք, մուրաբա, լիմոնադ**: Օրինակ՝ «Առանց բանաւոր պատճառի խաղաղեցաւ ու իր ժպիտը աչքերուն խորը աւելի **անուշ** (=սիրելի, **քաղցր**) էր՝ քան արեգակի առաջին շողերը անձրեւէն վերջ» (Վ. Շուշանյան), «Ես բնաւ անոր **անուշ** (=քաղցրավենիք, մուրաբա) եփելը չեմ տեսած» (Ե. Օտյան), «Սեղանին վրայ էր նաեւ բացուած ծրար մը, թրքական դրոշմաթուղթերով, «չէվիրմէ»յի **անուշով** (=մուրաբայով)» (Շ. Շահնուր):

Անուշ բառը անձնանունների դեպքում գրվում է **ոյ-ով** (կարդացվում է **ույ**): **Անոյշ, Սիրանոյշ, Մայրանոյշ**: Օրինակ՝ «Յովի. Թունանեան գրած է

բանաստեղծութիւններ, պատմուածքներ ու վիպերգներ, ինչպէս «Անոյշը» եւ «Թմկաբերդի Առունը» (Հ. Չոլաքյան): **Զգոյշ** բառի համար սովորական է նաև պոլսահայ բարբառին բնորոշ հնչյունափոխված տարբերակը՝ **զգուշ**. «Առաջ կ'ուզես անցնիլ, բայց **զգո՛ւշ** եղիր», «Կրակով կը խաղաս. **զգո՛ւշ**» (տե՛ս Հ. Քյուրքճյան): **Նմոյշ** բառը, ըստ Արմատական բառարանի, ավանդված չէ հին հայերենից և գրական արևմտահայերենին է անցել նոր բարբառներից⁵². «Դժուար է որոշապէս ըսել իր տեսակին մէջ եզակի այս **նմոյշին** ստեղծման վայրը» («Հայկազեան հայագիտական հանդէս»): Արևելահայերենում այդ բառը գործածվում է միայն հնչյունափոխված տարբերակով՝ **նմուշ**: Արևմտահայերենը գործածում է երկու ձևերն էլ՝ **նմոյշ // նմուշ**:

2. Ոյ–ը երբեմն սղվում է կամ դառնում **ը՝ պտոյտ–պտըտիլ // պտշտել, քոյր–քըրոջ, սոյր–սըրարշաւ**: Սա բնորոշ է երկու գրականների:

Ծանոթություն: Բառավերջի **ոյ>ու** հնչյունական անցումը, հետևաբար **ոյ** գրութայան **ու** հնչումը միջին հայերենի վաղ շրջանում արդեն տարածված իրողություն էր, և դա արդյունք է ոչ թե հոլովատիպերի փոխանցման, այլ **ոյ>ու** հնչյունափոխութայան (տե՛ս **Լ. Հովսեփյան**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997, էջ 53, 60):

Եա, եայ (արևել.՝ **յա**)

1. Արևմտահայերենում **եա** երկբարբառակերպը վերջին վանկի մէջ բառաթեքման, բառաբարդման և ածանցման ժամանակ շեշտի ազդեցութայամբ ենթարկվում է հնչյունափոխութայան և վերածվում **ե–ի**: Այսպէս՝ արևելահայերենում՝ **յա>ե՝ ատյան–ատենակալ, մատյան–մատենագիր, սենյակ–սենեկապետ, տեղյակ–տեղեկագիր**, իսկ արևմտահայերենում՝ **եա>ե՝ ատեան–ատենակալ, մատեան–մատենագիր, սենեակ–սենեկապետ, տեղեակ–տեղեկագիր**:

Իբրև մասնակի տարբերություն է նշվում այն, որ առանձին կազմություններում արևմտահայերենը նախընտրում է նույն բարդութայան անհնչյուն-

⁵² Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատոր III, Երևան, 1977, էջ 459:

նափոխ տարբերակները. «Արևելահայերենում նկատվում են նաև շեղումներ **յա-ե (եա-ե)** ընդհանրական հնչյունափոխությունից,— գրում է Ռ. Սաքապետոյանը:— Այսպես, արևելահայերենում սովորական են **արբանյականավ, ժանյակազարդ, սենյակային** անհնչյունափոխ ձևերը, որոնց դիմաց արևմտահայերենը միանշանակ ունի **արբանեկանավ, ժանեկազարդ, սենեկային** բառաձևերը»⁵³: Այս մասնակի տարբերության մասին են վկայում նաև Բեյրութում հրատարակված «Յայոց լեզվի նոր բառարան»-ի տվյալները՝ **սենեկակից, սենեկային, արբանեկակիր, արբանեկանաւ, ժանեկազարդ**: Բայց ըստ նույն բառարանի տվյալների՝ արևմտահայերենում ունենք նաև՝ **ժանեկագործ // ժանեակագործ, ժանեկավաճառ // ժանեակավաճառ** և այլն⁵⁴:

Արևմտահայերենում **եա>ե** հնչյունափոխությունն ունենք նաև **-ուփին** ածանցով գոյականների սեռական-տրականի հիմքից բացառական հոլովի կազմության ժամանակ՝ **քաջութին-քաջութեան-քաջութենէ, մեծութին-մեծութեան-մեծութենէ**:

2. եա>ե պատմական հնչյունափոխությունը աշխարհաբարի երկու ճյուղերում ունի նաև այլ արտահայտություններ՝ ա) գրաբարյան անցյալ դերբայի **-եալ** վերջավորության մեջ՝ **դարձեալ-դարձել, անիծեալ-անիծել, յիշեալ-յիշել** և այլն, բ) բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի **-եաց** վերջավորության մեջ՝ **ծաղկեաց-ծաղկեց, աւետեաց-աւետեց** և այլն, գ) բուն հրամայականի **-եա** վերջավորության մեջ (արևմտ.՝ **եա>է**)՝ **գրեա-գրէ, սիրեա-սիրէ** և այլն: **եա>է** պատմական հնչյունափոխության հետևանքով առաջացած է վերջավորությամբ կազմությունը «ե խոնարհման պարզ բայերի հրամայականի հիմնական ձևն է միջին հայերենում, իսկ հետագայում տիրապետող է դառնում արևմտյան գրական լեզվում»⁵⁵:

53 Տե՛ս Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 24:

54 Տե՛ս **Գնէլ արքեպս. Ճէրձեան, Փարամազ Կ. Տօնիկեան**, Յայոց լեզվի նոր բառարան: Առաջին հատոր, Պէյրուք, 1992. **Ա. Տէր Խաչատուրեան**, Յայոց լեզվի նոր բառարան: Երկրորդ հատոր, Պէյրուք, 1992:

55 **Լ. Դովսեփյան**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997, էջ 74:

Ծանոթություն: Արդի արևմտահայերենում նշված օրինաչափությունից կան առանձին շեղումներ՝ **յոբելեան–յոբելեանական** (մասն՝ **յոբելեանական**, հազվ.)՝ **յոբելիական**), **արբանեակ–արբանեականաւ**, **հայատեաց–հայատեացու–թիւն**, **ախոյեան–ախոյեանութիւն**, **դայեակ–դայեակութիւն** և այլն:

3. Եայ–ի հնչյունափոխությունը նույնանում է **եա** երկբարբառակերպի փոփոխության հետ. բառավերջում կորցնելով վերջնահանգ յ–ն՝ այն վերածվում է **եա** երկբարբառակերպի: Արևելահայերենում ունենում ենք **եայ>ե**, իսկ արևմտահայերենում **եայ>է** փոփոխությունը, ինչպես՝ **հրեայ–հրեական** / **հրեական**, **հրեություն** / **հրեութիւն**, **պաշտօնեայ–պաշտոնեություն** / **պաշտօնեութիւն**, **քրիստոնեայ–քրիստոնեություն** / **քրիստոնեութիւն**, **քրիստոնեական** / **քրիստոնեական**, **այժմեայ–այժմեական** / **այժմեական**, **այժմեություն** / **այժմեութիւն** և այլն:

2.3. ՓՈՆԱԶԳԵՑԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն մինչև այժմ նկարագրված հնչյունափոխական իրողությունների՝ հնչյունափոխության ստորև ներկայացվող տեսակը (իր ենթատեսակներով՝ **առնմանում**, **տարնմանում**, **դրափոխություն**, **հավելում** և այլն) համակարգային չէ, չի ընդգրկում հնչյունի համանման բոլոր դիրքերը, ունի մասնակի դրսևորումներ և վերաբերում է առանձին բառերի կամ բառերի առանձին խմբերի: Այդ իսկ պատճառով մեր գրական լեզվի երկու ճյուղերում այն ի հայտ է բերում շատ քիչ տարբերություններ:

Երկու գրականներում էլ փոխազդեցական հնչյունափոխությունը համարվում է հնչյունափոխության հիմնական տեսակներից մեկը, երբ հնչյունը ենթարկվում է որակական կամ քանակական փոփոխության և կամ որոշ տեղաշարժերի՝ պայմանավորված բառի, հնչյունաշարքի կամ մեկ այլ հնչյունի ազդեցությամբ: Սակայն այդ հնչյունափոխության առանձին դեպքեր միանշանակ չեն գործում և նույն դրսևորումները չունեն արևմտահայերենում ու արևելահայերենում: Որևէ ընդհանուր օրինաչափություն դժվար է նշել. տարբերությունները, ինչպես ասվեց, մաս-

նակի բնույթ են կրում, ուստի նպատակահարմար է դրանք ներկայացնել մի քանի բնորոշ օրինակներով:

2.3.1. ՀԱՎԵԼՈՒՄ ԵՎ ԱՆԿՈՒՄ

Դիրքով պայմանավորված, փոխազդեցական կամ այլ պատճառներով հնչյունաշարքում ներմուծվում է հնչյուն՝ **հավելում**, կամ հնչյունաշղթայից հնչյունը դուրս է ընկնում՝ **անկում**: Հնչյունափոխության այս տեսակները միանշանակ դրսևորումներ չունեն երկու գրականներում և կոնկրետ բառաձևերում հանդես են բերում տարբերություններ:

Մի շարք բառերում արևմտահայերենը հակված է հավելելու կամ պահպանելու հնչյուններ, որոնք արևելահայերենը կորցրել է: Օրինակ՝ ուշ միջնադարում գրաբարի **դու** դերանվանը զուգահեռ սկսում է գործածական դառնալ **ն** հնչյունի հավելումով կազմված **դուն** ձևը, ինչպես՝ «**Դուն** ալ մէկ վարձկունք արա, պագ մի տուր դնչիդ մօտերուն» (Նահապետ Քուչակ)⁵⁶: Արևելահայերենը պահպանեց գրաբարյան ձևը, իսկ արևմտահայերենին անցավ արևմտյան բարբառներից միջին հայերենին փոխանցված տարբերակը: Օրինակ՝ «**Դո՛ւն** նուիրեցիր ինձի, ո՛վ Կաղանդ, այդ պատմուճանն ալ վարդապետի» (Շ. Նարդունի), «Ինչպէ՞ս կ'ընես **դուն** այս բանը. չէ՞ս գիտեր, որ ես զոյգէն կ'ախորժիմ» (Կարո Ալակեոզ):

Ըստ գրավոր աղբյուրների և բառարանային տվյալների՝ արևմտահայերենում սովորական է **կանաչ** բառի՝ **ն** հնչյունի հավելումով՝ միջին հայերենից ավանդված տարբերակը՝ **կանանչ**, որը արևելահայերենում ընկալվում է որպես բարբառային ձև: Սովորական են նաև այդ տարբերակով բաղադրված բառերը՝ **կանանչութիւն**, **կանանչաւէտ**, **կանանչկէկ**, **կանանչեղէն**, **կանանչապատ** և այլն: Օրինակ՝ «...**Կանանչ** արտերու եզերքներէն ջուրի արծաթ երիզներ շոգիէ ամպիկներու տակ կը վառէին» (Յ. Օշական), «Կուրծքէն գարնան՝ որ թւերովն իր բաղեղ՝ Տարփո՛ւտ՝ հիւղին կը պլլըուի, ու հեղեղ **Կանանչով** մը կու տայ համբոյրն իր դա-

56 Տե՛ս Ռ. Ղազարյան, Յ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ա հատոր, Երևան, 1987:

լար» (Մ. Մեծարենց): Արդի գրական արևմտահայերենում, սակայն, այս կազմությունները նվազ գործածություն ունեն և, ընկալվելով որպես խոսակցական ձևեր, աստիճանաբար իրենց տեղը զիջում են արևելահայերենին հատուկ կազմություններին՝ **կանաչ**, **կանաչապատ** և այլն:

7 և **10** թվականները, որոնք արևմտահայերենում գործածվում են և՛ **ը**, **ն** արմատական հնչյուններով, և՛ առանց դրանց՝ **եօթ(ը, ն), տաս(ը, ն)**, առանձին կազմություններում պահպանում են այդ մասնիկները, ինչպես՝ «Իրաք–Իրան պատերազմը, որ կը շարունակուի աւելի քան **եօթը** տարիներէ ի վեր, ինծի կը յիշեցնէ այն գրչապայքարը...» («ժամանակ»), «**Տասնէն** աւելի են այն քերթուածները, որոնք անոր գրիչովը կտակուեցան...» (Հ. Օշական), «**եօթնական** սնտուկ նարինջ բաժնուեցաւ», կամ «Սկառուտական խումբերը **տասնական** հոգիէ կը բաղկանային» (տե՛ս Ե. Տասնապետեան), «...1300 տարի առաջ ստեղծեցին Ջուարթնոցը՝ **եօթներորդ** դարու հայ ճարտարապետութեան պսակը» (տե՛ս Դ. Սաքայան):

Արևմտահայերենում հնչյունի հավելում ունեն մի շարք այլ բառեր, որոնք արևելահայերենում կամ չեն հանդիպում, կամ ընկալվում են որպես զուտ բարբառային երևույթներ, ինչպես՝ **ամառնային**, **գլտորել**, **դասընթացք**, **թքնել** (ավելի հաճախ՝ **թքել**), **յառաջաբան**, **սանտր**, **սանտրուածք**, **ստորնացուցիչ**, **փախնէփախ** և այլն: Օրինակ՝ «Կը պղծտուրք ուսերնին՝ որոնք էին արժանի Լոկ փառքը կրել մագերնուն արփուոյն շողով **սանտրուած**» (Դ. Վարուժան), «Դուկաս էֆենտիի պէս **մենծ** մարդոց հետ աղէկ երթալու է» (Ե. Օտյան), «Հաճին պիտի խեղդէր իր կինը... **թքնելով** զարհուրելի բառը» (Հ. Օշական), «Վերէն, բարձրէն **կը թքնեն** իր վրայ, կ'արհամարհեն ու կը նուաստացնեն զինքը», «Ան կը կրէր **ամառնային** նորելոյթ շրջագգեստ մը» (Շ. Շահնուր), «Արկածախնդրութիւն մըն է կոյր սէրը, **ստորնացում** մը» (Ն. Սարաֆյան), «Այս մարդոց հոգին կ'ապրի ջարդերուն շատ նսեմ, շատ **ստորնացուցիչ** կսկիծը», «Ու դեղին **սանտր** մը գլխուն ալիքները կանոնաւորեց», «Առուէն վար իջան՝ **գլտորելով** փոքրիկ մժեղներ» (Համաստեղ), «Աւարտած է Դամասկոսի պետական համալսարանի անգլերէնի բաժինը, ապա հետեւած՝ մանկավարժական **դասընթացքներուն**» (Հ. Զոլաքյան):

Մենձ բառով բաղադրված **մենձնալ**, **մենձութիւն** ձևերը բարբառային են: Իսկ ինչ վերաբերում է **սանր** և **սանտր** ձևերին, Հրաչյա Աճառյանը, նշելով, որ «նոր գրականի մեջ ընդունուած է միայն **սանտր**», սկզբունքորեն մերժում է **սանր**–ի առաջացման վերաբերյալ շրջանառվող երկու տեսակետները, իբր՝ 1. **սանր**–ը առաջացել է **սանդր** ձևից (ինչպես **ծանդր** և **մանդր** գավառական ձևերից՝ **ծանր**–ը և **մանր**–ը), 2. սկզբնական **ժանր**, **մանր** ձևերից առաջացել են **ժանդր**, **մանդր** ձևերը, նմանապես՝ **սանր**–ից՝ **սանդր**: «Երկու կարծիքն էլ սխալ է,— գրում է Աճառյանը,— 1) **սանտր** գաւառական ձև չէ և կարելի չէ համեմատել գւռ. **ժանդր**, **մանդր** բառերի հետ. 2) **ն** և **ր** բաղաձայնների միջև արդարև ապագայում ներմուծւում է ատամնական (հմմտ. լտ. **cinis**, **cineris** և **tener**>ֆրանս. **cendre** «մոխիր» և **tendre** «քնքոյշ»), բայց այդ ատամնականը լինում է **դ** և ոչ **տ**»⁵⁷: Հայկազյան բառարանը գրաբարի համար գործածական է համարում **սանտր** տարբերակը՝ «**սանդր**, **սանդրել**. **Տ. սանտր**, **սանտրել**» նշումով, որին հետևում է **ՍԱՆՏՐ** գլխաբառի առանձին բացատրությունը: Ըստ որում, բնագրային օրինակներից մեկը բառարանում բերված է **սանդր** տարբերակով. «Որպես զբուրդ պարզեալ ՚ի **սանդրէ** յստակեցից»⁵⁸: Միջին հայերենում, ըստ բառարանային տվյալների, գործածական է եղել **սանդրել**–ը: Այսպիսով՝ գրաբար–միջին հայերեն փոխանցմամբ արևմտահայերենին է անցել սկզբնական **սանտր** ձևը, իսկ արևելահայերենը գործածում է հնչյունափոխված **սանր** տարբերակը՝ **տ(դ)**–ի սղումով⁵⁹:

Մի շարք բառերում հանդիպում ենք հակառակ երևույթին. արևմտահայերենում բառը կորցրել է այս կամ այն հնչյունը և հանդես է գալիս բարբառային կամ խոսակցական տարբերակով, իսկ արևելահայերենը պահպանել է այն կամ հավելել հնչյուն:

Միջնադարի մատենագրության մեջ վկայվում է գրաբարյան **ինքն** դերանվան **ինք** ձևի զուգահեռ գործածությունը: Արևելահայ աշխարհաբա-

57 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 694:

58 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Երեւան, հ. 2, 1981:

59 Տե՛ս նաև Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 28:

որը պահպանեց դերանվան սկզբնական ձևը՝ **ինքն(ը)**, իսկ արևմտահայերենը որդեգրեց նաև միջին հայերենում և արևմտյան բարբառներում արդեն գործածական դարձած **ինք** հնչյունափոխված ձևը, ինչպես՝ «**ինք** կը քալեր արագ, անտարբեր, կիսովին մխրճուած մտածումին ծովին մէջ» (Ա. Արփինե), բայց նաև՝ «...Կը վախճար **ինքն** իր վրայ՝ կիսատ մնացած գործերուն համար» (Պ. Սնապյան):

Սիջին հայերենի մատենագրության մեջ սովորական է **ուղարկել** բայի հնչյունափոխված **դրկել** տարբերակի գործածությունը: Արևմտահայերենը վերցրել է բառի և՛ ավանդական՝ անհնչյունափոխ, և՛ միջինհայերենյան հնչյունափոխված տարբերակը, ինչպես՝ «Փափաքելի էր որ Ջարդարեան հետեւողներ ունենար, ու անիմաստ ճոռոնութիւններու տեղ, գաւառացի գրողները տեղական աւանդութիւններ կամ ժողովրդական երգեր մեզի **դրկէին**» (Ա. Չոպանյան), «Փոքր տարիքին անցած է Հալէպ, ապա **դրկուած** է Չմառու Վանքը...» («Հայկազեան հայագիտական հանդէս»), «Ադամանդակուռ հայ տառերով պատրաստուած այս թանկարժէք յիշատակարան կոթողը... յետոյ **դրկուեցաւ** Սուրբ Էջմիածնի թանգարանը» («Ժամանակ»), բայց նաև՝ «...ինծի **ուղարկելով** թերթիս անունը զարդարող գունագեղ սքանչելիք մը» («Ժամանակ»):

Արևելահայերենում **բարձր** բառի համաբանությամբ առաջացել է **ցածր** ձևը: Արևմտահայերենում այդ բառը չունի հնչյունի հավելում, գործածվում է **ցած** ձևով: Օրինակ՝ «Սեղանին վրայ քահանայ մը **ցած** ձայնով ու անհասկանալի բարբառով ինքնիրեն բառ մը կը մըմնջէ» (Գ. Չոհրապ), «Շատեր **ցած** ձայնով իրարու հարցուցին. ո՞վ են, ո՞վ են» (Շ. Շահնուր), «Անձրեւին տեղալը դիտելով՝ կը զրուցէինք **ցած** ձայնով» (Հ. Քյուրքճյան): Բառի այդ ձևը պահպանվում է նաև բաղադրյալ կազմություններում՝ **ցածնալ, ցածություն, ցածորակ**:

Արևմտահայերենում առանձին բառերում արձանագրվում է **ր** հնչյունի անկում: Այսպես՝ դեռևս միջին հայերենի վաղ շրջանի մատենագրության մեջ վկայված է **ջրաղաց** բառի հնչյունափոխված **ջաղաց** տարբերակը: Հայոց լեզվի նոր բառարանի տվյալներով՝ այդ բառի հնչյունափոխված տարբերակը և դրանից բաղադրված բառերը զրական արևմտահայերենում

նուն գործածական են՝ **ջաղացք, ջաղացքար, ջաղացպան // ջաղպան**: Օրինակ՝ «վերադարձնել **ջաղացքներուն** սըրտին մեջ Իրենց երգերը անհուն» (Դ. Վարուժան), «**Ջաղպան** Նաւոն գործին մծղրած քար կը կռանէր» (Համաստեղ), «Ապակիի պէս ջուր մը ունի այս ծորը, որ գիւղի եզերքէն կ'իջնէ վար, եւ կը ցատկէ Ջաղջին ձորին մէջ, ճիշդ կենդանիի մը նման...» (Շ. Նարդունի), «Այնքա՛ն երկար ատեն **ջաղացքին** դուռը գոց տեսեր էին, պատերն ու տափարակը գրաւուած՝ վայրի խոտերէ. կարծեր էին, որ սպառած է **ջաղացպաններու** ցեղը» (Հ. Քյուրքճյան, Հայ կեանք եւ գրականութիւն, Աթէնք, 2007): «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը արևելահայերենի պարագայում դրանց դիմաց ունի **ժղ** (ժողովրդախոսակցական) նշումը:

Արևմտահայերենում դերանունների շարքում **որեւէ** դերանվան կողքին սովորաբար նշվում է նաև դրա հնչյունափոխված **ոեւէ** ձևը: Երկուսն էլ հավասարապես գործածվում են: Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ խոսվում է այդ տարբերակների՝ անձի և ոչ անձի բնորոշ հատկանիշ ցույց տալու իմաստային հակադրության մասին, իբր առաջինը դրվում է ոչ անձ, իսկ երկրորդը՝ անձ մատնանշող գոյականների վրա, այսպես՝ **որեւէ հարց**, բայց **ոեւէ նախարար**: Արևմտահայ գրավոր և բանավոր խոսքի մեր դիտարկումները, սակայն, իմաստային այդպիսի տարբերակման վկայություններ չեն տալիս, օրինակ՝ «...Ինչո՞ւ դեռ այդ գունարէն **ոեւէ օժանդակութիւն** չէ կատարուած Կարպիս ճանճիկեան անուն երիտասարդին», «...շատ ողբերգական երեւոյթներու ստեղծման պատճառ կը հանդիսանար արկածով ծագած **ոեւէ** հրդեհ» (Ա. Գոչունյան), «Մենք հոն պաշտօն չունինք **որեւէ զոյգեր** պսակելու, մանուկներ մկրտելու...» (Ա. Անդրեասյան):

Արևմտահայերենում գործածական են միջին հայերենից և բարբառներից փոխանցված **աժան, աժանկեկ, աժաննալ, աժեն-չաժեն**, ինչպես նաև **մսիլ, դգալ** բառերը, որոնք առաջացել են **արժան, մրսիլ, դրգալ** սկզբնաձևերից **ր**-ի անկումով, օրինակ՝ «Արտակարգ խնամքն ունեցաւ զայն **չմսեցնելու**» (Հ. Օշական), «Գիտե՞ք թէ մարդկային կեանքը որչափ **աժան** էր պատերազմի դաշտերուն ու ծովերուն վրայ եւ օդին ալ մէջ ու ջուրերուն յատակը» (Բ. Նուրիկյան), «Մայրս կը բերէր կերակուրը՝ ընդ-

հանրապես թանապուր, *տաշ էքմէք* կամ ձաւարով եղինձ, ջրախառն ռուփ եւ ահա նոյն պնակէն կը սկսէր տարածուիլ **դգալներու** աղմուկ մը, որ կը լեցնէր ամբողջ տունը» (Մ. Մարկոսյան):

Երկու գրականների համար այլ բառերուն **ր**-ի անկումը տարբերություններ երևան չի հանում, ինչպես՝ **քաշել<քարշել, խաշել<խարշել, ճամփա<ճանապարհ**:

Հետաքրքիր է **արմուկ** բառի տարբերակային ձևերի գործածությունը երկու գրականներում: Այս բառի համար Հայկազյան բառարանը նշում է գրաբարում գործածվող **արմուկ** կամ **արմուկն** տարբերակները. **արմուկն** ձևը ունի **ռմկ**. նշում⁶⁰: Հր. Աճառյանը **արմուկն** ձևը տալիս է բնիկ հայերեն բառերի շարքում («=Հնդ. **arm** – արմատականից, որի վրա հայերենում ավելացել է **-ուկ, -ուկն** մասնիկը»): Ավելի ուշ շրջանի մատենագրությունից բերում է այլ ձևերի օրինակներ՝ **արմունգ, էրմունք** և այլն⁶¹: Միջին հայերենի բառարանը տարբերակային ձևեր է տալիս **արմունգն** և **արմունկ**՝ իբր գրաբար տարբերակներ նշելով **արմուկ, արմուկն**⁶²: Իսկ հայոց լեզվի նոր բառարանը արևմտահայերենի համար տարբերակներ է նշում բառի երեք ձևեր՝ հետևյալ հաջորդականությամբ՝ **արմուկ, արմուկն, արմունկ**: Այսինքն առավել գործածական է համարվում **արմուկ**–ը⁶³: «Բառարան–գանձարան»–ում իբրև արևմտահայերենին բնորոշ միակ ձև արձանագրվում է **արմուկ**–ը⁶⁴: Արևելահայերենի համար գործածական տարբերակ է նշվում միայն մեկ ձև՝ **արմունկ**⁶⁵: Այսպիսով, նույն բառի համար երկու գրականները ունեն իրարից ակնհայտորեն տարբեր ձևեր: Այստեղ արևմտահայերենը պահպանել է բառի գրաբարյան ձևը, մասամբ գործածում է նաև միջինհայերենյան տարբեր-

60 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»: Հատոր առաջին, Երևան, 1979:

61 Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, Երևան, 1971:

62 Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Ա հատոր, Երևան, 1987:

63 Տե՛ս **Գնէլ արքեպս. Ճերեճեան, Փարամազ Կ. Տօնիկեան**, Հայոց լեզուի նոր բառարան: Առաջին հատոր, Պէյրուք, 1992:

64 Տե՛ս **Յ. Գայանեան**, Բառարան–գանձարան հայ լեզուի հոմանիշներու, Գահիրե, 1938:

65 Տե՛ս **Էր. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976: Հետաքրքիր է Ստ. Մալխասյանցի բառարանի տեղեկությունը. **արմունկ**–ը տրվում է որպես «զավառական բառ կամ նշանակություն», իսկ սովորական ձև է համարվում **արմուկ**–ը (տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, հատոր I, 1944):

րակը, իսկ արևելահայերենը պահպանել է ավելի ուշ շրջանի՝ միջին հայերենից և բարբառներից եկող կազմությունը: **Արմունկ** ձևը հավանաբար առաջացել է գրաբարյան ձևից՝ **Ա** հնչյունի հավելումով՝ **արմուկ-արմունկ**, թեև չի բացառվում նաև բառի՝ դրափոխությամբ ձևավորումը՝ **արմուկն-արմունկ**: Ահա արևմտահայերենում բառի գործածության օրինակներ՝ «Կը ծարուրէ **արմուկներուն** գոյգ բերանն Եւ պըտուկներն ըստինքներուն, ու կ'երգէ» (Դ. Վարուժան), «Սեղանին առջեւը լոյսի այդ ողողումին տակ նստած է Վանահայրը՝ երկու **արմուկը** սեղանին ու գլուխը թաղած ավերուն մէջ» (Լ. Շանթ):

Լեզվաբանական գրականության մեջ նշվում են հնչյունի անկման կամ հավելումի նաև այլ օրինակներ, որոնք բնորոշ են մեր գրական լեզվի ճյուղերից մեկին կամ մյուսին (արևմտահայերենը տրվում է թավ)՝ գրո-**գերո** // գէո // գէո, քնել-**քնանալ**, սանդուղք-**սանդուղ** // **սանդուխ**, կենտրոն-**կեդրոն**, զարկել(<զարկանել)-**զարնել**, առաւօտ-**առաւօտ** // **առտու**, կանգնել-**կանգնիլ** // **կայնիլ**, անկանիլ>**իյնալ**, պատշգամբ-**պատշգամ**, փոխարեն-**փոխան** // **փոխարէն**, քաղաքավարի-**քաղաքավար** և այլն:

Բնագրային օրինակներ՝ «Կառքը կանգ առաւ դարբասի **կեդրոնական** աւազանին առջեւ», «Դուռը, ուր կը մնայի գամուած, առանձնատան դուռն էր առյաւէտ չքացած աբբահօր, որ եկեղեցի կիջնէր մասնաւոր **սանդուխտով**», «Կազմուող նկարագիրները հեռացան զատուող ճամբաներու **հովահարով**...» (Շ. Շահնուր), «...Տեսնես իր երկան հետ իրարու **շողինք** կը լգեն, գիշեր ցորեկ քսփսմին չի հատնիր» (Համաստեղ), «Երբ էֆենտիին քայլերը մարէին **սանդուղներուն** վրայ, բոլոր հոգիովը կը խնդար, ավերը կը քսէր ու կը վազէր պզտիկներուն քով», «Հազիւ քանի մը ժամ **քնանալէ** ետք ահա բացած էր սրճարանը» (Ն. Ակիշյան), «**Քաղաքավար** ձևով մը ճամփեց հիւրերը» (Զ. Մելքոնյան), «Պիտի բամբասէն զիս՝ ըսելով, թէ **անքաղաքավար** մարդ է» (Հ. Պարոնյան), «Կոմիտաս լռիկ՝ խորասուզուած նստած էր **պատշգամին** առջեւ, աչքերը հեռուն մխուած» («Ժամանակ»), «Կեանքը **զերոյէն** սկսած էր, ինչպէս կ'ըսէր, երբ խօսքը ըլլար իր սերունդին» (Վ. Մավյան), «...անոնց մէջ, **փոխան** չորս աւետարանիչներուն, պատկերուած են չորս նոյնանման

հրեշտակներ», «...սուլթանի ցանցին մէջ **ինկող** երիտօրուրք գործիչները կ'անուանէ «ողորմելիներ»» («Հայկազեան հայագիտական հանդէս»):

Ծանոթութիւն: Գրաբարյան **ն** վերջնահնչյունի անկումը մի շարք միավանկ բառերում բնորոշ է և՛ արևելահայերենին, և՛ արևմտահայերենին՝ **դուռն>դուռ, բեռն>բեռ, մատն>մատ:**

2.3.2. ԱՄՓՈՓՈՒՄ

Հնչյունաշղթայում միանման հնչյունախմբերի համառոտումն է, որ մասնակիորեն կոչվում է նաև **արագաբանութիւն:** Փոխազդեցական հնչյունափոխության այս տեսակը առանձին օրինակների մէջ երկու գրականներում ի հայտ է բերում հակադիր դրսևորումներ, այսինքն՝ որոշակի բառերի համար ամփոփումը բնորոշ է արևելահայերենին, բառերի այլ խմբի համար՝ արևմտահայերենին, կամ արևմտահայերենը գործածում է երկու տարբերակներն էլ, ինչպես (արևմտահայերեն տարբերակները տրվում են թավ)՝ **աշխարհայացք–աշխարհահայեացք, աշնանավար–աշնանավար // աշնավար, աշնանատունկ–աշնանատունկ // աշնատունկ, ապաստան–ապաստանարան, գարնանային–գարնանային // գարնային, առավոտ–առաւօտ // առտու, գրաքննադատ–գրադատ, խարդավանք–խարդաւանք // խարդաւանանք, հեծանիվ–հեծելանիւ, նամակակցել–նամակցիլ, ջերմոց–ջերմանոց, ջրորդան // ջրհորդան–ջրորդան, օդանավակայան–օդակայան** և այլն: Օրինակ՝ «Բայց **գարնային** կենսաւէտ այդ պահին մէջ օրօրուն, Հիւանդ տերեւ մը տեսայ կանաչին մէջ դաշտերուն» (Ռ. Սևակ), «Վաղուրնէ սկսեալ այլեւս ամէն օր օդանաւ մը պիտի մեկնի մեր քաղաքի **օդակայանէն**՝ դէպի մայրաքաղաք», «Կրաղիւսէ հսկայ ամրութիւնը, որուն ճիշդ կմնակն էր իրենց **ապաստանարանը**՝ կը դղրդայ թնդիւններէն իւրաքանչիւրին հետ» (Հ. Քյուրքճյան), «Թովմաս **հեծելանիւով**, միւլնոյն գծով առէջ էր ձգեր» (Համաստեղ), «Ամէն իրիկուն կալերէն լեռներուն փէշերը **կ'երկննար**, աւանդական հովանոցը ձեռքը, մերթ բանալով, մերթ գոցելով» (Հ. Օշական):

Հայերենը ընծեռում է անփոփումի բազմաթիվ փաստեր, որոնք ընդհանուր են արևելահայերենում և արևմտահայերենում, ինչպես՝ **անծնանուէր–անծնուէր, գրոսաշրջիկութիւն–գրոսաշրջութիւն, հայտարարագիր–հայտագիր, հասարակակարգ–հասարակարգ, ճանապարհորդութիւն–ճամփորդութիւն, ճարտարասան–ճարտասան, մեքենայական–մեքենական, միօրինականացում–միօրինակացում, մեծալարգոյ–մեծարգոյ, տաւարարած–տաւարած, օրօրոցք–օրօցք** և այլն: Օրինակ՝ «Քննաթաթախ կինը գլուխը **մեքենաբար** վեր բարձրացրեց» (Րաֆֆի), «Եւ ես, հոն նստած ու աչքերս իր ջինջ ու յստակ ջուրերուն յառած, **մեքենաբար** կրկնեցի ծերուկին վերջին բառերը» (Ա. Արփինե), «Բաղին գյուղի **տավարածն** էր» (Ա. Բակունց), «Ուսուցիչը խօստացած էր մեզի տանիլ ինքնաշարժներու շինութեան կեդրոն մը, մեզի գաղափար մը տալու համար **մեքենական** ճարտարարուեստի շուրջ» («Ազդակ»):

2.3.3. ԱՌՆՄԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐՆՄԱՆՈՒՄ

Հնչյունական շղթայում որևէ հնչյուն ազդում է մի այլ հնչյունի վրա՝ նմանեցնելով կամ նույնացնելով իրեն՝ **առնմանում**, կամ հեռացնելով իրենից, երբեմն հասցնելով անկման՝ **տարնմանում**: Երկու գրականներում առկա տարբերությունների տեսանկյունից հնչյունափոխության այս տեսակը նույնպես մասնակի դրսևորումներ ունի և չի արտահայտում որոշակի ուղղվածություն կամ օրինաչափություն. այս կամ այն հնչյուններին հատուկ առնմանության երևույթը լեզվի մյուս տարբերակում կարող է արտահայտվել տարնմանությամբ, և հակառակը: Այսպես՝ հին հայերենի **շուրջ** բառը միջին հայերենի որոշ տարբերակներում **ջ**-ի անկումով հանդես է գալիս **շուռ** և **ժուռ** ձևերով. **շ>ժ** փոփոխությունը կատարվել է **ջ**-ի ազդեցությամբ, երբ այն դեռ չէր ընկել⁶⁶: **ժ**-ով ձևերը փոխանցվեցին արևմտահայերենին՝ **ժուռ, ժուռ գալ, ժուռ ածել**՝ «Երբ դաշտերը դաշտ **ժուռ գալու** դուն ելլես՝ Փուշեր չըգա՞ն ոտքերուդ տակ՝ այլ սարսռուն Կակաչներ՝ մեր սըրտին պես» (Դ. Վարուժան): Արևելահայերենը գործածում է նախնական տարբերակը **շուռ գալ, շուռումուռ գալ**: Կամ՝ առա-

66 Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 157:

ջընթաց առնմանությամբ **ցայտել** բառում **ց** շնչեղ խուլ բաղաձայնի ազդեցությամբ խուլ **տ**–ն շնչեղացել է՝ **ցայտել>ցաթել** (արևմտ.՝ **ցաթիլ**)՝ «Ձեր մուօ ծոցին մեջ հըսկայ թող բերկրութեան շող **ցաթի**», «Եւ սակայն աւազանին վրայ՝ **ցաթած** է լուսնկան» (Դ. Վարուժան): Արևելահայերենը գործածում է **ցայտել** սկզբնաձևը:

Իբրև տարբերություն պետք է նշել նաև այն, որ հնչյունափոխության այս տեսակը արևելահայերենում ավարտուն դրսևորումների ունի, մինչդեռ արևմտահայերենում երբեմն կողք կողքի հանդիպում են գրաբարից և բարբառներից ավանդված հնչյունափոխական տարբերակներ, ինչպես՝ **երեխայ // երախայ, երագ // արագ, բոկիկ>բոպիկ // բոբիկ, շողզամ // շաղզամ** և այլն:

Բազմաթիվ այլ բառերում առնմանության և տարնմանության դեպքերը արևելահայերենում և արևմտահայերենում համընկնում են, ինչպես՝ **ընդբռնել–ընբռնել–ըմբռնել, ճանապարհ–ճամփա–ճամբայ** (արևել.՝ **ճամփա**), **ճամբորդ** (արևել.՝ **ճամփորդ**), **ուրախութիւն–ուրախութեան–ուրախութեամբ, արեան–արեամբ, ժանաչել–ճանաչել** և այլն:

Ծանոթություն: Արևմտահայերենում իբրև զուգահեռ տարբերակներ նշվող **ամբարիշտ // անպարիշտ, անբասիր // ամբասիր, ամպ // ամբ** ձևերից երկրորդները գործածական չեն և ժամանակակից մատենագրության մեջ չեն վկայվում բնագրային օրինակներով:

2.3.4. ԴՐԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Բառի մեջ, հնչյունաշարքում հնչյունը փոխում է իր տեղը: Երկու գրականներում էլ հնչյունափոխության այս տեսակը առավելապես բնորոշ է խոսակցական լեզվին, բարբառների և բանավոր խոսքին: Բարբառներում և միջին հայերենում առաջացած այս հնչյունափոխության առանձին դրսևորումներ պահպանվեցին արևմտահայերենում: Արևելահայերենը կամ հարազատ մնաց գրաբարյան ձևերին, կամ որդեգրեց նույն բառերի հնչյունափոխական այլ տարբերակներ: Լեզվաբանական գրա-

կանության մեջ նշվող բնորոշ օրինակներից են՝ **արևել.**՝ *գղալ* (<գղալ<տղալ<տորգալ<տարգալ), *զցել*, *սովորել*, *նախշ*, *մարխ*, *եղևնի*, *կմճթել*. **արևմտ.**՝ *դգալ* (<տղալ<տորգալ<տարգալ), *ձգել*, *սորվիլ* (<սով-րիլ<սովորել), *նաշխ*, *մախր*, *եղևիմ*, *ճմկթել*:

Արևմտահայերենում և արևելահայերենում դրափոխությամբ պայմանավորված տարբերություն կա նաև պատճառական բայերի եզակի հրամայականի կազմության մեջ. արևելահայերենում **ու** ձայնավորի դիրքի փոփոխության հետևանքով առաջացել է հնչյունափոխական այլ տարբերակ: Ջարգացման ընթացքը այսպիսին է՝ **բարձրացո-բարձրացրոյ-բարձրացուր-բարձրացրու**: Այլ օրինակներ՝ **վերցուր-վերցրու**, **խօսուր-խոսցրու**, **հարցուր-հարցրու** և այլն:

Ծանոթություն: Ըստ Մանուկ Աբեղյանի՝ պատճառական բայերի հրամայականի կազմության զարգացումը ունեցել է հետևյալ ընթացքը՝ «օրինակ՝ հին **մեծացո՛** հրամայականը դարձել է **մեծացու՛**, ապա ավելացել է **Ր՝ մեծացու՛ր**, ինչպես է արևմտյան բարբառում, իսկ արևելյան բարբառում ետևառաջությամբ՝ **մեծացրո՛ւ»** (**Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 331):

Մի շարք բառերում գաղտնավանկի **ը**-ն, ինչպես նշվել է, արևելահայերենի համեմատությամբ ունի դիրքային տարբերություն, ինչպես (արևմտահայերեն ձևերը տրվում են թավ)՝ կըրկընուել-**կըրկընուիլ**, բըզկըտել-**բըզկըտել**, պատըժուել-**պատժըուիլ** և այլն:

Հնչյունափոխական ընդհանուր տարբերությունները ներկայացնելուց հետո պետք է հատուկ նշել մի կարևոր հանգամանք. **հնչյունափոխական իրողությունների մի մասը արևմտահայերենում վերջնականապես կանոնարկված չէ** և գրավոր խոսքում հաճախ երևան է հանում զուգահեռ գործածություններ՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով: Դրանք հանդիպում են ոչ միայն կազմության ընդհանրություններ ունեցող բառերում, այլև միևնույն բառի տարբեր գործածություններում կամ բառային նույն միավորի նույն կամ տարբեր քերականական ձևերում: Օրինակ՝ «**Գրերու** զանազան հնչիւնները» (Շ. Շահնուր), «Ամեն ապրիլ դուն տեսնես իր շուքին տակ **կանա՛նչ** քեզ» (Դ. Վարուժան),

«...Որոնք դեռ **կանաչ** պատանի, տարիներ առաջ գացեր էին ակամայ տարագրութիւն մը ապրիլ ծովերէն անդին» (Բ. Նուրիկյան), «Քիւերուն տակ՝ ծիծառն ո՛չ ոք ըսաւ հյուսել բոյն, **կանաչներուն** բռնկիլ, փոսուռային մեղմ շողալ» (Վ. Շուշանյան), «Քանդած են իրենց տունն ու գործը ու եկած այստեղ... առանց **անգլիերէն** գիտնալու» (Վ. Մավյան), «Ընդարձակ բառարան **Անգլիերէն–Հայերէն**» (Պէյրուֆ, 1981, Գույուն-ճեան Մ.), «...Յիշեալ օտար լեզուները, յատկապէս **անգլերէնն** ու ֆրանսերէնը, այսօր կը պահեն տարբեր համակարգեր» (Հ. Քյուրքճյան): Նշված զուգածները երբեմն գործածվում են նաև նույն հեղինակի կողմից, ինչպես՝ «Լայն ժպիտ մը վառեց դէմքը, ու **շրթներէն** թռաւ երկար ու ջերմ բացազանչութիւն մը» և «Հոն ցոլացող պատկերին գրաւչութեամբ հպարտ՝ քալեց ժպիտը **շուրթներուն**» (Ա. Արփինե): «Պետութեան մը անունը կը սկսի **գլխագրով**» և «**Գլխագիրները** եւ վերջակէտերը չմոռնաս» (Հ. Քյուրքճյան), «Հագին՝ որ պիտի գալարուէր, իր **գիծին** վրայ տնկուող սողունի մը պէս» և «...մեռած է նոյն խորհրդաւոր ցաւով, անբացատրելի բացառութիւն մը կազմելով հարսներու **գծին** վրայ» (Հ. Օշական), «Տրդատը եւ Գրիգոր Լուսաւորիչը միասին քրիստոնեայ դարձուցին Հայաստանը եւ հիմնեցին հայ քրիստոնեայ առաջին եկեղեցին **Էջմիածինի** մէջ, որը ամենահին քրիստոնեայ եկեղեցին կը համարուի» և «**Էջմիածին** մէջ կը գտնուի Ամենայն Հայոց կաթողիկոսութեան աթոռը» (տե՛ս Դ. Սաքայան):

Արդի գրական արևմտահայերենում նկատվում են անհնչյունափոխ հիմքի կայունացման հստակ միտումներ. նախապատվություն է տրվում ժողովրդական–խոսակցական լեզվին բնորոշ կազմություններին՝ **կուրծքիս, հանգիստիս, վիզեր, ժողովուրդին, քիթին, խումբեր, թուփերուն, մոխիրին, սրինգիս, թիւերու, կռիւին** և այլն: Օրինակ՝ «...Իր հոգին եփ հանող զգացումները կ'ելլէին իրենց միգամած անորոշութենէն, խորունկ **ճիչերու** ազդեցութեան տակ **գիծեր** ու խորք կը յագնէին» (Հ. Օշական), «Դո՛ւն, Հայու լակոտ, դուն ամէնէն շուտը կը փոխուիս անասունի, եթէ օր մը իսկ մնաս առանց **վիշտի**», «...**երկինքէն** ոսկի, արծաթ ու մարգարիտ տեղաց ամբողջ օր մը և գիշերն ողջոյն», «Թէեւ անոնց **վերնագիրերուն** մէջ յստակօրէն չէ յիշուած, թէ քաղաքի...», «Ամբողջական օրինակը ժժ դարակէսի գրչութիւն է, իսկ թերին՝ ժժ **դարասկիզքի**» («Հայկազեան

հայագիտական հանդես»), «**Ծովեզերեայ** լեռներուն գագաթները ծածկուած են կապտորակ մշուշով» (տե՛ս Կ. Առաքելյան), «Իրական անդրադարձները կը տեղեկանանք **հեռագիրներէն**», «**Ճակատագիրի** ի՛նչ հեզմանք» («Ժամանակ):

Ձևակազմութեան մեջ անհնչյունափոխ հիմքի նախընտրութեան ընդհանրացումն ու զարգացումը, որ արևմտահայերենում հավանաբար պայմանավորված են գրավոր խոսքի նկատմամբ բանավորի տիրապետող ազդեցությամբ, միօրինակացման ուղիներից են: Նույն միտումը, սակայն, ինչպես նկատեցինք, բնորոշ չէ արևելահայերենին: Սա արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունափոխական հիմնական տարբերություններից է:

Երկու գրականների մերձեցման հնարավորություն կարող է դիտվել արևմտահայերենում հավասարապես գործածական բառային տարբերակներից այն զուգաձևի ընտրությունը, որը համընկնում է արևելահայերենին, ինչպես՝ **կանանչ>կանաչ, եղելին>եղենի, անգլիերէն>անգլերէն, ամպիոն>ամբիոն, սանտր>սանր, կմախ>կմախք, գունտ>գունդ, Բարիզ>Փարիզ** և այլն: Դրանով որոշակի միօրինակություն կհաստատվի նաև արևմտահայերենում: Արդի արևմտահայերենում այս միտումը արդեն նկատելի է, ինչպես վկայում են, օրինակ, ժամանակակից պարբերական մամուլից քաղված մտուշները. «Իւրաքանչիւրին կեդրոնը... ազուցուած են զմրուխտագոյն **կանաչ** քարեր», «Բուն խաչը կոթառին միացած է զարդանախշ գեղեցիկ **գունդով**...», «Ապա **ամբիոնը** բաց յայտարարուեցաւ ազատ կարծիքի», «Հանդէսի մէջ կը հրատարակուին գիտական մակարդակով, առարկայական, հայերէն, **անգլերէն**, արաբերէն, ֆրանսերէն յօդուածներ, ուսումնասիրութիւններ...», «Ժամանակաւորապէս **Փարիզ** կեցութենէ ետք, Ջարեան... կրկին կը հաստատուի Վենետիկ իր ընտանիքով» («Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուս, 2010 թ., Հատոր L):

Ծանոթություն: Նույն այս տրամաբանությամբ՝ կարելի է խորհել նաև հակառակ ընթացքի մասին: Արևմտահայերենը, ինչպես գիտենք, տառադարձության մեջ հարազատ է մնում բնագրային արտասանությանը: Արևելահայերենը օտար

անձնանուններն ու աշխարհագրական անունները փոխառելիս կարող է հետևել այս սկզբունքին, ինչպես՝ **Ափրիկե, Ափրոդիտե, Քլիոնըն, Փարբըր** և այլն:

Կարծիք կա, թե արևմտահայերենում հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով մի շարք բառաձևեր դրսևորում են իմաստային տարբերություններ, ինչպես՝ **առաջին**>առջևի, **առջի**>առաջին, **գլուխէն**–փոխ. իմաստ, **գլխէն**–ուղիղ իմաստ, **ճակատի, ճակատէն**–փոխ. իմաստ, **ճակտի, ճակտէն**–ուղիղ իմաստ⁶⁷: Իր հողվածներից մեկում արևմտահայ քերականներից Յ. Գազանճյանը առանձնացնում է նաև մի շարք այլ բառեր, որոնք, նրա կարծիքով, գրական հայերենը տարբեր իմաստային առումներով է գործածում, ինչպես՝ **աշկերտ՝ արհեստավորի աշակերտ** (չըրախ), **աշակերտ՝ դպրոցի սան**: Դրանք «էպպես միևնոյն բառերն ըլլալով հանդերձ,— գրում է նա,— իրարմէ տարբեր նշանակութիւններ առած են»⁶⁸: Այս բառաձևերը տարբեր նշանակություններով են ներկայացվում նաև արևմտահայերենի առանձին բառարաններում, ինչպես՝ **աշկերտ**–համբակ, նորուս, դեռավարժ, իսկ **աշակերտ**–դպրոցական, ուսանող⁶⁹:

Գոյական խոսքի մասի հիմքակազմության մեջ գրական արևմտահայերենի համապատասխան նյութի քննությունը այդպիսի եզրակացության առիթ չի տալիս: Իմաստային այդպիսի տարբերակում չի նկատվում նաև գրական արևմտահայերենի նորմավորման շրջանում, ինչպես ցույց են տալիս 20–րդ դարասկզբի հեղինակներից քաղված օրինակները: Այսպես՝ «Սուրբ աճիւնիդ սափորն է այդ ծովն հիմա, Մինչ լայն **ճակատիդ** լայն օրօրոցն եղաւ ան». Ղևոնդ Ալիշանին վերաբերող հայտնի տողում Դանիել Վարուժանը ընդգծված բառը ակնհայտորեն գործածել է ուղղակի իմաստով և, ինչպես տեսնում ենք, անհնչյունափոխ հիմքով: Վարուժանն ունի **ճակատ** բառի նույն՝ ուղիղ իմաստով նաև այսպիսի գործածություններ՝ «Թող **ճակատիդ** վըրայ գըրուի Հարիւր սաղմոս իմաստութեան» և «Կան կը քըշեն վաղուան հոյսով՝ Արեւն առած **ճակտիս** վըրայ»: Սիամանթոյի գրչին պատկանող հետևյալ տողում նույն բառի և՛ հնչյուն-

67 Տե՛ս նաև **Ա. Սարգսյան**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, էջ 72:

68 **Յոհվ. Գազանճեան**, «Լեզուաբանական», «Մասիս», Կ. Պոլիս, 1901, թիւ 13:

69 Տե՛ս **Յ. Գայանեան**, Բառարան–գանձարան հայ լեզուի հոմանիշներու, Գահիրե, 1938:

նափոխված, և՛ անհնչյունափոխ ձևերը գործածված են դարձյալ դեմքի վերի մաս անվանող նշանակությամբ, այսինքն՝ ուղիղ իմաստով. «**ճակատիս...** պսակն անոնց **ճակտին**»: Կամ Միսաք Մեծարենցը **առաջ** հիմքից բաղադրված հնչյունափոխված և անհնչյունափոխ **առաջին, առջի** բառաձևերը գործածում է նույն՝ **առաջին** նշանակությամբ, ինչպես՝ «լուսաւորիին **առաջին**», «**առջի** լուսաւորին» և այլն:

Նույն բառի կամ բառաձևի (խոսքը ոչ բայական կազմությունների մասին է) հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերի իմաստային առանձնահատկությունների մասին առավել համոզիչ է թվում արևմտահայ քերականներից Ջարեհ Մելքոնյանի բացատրությունը **գլուխ** և **տուն** բառերի հոլովման առիթով. «Հոլովումի զոյգ ձեւերը՝ կարգ մը բառերու պարագային՝ տարբեր են իրենց գործածութեամբ: *Այսպէս*. երբ **տուն** բառը կը նշանակէ **բնակարան**, կրնանք հաւասարապէս ըսել **տունի** կամ **տան**, բայց երբ կը նշանակէ **ոտանաւորի տուն**, չենք կրնար **տան** ըսել. պէտք է ըսենք **տունի**: Նոյնպէս կրնանք ըսել **գլուխի** կամ **գլխու**, երբ **գլուխ** բառը կը նշանակէ **մարդկային գլուխը**, բայց երբ **գիրքի մը գլուխն** է՝ չենք կրնար **գլխու** ըսել»: (Փոխաբերական իմաստով գործածուած բառերուն հոլովումն է որ կանոնաւոր է այս պարագային)⁷⁰: Ասվածից հետևում է, որ արևմտահայերենում կանոնավոր պիտի համարել անհնչյունափոխ հիմքով կազմությունները՝ **գլուխ–ի, գլուխ–էն, գլուխ–ով, տուն–ի, տուն–էն, տուն–ով, ճակատ–ի, ճակատ–էն, ճակատ–ով** և այլն:

Պոլսահայ բարբառում նույն բառի հնչյունափոխական տարբերակների մասին խոսելիս իմաստային այդպիսի տարբերություն է նշում Հրաչյա Աճառյանը. «Երկու տիպարի տարբերության լավ օրինակ են **նեղանալ** և **չարանալ**,— գրում է նա,— որոնցից **նեղանալ** «սրդողիլ, բարկանալ» և **նեղանալ** «ավելի նեղ լինել», **չարանալ** «նախանձիլ» և **չարնալ** «չար դառնալ». առաջինը՝ առանց սղման, երկրորդը՝ սղմամբ»⁷¹:

70 Տե՛ս **Ջ. Մելքոնեան**, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրուք, 1970, էջ 85:

71 **Հ. Աճառյան**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 15:

Հրաչյա Աճառյանի այս դիտարկումը համոզիչ է թվում բայական հիմքերի կազմության մեջ, ինչի մասին վկայում են նաև այլ օրինակներ՝ **հաւ-Նիլ**–սիրել, ախորժիլ, **հաւանիլ**–հաճել, հոժարել, համոզվել, ընդունել, հավանություն տալ, **չատանալ**–բավականանալ, գոհանալ, բավարար համարել եղածը, **չատնալ**–բազմանալ, առատանալ, աճել, կուտակվել, զեռալ, **վայելել**–ճաշակել, ըմբռնել, **վայել**–սագել, հարմարվել և այլն⁷²:

Մի դիտարկում ևս, որ վերաբերում է հնչյունափոխական իրողություններում բարբառ–գրական լեզու փոխհարաբերությանը: Այդ փոխհարաբերությունը գրական արևմտահայերենի նորմավորման շրջանում ունեցավ մի քանի ուղղվածություն: Գրական արևմտահայերենին բարբառներից փոխանցված հնչյունափոխական իրողությունները, որոնց մասին խոսվեց, պոլսահայ բարբառում ավելի ընդհանրական բնույթ ունեին, ընդգրկում էին ավելի մեծ թվով համապատասխան բառեր կամ բառածևեր: Դրանց մի մասը չանցավ գրական լեզու և մնաց որպես բարբառայնություն, ինչպես, օրինակ՝ բարբառի և գրական լեզվի ընդհանուր կամ մասնակի հնչյունափոխության օրենքներով կազմված հետևյալ ձևերը. բառամիջում՝ **ա**–ի սղում՝ *սպարանջան>սպրանջան, վարդապետ>վարդպետ, հառաչիլ>հառչիլ, ճանաչել>ճանչել, հաւատալ>հաւտալ, վերանալ>վերնալ, ա>ը՝ պարտական>բարդըզան, արժանանալ>արժըննալ, երկայնանալ>երգըննալ, բառասկզբում՝ ե>է՝ ել>էլ, երդումն>երթում, երկայն>երզան, երկիր–երգիր, ես եմ>էս էմ, բազմավանկ բառերի սկզբում՝ ո>օ՝ ոլորել>օլրրել, ոսկր>օսկօռ, բառամիջի փակ վանկում՝ ե>ը՝ խեղդել>խըխտել, ճեղքել>ջըխկել, սեխմել>սըխմել, **իւ>ու՝** արիւն>արուն, աղբիւր>ախպուր, հարիւր>հարուր, **–ութիւն** ածանցով կազմություններում **իւ>ի՝** մեծութիւն>մեծութին, փեսայութիւն>փեսութին, բառամիջի փակ վանկում՝ **այ>ա՝** երկայն>երզան, հայր>հար, մայր>մար, ծայն>ծան, **ոյ>ու՝** գոյն>գուն, զգոյշ>ուսկուշ, կոյս>կուսիկ, մասնակի հնչյունափոխության այլևայլ դրսևորումներ՝ երբ>յէփ, հիւանդանալ>հըվըտնալ, ուխտաւոր>ըխտաւօր, ընդ որ>ընդօր>ինդօր, լայնութեան>լայնութան, դժգո-*

72 Տե՛ս **Յ. Գայանեան**, նշվ. աշխտ., **Ա. Տեր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան: Երկրորդ հատոր, Պեյրոս, 1992:

հիլ>ջուշկուհալ, սպիտակ>սիպտակ բացի>բաց, վայելել>վայլել, ծաղիկ>ծաղեգ, մուրացկան>մուրասկան և այլն:

Ինչևէ, հնչյունափոխական և ուղղագրական զուգահեռ տարբերակների գոյությունն ու կիրառությունը արևմտահայերենի հնչյունական համակարգի բնորոշ գծերից են, և այստեղ ակնհայտ պահանջ կա միօրինակացման:

Այսպիսով՝ արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական հատկանիշների զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ երկու գրականները լեզվի հնչյունային մակարդակում չունեն համակարգային էական տարբերություններ: Որպես մեկ լեզվի երկու տարբերակներ՝ նշված հատկանիշներով դրանք հիմնականում համընկնում են և ձևավորում են մեկ ընդհանուր ամբողջություն: Տարբերությունները, որոնք առկա են հնչյունական կազմի գրեթե բոլոր ոլորտներում (ծայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների արտասանություն և ուղղագրություն, շեշտադրություն, հնչյունափոխություն և այլն), կրում են մասնակի բնույթ: Թերևս միակ բացառությունը ձայնեղ-խուլ բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունն է: Տարբերությունները պայմանավորված են բարբառների, միջին հայերենի և օտար լեզուների ազդեցություններով, ինչպես նաև արևելահայերենի ու արևմտահայերենի զարգացման ինչ-ինչ յուրահատկություններով, որոնց մասին վերը խոսվեց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
2. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
3. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա հատոր, Երևան, 1972:
4. **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
5. **Աճառյան Հ.**, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941:
6. **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951:
7. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1–6, Երևան, 1952–1971:
8. **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. I–IV, Երևան, 1971–1979:
9. **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
10. **Առաքելեան Կ.**, Արդի հայերենի քերականութիւն, Գիրք 1, 2, 3, Պէրրուք, 1998:
11. **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955:
12. **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979:
13. **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007:
14. «Արդի հայ գրականութիւն», կազմ.՝ **Մուշեղ Իշխան**, հ. Ա, Բ, Գ, Պէրրուք, 1975–1980:
15. **Գազանձեան Յովհ.**, Նոր քերականութիւն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910:
16. **Գազանձեան Յովհ.**, «Լեզուաբանական», «Մասիս», Կ. Պոլիս, 1901, թիւ 13:
17. **Գայանեան Յ.**, Բառարան–գանձարան հայ լեզուի հոմանիշներու, Գահիրէ, 1938:
18. **Խաչատրյան Ա.**, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988:
19. «Հայ գրականութիւն», կազմ.՝ **Յ. Օջական**, Երուսաղէմ, 1966:
20. **Հովսէփյան Լ.**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997:

21. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Ջ.**, Միջին հայերենի բառարան, Երևան, Ա հատոր, 1987:
22. **Ղուկասյան Ա.**, Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչեղան-գային առանձնահատկությունները, Երևան, 1990:
23. **Ճերեճեան Գնէլ արքեպս., Փարամազ Կ. Տօնիկեան**, Հայոց լեզուի նոր բառարան: Առաջին հատոր, Պէյրուք, 1992:
24. **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, հ. I, II, III, 1944:
25. **Մելքոնեան Զ.**, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պէյրուք, 1970:
26. **Չոլաքեան Յ.**, Հայերենի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000:
27. **Չոլաքեան Յ.**, Անդաստան, Ա., Հալէպ, 2009:
28. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Երեւան, հ. 1–2, 1979–1981:
29. **Պետրոսյան Վ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
30. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
31. **Ջահուկյան Գ.**, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Երևան, 1997:
32. **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985:
33. **Սարգսյան Ա.**, Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991:
34. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 2006:
35. **Տէր Խաչատուրեան Ա.**, Հայոց լեզուի նոր բառարան: Երկրորդ հատոր, Պէյրուք, 1992:
36. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերեն–արևելահայերեն ուղղախոսական–բացատրական բառարան, Երևան, 2000:
37. **Սաքապետոյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004:
38. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:
39. **Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա.**, Թուրքերենի դասագիրք (վերամշակված հրատարակություն), Երևան, 2010:
40. **Տասնապետեան Եղ.**, Քերականութիւն, Անթիլիաս, 1990:
41. **Քիրքճեան Յ.**, Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արեւմտահայերէն), Աթէնք, 1989:
42. **Քիրքճեան Յ.**, Հայերենի աղբիւր, Գիրք 2, Երրորդ տպագրութիւն, Աթէնք, 2003:
43. **Քիրքճեան Յ.**, Հայ կեանք եւ գրականութիւն, Ա, Բ, Գ, Աթէնք, 2004–2007:
44. **Sakayan D.**, Modern Western Armenian, Montreal, 2000.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷԶ

Ներածական մաս 3

1. Հնչյուն և տառ: Հնչյունների տեսակները: Ուղղախոսություն և ուղղագրություն 5

1.1. Չայնավորների արտասանությունը և ուղղագրությունը 6

1.2. Երկբարբառակերպների (երկհնչյունների) արտասանությունը և ուղղագրությունը 23

1.3. Բաղաձայնների արտասանությունը և ուղղագրությունը 29

1.4. Փոխառյալ և օտար բառերի գրադարձությունը (տառադարձությունը) և ուղղագրությունը 40

1.5. Հնչյունական–արտասանական համակարգի այլ յուրահատկություններ 45

2. Հնչյունափոխություն 50

2.1. Չայնավորների հնչյունափոխությունը 52

2.2. Երկբարբառակերպների (երկհնչյունների) հնչյունափոխությունը .. 75

2.3. Փոխազդեցական հնչյունափոխություն 83

2.3.1. Հավելում և անկում 84

2.3.2. Ամփոփում 91

2.3.3. Առնմանում և տարնմանում 92

2.3.4. Դրափոխություն 93

Օգտագործված գրականություն 101

Յուրի Սրապիոնի Ավետիսյան

**ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՍԱՅԱՅԵՐԵՆԻ
ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հրատարակչության տնօրեն՝ Է.Ս. Սկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ.Բ. Միքայելյան
Համակարգչային էջադրումը՝ Գ.Ա. Հարությունյանի

ISBN 978–99941–1–926–4

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 6,5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:



«ՉԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Հեռապատճեն՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am